գործընթաց է, բազմաթիվ գիտնականներ իրենց աշխատանքներում ներկայացրել են առանձին ՀԻԴ կարգավորիչով կառավարման համակարգեր [5-6]: Պարզ և արագ նախագծման առավելություն ունենալուց բացի ՀԻԴ կարգավորիչն ունի կառավարման որակի սահմանափակում՝ հաշվի առնելով հստակ նախանշված գործակիցները, որոնք փոփոխման ենթակա չեն աշխատանքի ընթացքում: Հստակ գործակիցների խնդիրները վերացնելու համար կարգավորիչի մեկ այլ՝ հիբրիդ տարբերակ է առաջակվում, որտեղ ոչ հստակ տրամաբանության միջոցով թռիչքի ընացքում հաշվի առնելով հետադարձ կապի սխալանքը նախապես տրված ոչ հստակ օրենքների հիման վրա կատարվում է ՀԻԴ կարգավորիչի պարամետրերի փոփոխում՝ ըստ սենսորային արժեքների: Այդ իսկ պատճառով ինքնակարգավորվող ոչ հստակ-ՀԻԴ կարգավորիչ է ներկայացվել [7]-ում, որտեղ ներկայացված ՀԻԴ կարգավորիչը կարգաբերվել է ոչ հստակ տրամաբանության օրենքնեով:

Հոդվածում ներկայացված են բազմառոտոր անօդաչու թռչող սարքի մաթեմատիկական մոդելը, աշխատանքի սկբունքը, դինամիկ և կինեմատիկ հավասարումները և ստացված արդյունքները: Անօդաչու թռչող սարքի նախագծում ու աշխատանքի մոդելավորումը կատարվել է Matlab ծրագրային ապահովման Simulink միջավայրի միջոցով:

Գիտական նորույթ

Սույն աշխատանքում ներկայացված ԲԱԹՍ-ի իրական պարամետրերին համապատասխան՝ մոդելը ճշգրտորեն համապատասխանում է DJI Mavic 2 բազմառոտոր անօդաչու թռչող սարքի պարամետրերին: Աշխատանքի ընթացքում դուրս են բերվել իրական դրոնին համապատասխան փոխանցման և պատկանելության ֆունկցիաները, որոնք կիրառելի են իրական կյանքում: ՈՒսումնասիրված գրականության մեջ նմանատիպ ԲԱԹՍ-ին համապատասխան հիբրիդային՝ ոչ հստակ-ՀԻԴ կարգավորիչ չի նկատվել, ուստի իրական դրոնի հիման վրա նախագծված հետադարձ կապով հիբրիդային համակարգը նորույթ է:

ԲԱԹՍ-ի Մաթեմատիկական նկարագիր

Բազմառոտոր անօդաչու թռչող սարքն ունի ազատության 6 աստիճան [8], այդ աստիճանների ճիշտ ներկայացման համար պարտադիր պայման է ունենալ ԲԱԹՍ-ի ճշգրիտ մաթեմատիկական մոդելը: Սույն հոդվածում անօդաչուի շարժման հավասարումների մաթեմատիկական մոդելը հիմնված է Նյուտոն-Էյլերի հավասարումների վրա, և այն նկարագրվում է որպես կոշտ մարմին, որից ընտրվում է մարմնին կոշտ ամրակցված համակարգ, որի հաշվարկները կատարվում են մեկ այլ իներցիալ համակարգի համեմատությամբ: Համակարգերը ցուցադրված են նկ 1-ում:



Նկ. 1 Մարմնին կոշտ ամրակցված և իներցիալ համակարգեր

Նկ. 1-ում ցուցադրված մարմնի կոշտ ամրակցված համակարգի ($O_BX_BY_B$) ծանրության կենտրոնը համընկնում է քառապտուտակի ծանրության կենտրոնին, որին համապատասխան իներցիալ համակարգը ներկայացված է՝ ($O_IX_IY_I$) առանցքներով, որի նկատմամբ շարժումը համապատասխանում է երկրագնդի նկատմամբ շարժմանը:

Ինչպես ներկայացված է [9] հոդվածում, այնպես էլ այս աշխատանքում շարժումը ներկայացվում է X-Z-Y առանցքներով, որը ստացվում է Էյլերի պտույտներից և մատրիցից: Համակարգի դինամիկայի հավասարումները ստանալու և կիրառելու համար անհրաժեշտ է ներկայացնել մի համակարգից մյուսին անցումները ($O_B \to O_I, O_I \to O_B$), որի համար կիրառվել են Էյլերի պտույտները՝ համապատասխան պտտման մատրիցներով: Էյլերի անկյունները նկարագրվում են որպես որոշակի առանցքների շուրջ հաջորդական պտույտներ: Իներցիալ համակարգի Z առանցքի շուրջ պտույտը նկարագրվում է ψ անկյունով, որից ստացվում է նոր P_1 անցումային համակարգը: Նոր ստացված P_1 շրջանային համակարգի X_P1 առանցքի շուրջ պտույտը նկարագրվում է φ պտտման անկյունով, որից ստացվում է նոր P_2 անցումային համակարգը: Ստացված նոր՝ P_2 անցումային համակարգի Y_P2 առանցքի շուրջ պտույտը նկարագրվում է θ՝ անկյունով, որն իր հերթին համընկնում է O_B անցումային համակարգին, որը կոշտ ամրակցված է քառապտուտակի մարմնին: Այսպիսով, ψ-φ-θ պտույտները ներկայացվում են z-x-y հաջորդականությամբ: Էյլերի պտույտներից ստացված մատրիցը ներկայացված է բանաձև 1-ում, իսկ Էյլերի պտույտները ցուցադրված են՝ նկ. 2-ում:



Նկ 2. Էյլերի պտույտներ

Էյլերի պտույտների հիման վրա ստացված մատրից՝ $O_B \to O_I$ համակարգերի անցման դեպքում՝

$$R_{B\to I} = \begin{pmatrix} c\theta c\psi - s\phi s\psi s\theta & -c\phi s\psi & c\phi s\theta + c\theta s\phi s\psi \\ c\theta s\psi + c\psi s\phi s\theta & c\phi c\psi & s\psi s\theta - c\psi c\theta s\phi \\ -c\phi s\theta & s\phi & c\phi c\theta \end{pmatrix}, (1)$$

որտեղ՝ $cx = cos(x), sx = sin(x)$:

Ոչ հստակ-ՀԻԴ կարգավորիչ

Ինչպես արդեն նշվեց, պարզագույն ՀԻԴ կարգավորիչն ունի կայունության և համապատասխանության խնդիրներ, այսինքն՝ կախված պայմաններից՝ ՀԻԴ կարգավորիչի համար նախապես ընտրված պարամետրերը փոփոխության ենթակա չեն, ուստի կառավարման համակարգի կայունությունը կարող է խախտվել: Այդ իսկ պատճառով ՀԻԴ կարգավորիչի 3 գործակիցները՝ Kp, Ki, Kd, կարգաբերվում են ըստ թռիչքի ընթացքում հետադարձ կապի սխալանքի: ՀԻԴ կարգավորիչի տրամաբանական բլոկ-սխեման ներկայացված է նկ 3-ում՝



ՆԿ. 3 ՀԻԴ համակարգի տրամաբանական բլոկ-սխեմա

Ինչպես երևում է նկ. 3-ից, ՀԻԴ համակարգի P, I, D տարրերն ունեն Kp, Ki, Kd գործակիցներ, որոնց ավտոմատ հաշվարկը ոչ-հստակ տրամաբանությամբ կարգավորիչի ֆունկցիան է: Ոչ հստակ-ՀԻԴ կարգավորիչի տրամաբանական բլոկ սխեման ներկայացված է նկ 4-ում.



Նկ. 4. Ոչ հստակ-ՀԻԴ կարգավորիչի տրամաբանական բլոկ սխեման

Նկար 4-ում պատկերված տրամաբանական բլոկ սխեման ցույց է տալիս, որ հետադարձ կապով համակարգի աշխատանքի արդյունքում մուտքին եկած սխալանքի արժեքները հաշվի առնելով՝ ոչ հստակ տրամաբանությամբ համակարգը կարգաբերում է ՀԻԴ կարգավորիչի մուտքային գործակիցները: Այս հոդվածում ներկայացվող ոչ հստակ-Հիդ կարգավորիչի Simulink մոդելը ներկայացված է՝ նկ 5-ում:



Նկ 5. Ոչ հստակ-ՀԻԴ կարգավորիչ

Ինչպես երևում է նկ. 5 -ից, կարգավորիչը, ստանալով անհրաժեշտ մուտքը և բացասական հետադարձ կապով ստացված սխալանքի արժեքը, աշխատում է առանձին z, roll, pitch, yaw արժեքենրի համար, այսինքն՝ կախված թռիչքի ընթացքում ստացված արդյունքերից ՀԻԴ համակարգի առանձին պարամետրերը ենթակա են փոփոխման և ճշգրտման: Բարձրության

կառավարման համար ոչ հստակ-ՀԻԴ կարգավորիչը ներսից ներկայացված է նկ6-ում:



Նկ. 6: Բարձրության կառավարման ոչ հստակ-ՀԻԴ կարգավորիչ

Նկ. 6-ում ցուցադրված կարգավորիչը ներառում է ոչ հստակ տրամաբանությամբ կարգավորիչ և հաշվարկային ֆունկցիաներ՝ Kp, Ki, Kd արժեքների համար, որոնց միջոցով 0-1 ոչ հստակ տրամաբանությամբ միջակայքը վերածում է ՀԻԴ կարգավորիչի գործակիցների որոշակի արժեքային տիրույթի: Ոչ հստակ տրամաբանությամբ կարգավորիչը կառավարվում է պատահականության ֆունկցիաներով և ոչ հստակ օրենքներով, որոնց միջոցով կատարվում է պատկանելության ֆունկցիայի ընտրությունը: Պատականելության ֆունկցիան՝ ներկայացված Matlab ծրագրային համակարգի Fuzzy logic toolbox-ի միջոցով, ներկայացված է նկ 7.-ում:



Նկ 7. fuzzy_pid պատկանելության ֆունկցիան

Նկ. 7-ում պատկերված պատկանելության ֆունկցիայի գրաֆիկական տեսքը ցույց է տալիս, որ ոչ հստակ համակարգը, ստանալով e և edot արժեքները հաշվարկում է ելքայի Kp, Ki, Kd ՀԻԴ համակարգի պարամետրերը, ինչպես ներկայացված է նկ. 4-ում: Kpp, kdp, Ki gaussmf-ներ են ներկայացված 0-1 միջակայքում, իսկ մուտքային e և edot ֆունկցիաները ներկայացված են նկ. 8-ում՝



Նկ 8. Մուտքային պատկանելության ֆունկցիաներ

Ներկայացված ոչ հստակ կարգավորիչը կառավարվում է ոչ հստակ օրենքների միջոցով, որոնք ցուցադրված են նկ. 9-ում.



Նկ 9. Ոչ հստակ օրենքեր

Ստացված արդյունքներ

Աշխատանքի կատարման արդյունքում ստացված գրաֆիկները պատկերված են ստորև։ նկ 10-ում ցուցադրված է 1մ բարձրությամբ մուտքային ազդանշանի դեպքում ԲԱԹՍ-ի աշխատանքի արդյունքը։



Նկ. 10. Z փոփոխականի արդյունքները, բարձրության կախումը ժամանակից

Ինչպես երևում է նկ. 10-ից, քառապտուտակի աշխատանքը ստուգվել է 0-10 վայրկյան միջակայքում՝ 1 մ մուտքային, ցանկալի արժեքի համար, թռիչքի կայունացումը հաջողվել է 0,75վ-ում, իսկ գերկարգավորումը բացակայում է, այսպիսով՝ ստացված արդյունքը բավարար է, և համակարգը կայուն է։

Նկ. 11-ում ներկայացված է roll անկյան կախվածությունը ժամանակից պատկերող գրաֆիկը։



Նկ. 11. Roll պտույտի կախումը ժամանակից

Նկ. 11-ում ցուցադրված արդյունքը բավարար է՝ ընդունելու համար, որ ԲԱՍԹ-ի աշխատանքը roll անկյան 30 աստիճան պտույտի դեպքում կայուն է և անխափան։ Հաստատման ժամանակը 0,81վ է։

Ներկայացված արդյունքները ոչ հստակ-ՀԻԴ համակարգի արդյունքներն են, որտեղ ՀԻԴ համակարգի Kp, Ki, Kd գործակիցները իրական ժամանակում կարգաբերվում են ոչ հստակ տրամաբանության կողմից։ Կարգաբերված արժեքները ցուցադրված են նկ 12-ում։



Նկ. 12. Ոչ հստակ տրամաբանության կողմից հաշվարկված Kp, Ki, Kd արժեքները

Եզրակացություն

Ոչ հստակ տրամաբանության կարգավորիչի կիրառմամբ ԲԱԹՍ-ի համար նախագծված կառավարման համակարգը կայուն է և լավարկում է ՀԻԴ կարգավորիչի աշխատանքը՝ վերածելով համակարգը ադապտիվ տեսակի, ինչը թույլ է տալիս խուսափել ՀԻԴ համակարգի գլխավոր խնդրից, այն է՝ փոփոխվող արտաքին պայմանների դեպքում համակարգի կայունության ապահովումը: Հոդվածում ներկայացված արդյունքերն ամբողջովին բավարարում են տրված խնդրի պահանջները:

Գրականություն

1. M. Santos and J. Sarapura, An adaptive dynamic controller for quadrotor to perform trajectory tracking tasks, *Journal of Intell. Robot. Syst.*, vol. 93, pp. 5–16, 2019.
2. S. Nadda and A. Swarup, Improved quadrotor altitude control design using second-order sliding mode, *Journal of Aerosp. Eng.*, vol. 30, 2017.
3. N. Moawad and A. M. Sarhan, Adaptive PID sliding surface- based second order sliding mode controller for perturbed nonlinear systems, in *Proc. the 12th International Conference on Computer Engineering and Systems (ICCES)*, Cairo, Egypt, 2017.
4. I. González, S. Salazar, and R. Lozano , Chattering-free sliding mode altitude control for a quad-rotor aircraft:

Real-time application, *Journal of Intell. Robot. Syst.*, vol. 73, pp. 137–155, 2014.
5. N. P. Nguyen and S. K. Hong, Fault-tolerant control of quadcopter UAVs using robust adaptive sliding mode approach, *Energies Journal*, vol. 12, no. 95, 2019.
6. H. Thanh, S. Hong, Quadcopter robust adaptive second order sliding mode control based on PID sliding surface, *IEEE Access*, vol. 6, pp. 66850–66860, 2018.
7. D. Gautam and C. Ha, Control of a quadrotor using a smart self- tuning fuzzy PID controller, *International Journal of Adv.Robot. System*, vol. 10, 2013
8. A. Hussein, R. Abdalla, Autopilot Design for a Quadcopter, Thesis for: B.ScAdvisor: Prof.Sharief Fadul Babikir, 2017
9. A. SAFARYAN, N. VARDANYAN, A. BASKOVCHYAN, N. NERSISYAN, T. SIMONYAN, Design of UAV control system with fuzzy logic controller and its importance in the economy, ALTERNATIVE quarterly academic journal 2022 #4 (October – December), pp 27-32, 2022:

Նյութը ներկայացվել է 25.04.2023,
գրախոսման է ուղարկվել 25.05.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ֆ.մ.գ.թ. Գ.Հ.Սահակյանը:

ՀՏԴ 37.02 .004.02

Ինֆորմատիկա

Վալյա ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՇՏՀ, ավագ դասախոս,
E-mail: Valia.Vardanyan@mail.ru

Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱրՊՀ , կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի դասախոս
E-mail: nkarinka1209@mail.ru

GEOGEBRA ԾՐԱԳՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԼՈՒԾԵԼԻՍ

Կրթության ժամանակակից շրջանը որոշում է հանրակրթական ուսումնական հաստատություններում մաթեմատիկայի դասավանդման մեթոդների թարմացման և կատարելագործման անհրաժեշտությունը:

Աշխատանքի բովանդակությունը ներկայացվում է GeoGebra ծրագրով կառուցման մի քանի խնդիրներ՝ մանրամասն նկարագրված կառուցման քայլերով, որոնք կարող են մեթոդական հիմք հանդիսանալ նմանատիպ խնդիրների լուծման համար:

Հոդվածում ներկայացված GeoGebra ինտերակտիվ միջավայրում առաջադրանքների լուծման և հետազոտման արդյունքում հանգել ենք հետևյալ եզրահանգումներին .

GeoGebra ծրագիրն ու նրանով պատրաստված մոդելը գրավիչ ու հետաքրքիր է դարձնում դասը, սովորական եղանակով նյութը ներկայացնելու հետ համեմատած հնարավոր է դառնում խուսափել խնդրի լուծման ընթացքի ձգձգվածությունից և խնայել ժամանակը:

Մուտքագրման վահանակում կատարվող ավտոմատ հանրահաշվական հաշվարկների շնորհիվ շատ օրինաչափություններ սովորողների համար դառնում են տեսանելի ու ստուգելի, որը մեծապես օգնում է այդ օրինաչափությունների հեշտ ու կայուն ընկալմանը:

Ուսումնական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների գործիքների ներդրման արդյունավետությունը կայանում է նրանում, որ մի կողմից այն նպաստում է սովորողների տեսական գիտելիքների բազայի խորացմանն ու ընդլայնմանը, իսկ մյուս կողմից՝ որակապես փոխում է ուսուցչի դերը: Ուսուցիչը դառնում է աշակերտի կրթական գործը կազմակերպող, նրան աջակցող և գնահատող գործընկեր:

Բանալի բառեր՝ *կառուցել, պատկեր, կետ, անկյուն, հատված, շրջանագիծ, հեռավորություն, կարկին, քանոն, GeoGebra, կտավ:*

В. Варданян, К.Арутюнян

ПРИМЕНЕНИЕ ПРОГРАММЫ GEOGEBRA ПРИ РЕШЕНИИ ЗАДАЧ ГЕОМЕТРИЧЕСКОГО КОНСТРУИРОВАНИЯ

Современная эпоха образования определяет необходимость обновления и совершенствования методов преподавания математики в государственных образовательных учреждениях.

В содержании работы представлено несколько задач построения с помощью программы GeoGebra, с подробным описанием этапов построения, которые могут быть методологической основой для решения подобных задач.

В результате решения и исследования задач в интерактивной среде GeoGebra, представленных в статье, мы пришли к следующим выводам.

Программа GeoGebra и сделанная с ее помощью модель делают урок привлекательным и интересным, по сравнению с изложением материала в обычной форме появляется возможность избежать задержки в процессе решения задачи и сэкономить время. Благодаря автоматическим алгебраическим вычислениям, выполняемым на панели ввода, многие шаблоны становятся видимыми и поддающимися проверке для учащихся, что значительно помогает легкому и стабильному пониманию этих шаблонов.

Эффективность внедрения средств информационных технологий в образовательный процесс заключается в том, что, с одной стороны, это способствует углублению и расширению теоретической базы знаний студентов, а с другой стороны. качественно меняет роль учителя. Преподаватель становится партнером, который организует, поддерживает и оценивает процесс обучения студента.

Ключевые слова: *построение, изображение, точка, угол, отрезок, круг, расстояние, циркуль, линейка, GeoGebra, полотно.*

V. Vardanyan, K. Harutyunyan

APPLICATION OF GEOGEBRA SOFTWARE IN SOLVING GEODIMENSIONAL CONSTRUCTION PROBLEMS

The modern period of education determines the need to update and improve the methodology of teaching mathematics in state educational institutions.

The content of the work presents several construction tasks using the GeoGebra program, with a detailed description of the stages of construction, which can be a methodological basis for solving such problems.

As a result of solving and researching problems in the interactive GeoGebra environment presented in the article, we came to the following conclusions.

The GeoGebra program and the model made with its help make the lesson attractive and interesting, in comparison with the presentation of the material in the usual form, it becomes possible to avoid delays in the process of solving the problem and save time. Automatic algebraic calculations performed on the input panel make many patterns visible and verifiable for students, greatly aiding in easy and consistent understanding of these patterns.

The effectiveness of the introduction of information technology tools in the educational process lies in the fact that, on the one hand, it contributes to the deepening and expansion of the theoretical knowledge base of students, on the other hand, it qualitatively changes teacher the role:The teacher becomes a partner who organizes, supports and evaluates the student's learning process.

Key words: *: build, image, point, angle, segment, circle, distance, ruler, GeoGebra, canvas.*

Երկրաչափական կառուցման խնդիրներն ամենահին մաթեմատիկական խնդիրներից են: Դարեր շարունակ մաթեմատիկոսները մեծ հետաքրքրություն են ցուցաբերել նման խնդիրների նկատմամբ:

Երկրաչափական կառուցման խնդիրներում՝ որպես կառուցման գործիք, օգտագործում են քանոն (սանտիմետրական բաժանում չունեցող) և կարկին: Որպես հիմնական պատկերներ համարվում են կետը, ուղիղը (ուղղի հատվածը), շրջանագիծը (շրջանագծի աղեղը), իսկ հիմնական կառուցումները, որոնցում օգտագործվում են նշված գործողությունները, ուղիղ գծի և շրջանագծի կառուցումն է:

Քանոնով կարելի է կատարել հետևյալ երկրաչափական կառուցումները.

ա) կառուցել երկու կետեր միացնող հատված,

բ) կառուցել տրված երկու կետերով անցնող ուղիղ գիծ,

գ) կառուցել տրված կետից սկիզբ առնող և տրված մեկ այլ կետով անցնող ճառագայթ:

Կարկինով կարելի է կատարել հետևյալ երկրաչափական կառուցումները.

ա) կառուցել կամայական շառավղով շրջանագիծ,

բ) տեղադրել տրված հատվածը տրված ուղղի վրա՝ նրա վրա տրված կետից,

գ) պատկերել տրված կենտրոնով և տրված հատվածին հավասար շառավղով շրջանագիծ:

Լուծել կառուցման խնդիր, նշանակում է կարկինի ու քանոնի, միայն կարկինի կամ միայն քանոնի օգնությամբ իրականացնել կառուցումների հաջորդականություն, որի ավարտից հետո պահանջվող պատկերն արդեն համարվում է կառուցված և բավարարում է խնդրի մեջ տրված բոլոր պայմանները:

Տրված պայմաններ ասելով հասկանում ենք, որ նրանք կա՛մ նախապես տրված են, կա՛մ ստացվում են նախորդ կառուցումներում, կա՛մ էլ ընտրվում են կամայական: Սակայն, գործնականում հարմար չէ յուրաքանչյուր խնդրի լուծումը բերել այսպես կոչված հիմնական տարրական կառուցումների, քանի որ այն ձգձգվածություն կառաջացնի կատարվող աշխատանքում:

Ներկայացվող GeoGebra-ն դինամիկ մաթեմատիկական ծրագիր է՝ համակարգչային տեխնոլոգիաների օգտագործմամբ՝ կրթության բոլոր մակարդակների համար: Այն հնարավորություն է տալիս աշխատել էլեկտրոնային աղյուսակների հետ, ուսումնասիրել վիճակագրության և հավանականությունների տեսության տարբեր հարցեր: Ծրագիրը ներառում է գործիքներ երկրաչափությունից, հանրահաշվից, թվաբանությունից, ինչպես նաև հնարավորություն ունի աշխատել ֆունկցիաների և նրանց գրաֆիկների երկրաչափական կառուցումների հետ [1]:

Ծրագիրը ներառում է երկրաչափական պատկերներ՝ կետ, ուղիղ (ուղղի հատված), շրջանագիծ (շրջանագծի աղեղ), ինչպես նաև հիմնական տարրական կառուցումներ (տրված հատվածին հավասար հատվածի, տրված անկյանը հավասար անկյան, անկյան կիսորդի, հատվածի միջնակետի կառուցումները):

Այն նաև ներառում է ուղղահայաց և զուգահեռ ուղիղների, կողմերի միջնուղղահայացների, շրջանագծի շոշափողի կառուցումը, կետի, ուղղի և շրջանագծի նկատմամբ համաչափությունը և այլն: Այս ծրագրում կարելի է չափել անկյունը, որոշել հատվածի երկարությունը, բազմանկյունների մակերեսները և այլն:

Առաջին անգամ բացելիս ծրագիրը անգլերեն լեզվով է (նկ. 1), սակայն շատ հեշտ կարող ենք փոխել: Բոլոր հրամանները, հուշումները և գործիքները հայերենով կարող ենք ստանալ Options → language → Armenian ճանապարհով [3]:



Նկ. 1 Լեզուն ընտրելու քայլերը

Առաջին դասին սովորողներին ծանոթացնում ենք GeoGebra ծրագրի գլխավոր պատուհանին, որի վերևի մասում ներկայացվում են մենյուները և «Գործիքադարակը»՝ գործիքներ դասավորված խմբերով: (նկ.2):



Նկ. 2 Գործիքադարակը

Յուրաքանչյուր գործիքի ներքևի աջ անկյան փոքրիկ եռանկյան վրա սեղմելով՝ կարող ենք հայտնվող գործիքների ցանկից ընտրել անհրաժեշտը (նկ.3):



Նկ. 3. Գործիք ընտրելու օրինակ

Էկրանի հիմնական մասը այսպես կոչված «Կտավն» է՝ կոնստրուկցիաների դաշտ գեղարվեստական կտավի անալոգիայով: Կտավի ձախ կողմում գտնվող «Օբյեկտների վահանակը» ծառայում է կառուցված օբյեկտները (կետեր, ուղիղներ, հատվածներ, վեկտորներ, հավասարումներ և այլն) գրանցելու համար: Կտավի վրա կառուցված օբյեկտը կամ նրա նշանակումը կարելի է անտեսանելի դարձնել կամ ցուցադրել [2]:

Հոդվածի նպատակը ծրագրի բոլոր գործիքներն ու հրամանները ներկայացնելը չէ, այլ դրանցից մի քանիսի կիրառումը երկրաչափական կառուցման խնդիրներ լուծելիս:

Կառուցման խնդրի լուծման էությունը որոշակի երկրաչափական պատկեր կառուցելն է, երբ տրված են նրա տարրերի միջև եղած կապերը:

Խնդիր 1. Տրված է շրջանագիծ, տրամագիծը պարունակող AB ուղիղ և նրանից դուրս գտնվող C կետ: Օգտագործելով միայն քանոն՝ C կետից AB ուղղին տանել ուղղահայաց:

Այս խնդիրը GeoGebra ծրագրով կարելի է լուծել 2 եղանակով՝

1.Որպես տարրական կառուցում,

2.Որպես սովորական՝ «ձեռքով» կառուցում:

Առաջին դեպքում որպես տարրական կառուցում. կտավի վրա տեղադրում ենք խնդրում տրված պայմանները, ընտրելով «Շրջանագիծ», «Երկու կետով անցնող ուղիղ», և «Նոր կետ», գործիքները, այնուհետև «Ուղղահայաց ուղիղ» գործիքով, կառուցում տրված կետից տրված ուղղին ուղղահայաց ուղիղ:



Նկ. 4. Կետից տրամագիծն ընդգրկող ուղղին տարված ուղղահայաց

Երկրորդ դեպքում կառուցման քայլերի ընտրությունը կախված է C կետի դիրքից: Ստորև ներկայացված է այն դեպքը, երբ C կետը գտնվում է շրջանագծից դուրս: Կառուցման աշխատանքն իրականացվում է հետևյալ քայլերով.

Աղյուսակ 1

Վահանակի պատկերը	Գործիքի նկարագրությունը	Գծագիրը
	Գործիքների ցանկի «Շրջանագիծ ըստ կենտրոնի և կետի» գործիքի օգնությամբ կառուցում ենք տրված A կենտրոնով և B կետով անցնող շրջանագիծ:	
	«Երկու կետով անցնող ուղիղ» գործիքի օգնությամբ կառուցենք AB շառավիղն ընդգրկող ուղիղ, որը կընդգրկի նաև DB տրամագիծը:	

	«Նոր կետ» գործիքի օգնությամբ DB տրամագիծը պարունակող ուղղից դուրս տեղադրենք C կետը:	
	«Երկու կետով անցնող ուղիղ» գործիքի օգնությամբ կառուցենք CD և CB ուղիղները՝ C կետը միացնելով տրամագծի ծայրակետերին:	
	Այնուհետև այդ ուղիղների և շրջանագծի հետ հատման կետերը միացնենք տրամագծի B և D ծայրակետերին: Կստանաք DBC եռանկյան երկու բարձրություն (տրամագծի վրա հենված ներգծյալ անկյունը 90° է), որոնք հատվում են G կետում:	

	Եվ քանի որ եռանկյան բարձրությունները հատվում են մի կետում, ուստի CG ուղիղը կլինի երրորդ բարձրությունը, այսինքն՝ C-ից BD տրամագծին տարված որոնելի ուղղահայացը:	

Համոզվելու համար, որ գծագիրը ճիշտ է կատարված, ստուգում ենք՝ օգտագործելով օբյեկտների դիրքի ձեռքով կամ ավտոմատ փոփոխությունները:

Խնդիր 2. Տրված ∠ABC անկյանը ներգծել ամենափոքր պարագիծ ունեցող եռանկյուն, որի մի գագաթը լինի անկյան ներսում տրված D կետը, իսկ մյուս երկու գագաթները գտնվեն անկյան AB և BC կողմերի վրա :

Քանի որ կառուցվող եռանկյունը պետք է ունենա ամենափոքր պարագիծը, ուստի տրված D կետի ամենակարճ հեռավորությունները կողմերից կլինեն այդ կետից անկյան կողմերին տարված ուղղահայացների երկարությունները: Կառուցելով D կետի համաչափ D_1 և D_2 կետերը անկյան կողմերի նկատմամբ, կստանանք, որ անկյան կողմերը ուղղահայաց են DD_1 և DD_2 հատվածներին և անցնում են նրանց միջնակետերով: Համոզվելու համար, որ գծագիրը ճիշտ է, D կետը տեղափոխելիս պետք է անկյան կողմերիի նկատմամբ՝ համաչափությունները պահպանվեն:

Կառուցման ալգորիթմը կունենա հետևյալ տեսքը.

Աղյուսակ 2

Վահանա կիպատկերը	Գործիքի նկարագրությունը	Գծագիրը
	Գործիքների վահանակի «Անկյուն» գործիքի օգնությամբ կառուցում ենք տրված ∠ABC անկյունը	
	«Նոր կետ» գործիքի օգնությամբ անկյան ներսում տեղադրում ենք կամայական D կետ:	

	«Համաչափը ուղղի նկատմամբ» գործիքի օգնությամբ կառուցենք D կետին համաչափ D_1 կետը AB կողմի նկատմամբ, հետո նույն ձևով D կետի համաչափ D_2 կետը՝ AC կողմի նկատմամբ	
	Գործիքների վահանակի «Երկու կետով անցնող ուղիղ» գործիքի օգնությամբ կառուցենք D_1D_2 ուղիղը, որը ABC անկյան կողմերը կհատի E և F կետերում	
	Գործիքների վահանակի «Հատված ըստ երկու կետի» գործիքի օգնությամբ կառուցենք DE և DF հատվածները:	

ΔEFD -ն կլինի մեր որոնելի եռանկյունը, քանի որ ըստ կառուցման DEF եռանկյան պարագիծը կլինի ամենափոքրը՝ $DE + DF + EF = D_1D_2$:

Խնդիր 2- Կոորդինատային առանցքի վրա կառուցել $E(\sqrt{5})$ կետը:

Խնդիրը լուծենք երկու հատվածների երկրաչափական միջինի կառուցման մեթոդով:

Կառուցման աշխատանքն իրականացվում է հետևյալ փուլերով.

Աղյուսակ 3

Վահանակի Պատկերը	Գործիքի նկարագրությունը	Գծագիրը
	Կոորդինատային առանցքի վրա միշտ նշված է լինում սկզբնակետը և միավոր հատվածը: Թող ուղղի վրա նշված է A(0) սկզբնակետը և AB-ն միավոր հատվածը. |AB| = 1	
	AB հատվածի A սկզբնակետում կառուցում ենք ուղղահայաց: Ուղղահայացի վրա սկզբնակետի տարբեր կողմերում տեղադրենք |AC| =1, |AD| = 5 հատ-վածները: |DC| = |AD| + |AC|	
	Գործիքների վահանակի <<կիսաշրջանագիծ երկու կետով>> գործիքի օգնությամբ կառուցում ենք CD տրամագծով կիսաշրջանագիծ, որը դրական կիսառանցքի հետ կհատվի E կետում:	

Քանի որ շրջանագծի ցանկացած կետից տրամագծին տարված ուղղահայացը տրամագծի վրա առաջացած հատվածների համեմատական միջինն է, ուրեմն.

$$EA^2 = AC \cdot AD$$

$$EA = \sqrt{AC \cdot AD} = \sqrt{1 \cdot 5} = \sqrt{5}:$$

$$EA = \sqrt{5}$$

AE հատվածի երկարությունը կլինի 1 և 5 երկարությամբ հատվածների երկրաչափական միջինը: Ուրեմն E($\sqrt{5}$) կետը կլինի որոնելին:

GeoGeebra-ի կիրառման առավելություններն արտահայտվում են նրանով, որ օգտագործելով GeoGebra ծրագիրն ու նրանով պատրաստված մոդելները՝ դասը դառնում է ավելի գրավիչ ու հետաքրքիր, խնայվում է ահագին ժամանակ[3]:

Գրականություն

1. Ларин С.В., Компютерная анимация в среде GeoGebra на уроках математики, Красноярск. Информатика в школе, 2021.N2(22-28с.).
2. Ларин С. В., Методика обучения математике: компьютерная анимация в среде GeoGebra: Юрайт, 2018. - 233 с.
3. Աղեկյան Գ.Վ., «GeoGebra–Դինամիկ մաթեմատիկա բոլորի համար», ձեռնարկ, Անտարես, 2012թ.:
4. Валентиновна Ф. Н.. Динамическая математика с GEOGEBRA, Донецк, 2016-41с.
5. Любинская И. Е., Тихомирова С. В., Преподование геометрии в начальной школе с использованием приложения GEOGEBRA, Владимир,2017-196с.

Նյութը ներկայացվել է 13.04.2023,
գրախոսման է ուղարկվել 25.05.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ֆ.մ.գ.թ. Գ.Հ.Սահակյանը:

УДК 004(519:628)

Информатика

Сережа САНДРЯН
доцент кафедры прикладной математики и информатики АрГУ, к. ф.м.н.
E-mail: sandrun@yandex.ru,сот:097745598

ПРИБЛИЖЕННОЕ ВЫЧИСЛЕНИЕ ОПРЕДЕЛЕННОГО ИНТЕГРАЛА МЕТОДОМ ИМИТАЦИОННОГО МОДЕЛИРОВАНИЯ

Ս. Սանդրյան

ՈՐՈՇԱԿԻ ԻՆՏԵԳՐԱԼԻ ՄՈՏԱՎՈՐ ՀԱՇՎՈՒՄԸ ԻՄԻՏԱՑԻՈՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՈՎ

Մաթեմատիկայի կիրառություններում օգտագործողները հաճախ բախվում են անորոշ ինտեգրալների հաշվարկման, այսինքն՝ տված ֆունկցիայի նախնականը գտնելու խնդրի հետ։

Ինտեգրման գործողությունը ըստ էությամբ շատ ավելի բարդ է, քան դիֆերենցման գործողությունը։ Միշտ չէ, որ ինտեգրման ընտրված ճանապարհը ճիշտ է և այն բերում է խնդրի լուծմանը։

Գործնականում անորոշ ինտեգրալների հաշվարկման ժամանակ օգտագործվում են տարբեր տեղեկատու գրքեր, մասնավորապես անորոշ ինտեգրալների աղյուսակներ։ Ինտեգրման վերլուծական մեթոդները շատ դեպքերում հնարավորություն են տալիս գտնել ենթաինտեգրալային ֆունկցիայի նախնականը։

Մաթեմատիկական վերլուծության դասընթացքից հայտնի է, որ անընդհատ ֆունկցիայի համար միշտ գոյություն ունի նախնականը։ Այն դեպքում, երբ որոշ տարրական անընդհատ ֆունկցիայի $f(x)$ նախնականը նույնպես տարրական ֆունկցիա է, ապա ասում են, որ $\int f(x)\,dx$ ինտեգրալը «բերվող է», այսինքն. ինտեգրալը հնարավոր է հաշվել։ Եթե ինտեգրալն հնարավոր չէ

արտահայտել տարրական ֆունկցիաներով, ապա ասում են, որ այդ ինտեգրալը «չբերվող է», այսինքն. այն հնարավոր չէ հաշվել:

Մաթեմատիկական վերլուծության դասընթացից [1] հայտնի է նաև, որ որոշակի ինտեգրալի հաշվարկումը համաձայն Նյուտոն-Լեյբնիցի բանաձևի հանգեցնվում է $f(x)$ ֆունկցիայի նախնականը F(x) գտնելու խնդրին ($F(x)' = f(x)$).

$$\int_a^b f(x)dx = F(x)\Big|_a^b = F(b) - F(a);$$

Սակայն, անընդհատ ֆունկցիայի նախնականը գտնելու խնդիրը երբեմն շատ դժվար է, և որոշ անընդհատ ֆունկցիաների համար նախնականը չի կարող արտահայտվել տարրական ֆունկցիաներով: Կարելի է նշել նման մի քանի ֆունկցիաներ,ընդորում հենց այդ ֆունկցիաների որոշակի ինտեգրալներն են, որոնք հաճախ օգտագործվում են գիտության և պրակտիկայի տարբեր ոլորտներում: Նման դեպքերում կիրառվում են որոշակի ինտեգրալի հաշվարկման թվային մոտավոր մեթոդներ:

Աշխատանքում դիտարկվում է մեկ տիպային որոշակի ինտեգրալի մոտավոր հաշվարկման մոդելավորման մեթոդը (Մոնտե Կառլոյի մեթոդ) [2] : Այս մեթոդը կիրառվում է հաշվողական մաթեմատիկայի տարբեր ոլորտներում:

Աշխատանքում առաջարկվող տիպային ինտեգրալի օգնությամբ, համապատասխան կերպով ընտրելով $f(x)$ ֆունկցիան, կարելի է ստանալ տարբեր «չբերվող» ինտեգրալներ:

Այս տիպային ինտեգրալը կարելի է կիրառել կիրառական մաթեմատիկայի տարբեր ոլորտներում, մասնավորապես՝ զանգվածային սպասարկման և գործողությունների հետազոտության տեսություններում: Հենց դրանով է պայմանավորված աշխատանքի արդիականությունը:

Բանալի բառեր՝ որոշակի ինտեգրալ, նախնական ֆունկցիա, անընդհատ ֆունկցիա, մոդելավորում, մոտավոր

հաշվում,պատահական մեծություն,մաթեմատիկական սպասում, դիսպերսիա, միջին թվաբանական, մոտավոր հաշվարկ, հավանականություն:

В приложениях математики пользователи часто сталкиваются с вычислением неопределенных интегралов, то есть с задачей нахождения первообразной.

Операция интегрирования функций значительно сложнее операции дифференцирования функций. Не всегда выбранный путь интегрирования является правильным, не сложным.

На практике при вычислении неопределенных интегралов используют различные справочники в частности таблицы неопределенных интегралов. Аналитические методы интегрирования позволяют во многих случаях найти первообразную функцию для подынтегральной функции.

Из курса математического анализа известно, что для непрерывной функции существует

первообразная. В том случае, когда первообразная некоторой элементарной функции $f(x)$ является также элементарной функцией, то говорят, что интеграл $\int f(x)\,dx$ «берется» т.е. интеграл вычисляется. Если же интеграл не выражается через элементарные функции, то говорят, что интеграл «не берется» т.е. его найти нельзя.

Из курса математического анализа[1] также известно, что вычисление определенного интеграла согласно формуле Ньютона-Лейбница сводиться к задаче нахождения первообразной $F(x)$ функции $f(x)$ ($F(x)' = f(x)$),

$$\int_a^b f(x)dx = F(x)\Big|_a^b = F(b) - F(a);$$

однако задача нахождения первообразной от непрерывных функций иногда весьма сложна, а для некоторых непрерывных функций ее первообразная не выражается через элементарные функции. Можно указать несколько таких функций, притом именно эти определенные интегралы часто применяются в разных областях науки и практики. В таких случаях разрабатываются приближенные методы вычисления определенного интеграла.

В работе рассматривается метод имитационного моделирования (метод Монте-Карло) [2] для приближенного вычисления определенного интеграла. Этот метод применяется в самых разных областях вычислительной математики.

С помощью предлагаемого в роботе типа интеграла

выбирая функцию $f(x)$ подходящим образом можно получить различные «не берущиеся» интегралы. Данный тип интеграла имеет большое приложение в разных областях прикладной математики, в частности теории массового обслуживания и исследования операции. В этом и заключается актуальность работы.

Ключевые слова: *определенный интеграл, первообразная функция, непрерывная функция, моделирование, приближенное вычисление, случайная величина, математическое ожидание, дисперсия, среднее арифметическое, приближенный расчет, вероятность.*

S.Sandryan

APPROXIMATE CALCULATION OF A DEFINITE INTEGRAL BY SIMULATION MODELING

In applications of mathematics, users are often faced with the calculation of indefinite integrals, that is, with the problem of finding the antiderivative.

The operation of integrating functions is much more complicated than the operation of differentiating functions. Not always the chosen way of integration is correct, not difficult.

In practice, when calculating indefinite integrals, various reference books are used, in particular tables of indefinite integrals. Analytic methods of integration make it possible in many cases to find the antiderivative function for the integrand.

From the course of mathematical analysis it is known that for a continuous function there is

primitive. In the case when the antiderivative of some elementary function $f(x)$ is also an elementary function, then we say that the integral $\int f(x)\,dx$ is "taken", i.e. the integral is calculated. If the integral is not expressed in terms of elementary functions, then they say that the integral is "not taken" i.e. it cannot be found.

It is also known from the course of mathematical analysis [1] that the calculation of a definite integral according to the Newton-Leibniz formula is reduced to the problem of finding the antiderivative $F(x)$ of the function f(x) $f(x)$ ($F(x)' = f(x)$),

$$\int_a^b f(x)dx = F(x)\Big|_a^b$$

however, the problem of finding the antiderivative of continuous functions is sometimes very difficult, and for some continuous functions its antiderivative cannot be expressed in terms of elementary functions. Several such functions can be indicated, and

it is precisely these definite integrals that are often used in various fields of science and practice. In such cases, approximate methods for calculating the definite integral are developed.

The paper considers the simulation method (Monte Carlo method) [2] for the approximate calculation of a certain integral. This method is used in various areas of computational mathematics.

With the help of the type of integral proposed in the robot, by choosing the function f(x) in an appropriate way, one can obtain various "not taken" integrals. This type of integral has a great application in various areas of applied mathematics, in particular, queuing theory and operation research. This is the relevance of the work.

Key words: *definite integral, antiderivative function, continuous function, simulation, approximate calculation, random variable, mathematical expectation, variance, arithmetic mean, approximate calculation, probability.*

Из курса математического анализа[1] известно, что вычисление определенного интеграла согласно формуле Ньютона-Лейбница сводиться к задаче нахождения первообразной $F(x)$ функции $f(x)$ ($F(x)' = f(x)$),

$$\int_a^b f(x)dx = F(x)\Big|_a^b = F(b) - F(a);$$

однако задача нахождения первообразной от непрерывных функций иногда весьма сложна, а для некоторых непрерывных функций ее первообразная не выражается через элементарные функции. Можно указать несколько таких функций, притом именно эти определенные интегралы часто применяются в разных областях науки и практики. В таких случаях разрабатываются приближенные методы вычисления определенного интеграла.

В работе рассматривается метод имитационного моделирования (метод Монте-Карло) для приближенного вычисления определенного интеграла.

Общее описание метода Монте-Карло [3].Рассмотрим произвольную величину α. Чтобы определить величину α моделируется такую случайную величину ξ, у которой существует математическое ожидание $M[\xi]$ и

$$M[\xi] = \alpha. \qquad (1)$$

Для оценки неизвестной величины α, согласно методу Монте-Карло проводиться N реализаций $\xi_1, \xi_2, \dots, \xi_N$ случайной величины ξ и вычисляется их среднее арифметическое

$$\bar{\xi}_N = \frac{1}{N}\sum_{i=1}^{N} \xi_i .$$

В теории вероятности установлена закономерность:Последовательность $\xi_1, \xi_2, \dots, \xi_N$ одинаково распределенных случайных величин у которых существуют математические ожидания конечная дисперсия, то среднее арифметическое этих случайных величин сходится по вероятности к математическому ожиданию [2]:

$$\text{при } N \to \infty,\ \bar{\xi}_N \xrightarrow{P} M[\xi_i].$$

Согласно вышеуказанному закону больших чисел, как оценка для неизвестной величины α при больших N выбираются среднее арифметическое реализованных значений случайных величин ξ_i

$$a \approx \bar{\xi}_N \qquad (2)$$

Из курса теории вероятностей известно так же, что когда случайная величина ξ имеет конечную дисперсию $D[\xi]$, то вероятность погрешности в (2) с доверительной вероятностью β приблизительно равна [1]

$$\left|\bar{\xi}_N - a\right| < x_\beta \sqrt{D[\xi]/N} \qquad (3)$$

Коэффициент доверия β в (3) устанавливает исследователь и по специальной таблице находят x_β.Часто используют значения коэффициента доверия $\beta = 0.997$, которому соответствует $x_\beta = 3$. Как правило при применении метода Монте-Карло для определения окончательной оценки погрешности в (3), значение дисперсии $D[\xi]$ неизвестно.

Разработка хорошей теоретической оценки для $D[\xi]$ это отдельная, самостоятельная задача. В работе как оценка для дисперсии случайной величины ξ применяется формула [2]

$$D[\xi] \approx \frac{1}{N-1}\sum_{i=1}^{N} \xi_i^2 - \frac{1}{N(N-1)}\left(\sum_{i=1}^{N} \xi_i\right)^2 \qquad (4)$$

Постановка задачи. Вычислить тип интеграла

$$I_{[a,b]} = \int_a^b f(x)e^{-\lambda x}dx$$

где $f(x)$ заданная непрерывная функция и $\lambda > 0$.

Для приближенного вычисления определенного интеграла методом Монет-Карло будем моделировать специальную случайную величину ξ с плотностью вероятностей

$$P_\xi(x) = \begin{cases} c\,e^{-\lambda x}, x \in [a,b] \\ 0, \quad x \overline{\in} [a,b] \end{cases}$$

где $c = (\frac{\lambda}{e^{-\lambda a} - e^{-\lambda b}})$

Тогда

$$M[f(\xi)] = cI_{[a,b]} \qquad (5)$$

Теперь разыгрывается значение сложной случайной величины $\eta_i = f(\xi_i)$, где ξ_i является случайной величиной с плотностью $P_\xi(x)$.

Далее согласно методу Монте-Карло построим оценку для данного интеграла

$$\bar{\eta}_N \approx \frac{1}{N}\sum_{i=1}^{N}\eta_i \text{ и } I_{a,b} = \frac{1}{c}\bar{\eta}_N$$

Количество реализаций случайной величины η_i зависит от заданной точности приближенного вычисления определенного интеграла, который в работе устанавливается в процессе моделирования на основе формулы (4).

Теперь составим алгоритм для приближенного вычисления определенного интеграла с заданной точностью(ε).

Алгоритм вычисления интеграла

Шаг 1. Вводить функцию $f(x)$, параметр λ, точность – ε и интервалы интегрирования a и b.

Шаг 2.Моделировать случайную величину ξ_i по формуле:

$$\xi_i = a - \frac{1}{\lambda}ln(\gamma)$$

здесь γ равномерная распределенная случайная величина на интервале $[0,\beta]$ (где $\beta = 1 - \lambda e^{-\lambda a}$).

Шаг 3. Вычислить среднее арифметическое

$$\bar{\eta}_N \approx \frac{1}{N}\sum_{i=1}^{N} f(\xi_i)$$

Шаг 4. Проверить точность приближения ξ по формуле (3). Если не выполняется, то вернуться к шагу 2.

Шаг 5. Вывести значение интеграла по формуле:

$$I_{[a,b]} = \frac{1}{c}\bar{\eta}_N$$

Литература

1 Пискунов Н.С., Дифференциальное и интегральное исчисления: Учеб. для втузов. В 2-х т. 1, М.: Интеграл-Пресс, 2001.

2 Гнеденко Б.В., Курс теории вероятности, М.: Наука, 1975.

3 Соболь И.М., Численные методы Монте-Карло. Издательство «Наука», главная редакция физико-математической литературы, М.: 1973.

Նյութը ներկայացվել է 13.04.2023,
գրախոսման է ուղարկվել 25.05.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023։
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ֆ.մ.գ.թ. Գ.Հ.Սահակյանը։

ՀՏԴ 53

Ֆիզիկա

Ռուզաննա ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԱրՊՀ մաթեմատիկայի և ֆիզիկայի ամբիոնի ասիստենտ
E-mail: ruzanna.gevorgyan.2021.@mail.ru

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՖԻԶԻԿԱՅԻՑ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐՆ ԱՌԱՎԵԼ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

Հոդվածում դիտարկվում է ֆիզիկայից լաբորատոր աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու և ուսանողների հետազոտական ունակությունները զարգացնելու նպատակով այդ աշխատանքների կատարման պլանները վերանայելու, ինչպես նաև լաբորատոր աշխատանքների կատարման գործընթացում ժամանակակից համակարգչային ծրագրերից օգտվելու անհրաժեշտությունը: Աշխատանքների վերանայման արդյունքում հնարավոր է որոշակի ձևափոխությունների միջոցով ստանալ հետաքրքիր մաթեմատիկական առնչություններ տվյալ լաբորատոր աշխատանքում դիտարկվող երևույթը նկարագրող ֆիզիկական մեծությունների միջև, որոնք գրաֆիկորեն կարելի է պատկերել համակարգչային այնպիսի ծրագրերի միջոցով, ինչպիսիք են Microsoft Excel-ը և Mathcad-ը: Որպես օրինակ ներկայացված է «Բոյլ-Մարիոտի օրենքի փորձնական ստուգումը» լաբորատոր աշխատանքը:

Բանալի բառեր՝ *ֆիզիկա, լաբորատոր աշխատանք, հետազոտական ունակություն, գազային օրենք, իզոթերմ պրոցես, հաստատուն զանգված, ճնշաչափ:*

Р. Геворгян

ИСПОЛЬЗОВАНИЕ СОВРЕМЕННЫХ ТЕХНОЛОГИЙ И СООТВЕТСТВУЮЩИХ КОМПЬЮТЕРНЫХ ПРОГРАММ ДЛЯ БОЛЕЕ

ЭФФЕКТИВНОЙ ОРГАНИЗАЦИИ ЛАБОРАТОРНЫХ ЗАНЯТИЙ ПО ФИЗИКЕ

В статье рассматривается необходимость использования современных компьютерных программ в процессе выполнения лабораторных работ, а также необходимость пересмотра планов выполнения этих работ с целью развития исследовательских способностей студентов и более эффективной организации лабораторных работ по физике. В результате обзора работ можно получить интересные математические зависимости между физическими величинами, описывающими явление, наблюдаемыми в данной лабораторной работе, путем определенных модификаций, которые могут быть графически отображены с помощью таких компьютерных программ, как Microsoft Excel и Mathcad. В качестве примера представлена лабораторная работа „Экспериментальная проверка закона Бойля-Марриотта".

Ключевые слова: *физика, лабораторная работа, исследовательская способность, газовый закон, изотермический процесс, постоянная масса, манометр.*

R. Gevorgyan

THE USE OF MODERN TECHNOLOGIES AND APPROPRIATE COMPUTER PROGRAMS IN ORDER TO ORGANIZE LABORATORY CLASSES IN PHYSICS MORE EFFICIENTLY

The article considers the need to organize laboratory work in physics more effectively and to review the plans for the implementation of these works in order to develop the research abilities of students, as well as the need to use modern computer programs in the process of performing laboratory work. As a result of the review of works, interesting mathematical relationships can be obtained between physical quantities describing the phenomenon observed in this laboratory work, through certain modifications, which can be graphically depicted using computer programs such as Microsoft Excel and Mathcad. Sometimes it is possible to replace equipment designed for laboratory work with a more modern and compact version. As an example, the laboratory work "Experimental verification of the Boyle-Marriot law" is presented. For this work, a modified

mathematical relationship is presented, which creates a connection between some parameters describing the isothermal process, as well as graphs built with the help of the above-mentioned computer programs based on the corresponding theoretical and experimental calculations.
Key words: *physics, laboratory work, research ability, gas law, isothermal process, constant mass, pressure gauge.*

Լաբորատոր պարապմունքները ֆիզիկայի համալսարանական դասընթացի պարտադիր մաս են կազմում: Ուսանողները լաբորատոր աշխատանքներ կատարում են ֆիզիկան ուսումնասիրելու գրեթե առաջին ժամից սկսած, որին զուգահեռ ներկայացվում են նաև ծրագրին համապատասխան ցուցադրական փորձեր: Ֆիզիկայի ուսումնասիրման դասընթացում լաբորատոր աշխատանքներին տրված այդպիսի առաջնահերթությունը լիարժեքորեն արդարացված եմ համարում: Ֆիզիկան փորձարարական գիտություն է, և, վերջին հաշվով, բոլոր ֆիզիկական օրենքներն ու օրինաչափությունները գործնական հիմքեր ունեն և համապատասխան փորձերի արդյունքների ընդհանրացում են հանդիսանում:

Ընդհանուր առմամբ, ցանկացած ուսուցման նպատակն է արժևորել ուսուցանվող նյութն այնպես, որ սովորողը կարողանա այդ ուսման ընթացքում ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում: Հետևաբար, ուսուցման գործընթացի կարևորագույն տարրերից է այն սարքերի ու չափման մեթոդների օգտագործումը, որոնց ուսանողներն արդեն ծանոթացել են տեսականորեն: Իսկ դա միանշանակ հնարավոր է դառնում ֆիզիկական փորձերի կատարման միջոցով: Ֆիզիկական փորձի կիրառությունն օգնում է ուսանողների մոտ ֆիզիկայի նկատմամբ սեր ու հետաքրքրություն առաջացնել և պահպանել այն ուսման ամբողջ պրոցեսի ընթացքում, ակտիվացնում է նրանց ստեղծագործ մտածողությունը, նպաստում է ֆիզիկայից ավելի խոր և կայուն գիտելիքների ձեռքբերմանը, զարգացնում է փորձի արդյունքների վերլուծության հիման վրա ինքնուրույն հետևություններ անելու կարողությունը, զարգացնում է նրանց դիտողունակությունը, պատկերավոր մտածողությունը, դիտումների հիման վրա ընդհանրացումներ կատարելու ունակությունը: Ֆիզիկական փորձը կենդանացնում է ուսումնասիրվող նյութը:

Համալսարանական լաբորատորիայի անհրաժեշտ սարքավորումներով համալրված լինելն անհրաժեշտ նախապայման է լաբորատոր աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար: Միևնույն ժամանակ, միայն սարքերի առկայությունը բավարար չէ լաբորատոր աշխատանքներն ավելի հետաքրքիր կազմակերպելու և այն հետազոտական աշխատանքի վերածելու համար: Երբեմն էլ գիտական առաջընթացի

դարաշրջանում կարիք է լինում առկա սարքավորումների շարքը համալրել նորերով կամ պարզապես դրանց հին տարբերակները փոխարինել նոր այլընտրանքային (թեկուզ ինքնաշեն) տարբերակներով: Դրան զուգահեռ կարիք է առաջանում նաև պարբերաբար վերանայել ու թարմացնել լաբորատոր աշխատանքների կատարման պլանները, որոնք կազմվում են որոշակի չափորոշիչների համապատասխան: Յուրաքանչյուր այդպիսի պլանում ներկայացվում է տվյալ աշխատանքին վերաբերող որոշակի տեսական նյութ, և տրվում են ցուցումներ աշխատանքի կատարման վերաբերյալ: Լաբորատոր աշխատանքների պլանները պարբերաբար վերանայելը նաև «ժամանակի հետ քայլելու» նպատակ է հետապնդում: Այն է. փորձել լաբորատոր աշխատանքները վերածել հետազոտական գործունեության՝ օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաները և օգտվելով համակարգչային համապատասխան ծրագրերից: Ստորև հենց այդպիսի փոփոխություն կատարելու փորձի մի օրինակ կքննարկվի:

Ֆիզիկայի ընդհանուր դասընթացի «Մոլեկուլային ֆիզիկա և ջերմադինամիկա» բաժնի ուսումնասիրման ընթացքում նախատեսված լաբորատոր աշխատանքներից է «Բոյլ-Մարիոտի օրենքի փորձնական հաստատումը»: Այս աշխատանքի կատարման համար նախատեսված պլանը, որը երկար ժամանակ չի վերանայվել, հետևյալն է.

Լաբորատոր աշխատանք

Բոյլ-Մարիոտի օրենքի փորձնական հաստատումը

Աշխատանքի նպատակը. Ուսումնասիրել իզոթերմ պրոցես՝ գազի ծավալների հարաբերությունը հաստատուն ջերմաստիճանում համեմատելով ճնշումների հարաբերության հետ:

Անհրաժեշտ սարքեր և նյութեր. ցուցադրական փակ մանոմետր, փոփոխական ծավալով (ծալքավոր) գլան, սանդղակ և ռետինե խողովակ:

Տեսական մաս

Տրված քանակով նոսր գազի վիճակը որոշվում է դրա ճնշման (P), ծավալի (V) և ջերմաստիճանի (T) միջոցով: Եթե նշված պարամետրերից որևէ մեկը մնում է հաստատուն, ապա քանակական կապերը մնացած երկուսի միջև կոչվում են *հիմնական գազային օրենքներ*:

Առաջին գազային օրենքը փորձնականորեն հայտնաբերել է անգլիացի գիտնական Ռոբերտ Բոյլը 1662 թ., իսկ մի քանի տարի անց՝ ֆրանսիացի գիտնական Էդմ Մարիոտը կապ է հաստատել տրված քանակով գազի ճնշման և ծավալի միջև՝ հաստատուն ջերմաստիճանում:

Համակարգի վիճակի փոփոխությունը հաստատուն ջերմաստիճանում կոչվում է *իզոթերմ պրոցես*: Տրված քանակով գազի ճնշման և ծավալի արտադրյալն իզոթերմ պրոցեսում հաստատուն է՝

$$PV = const, \text{ երբ } m = const, T = const: \quad (1)$$

Եթե (1) հավասարումը գրվի գազի երկու կամայական վիճակների համար, որոնք բնութագրվում են P_1,V_1,T և P_2,V_2,T պարամետրերով, ապա կունենանք՝



Նկ.1

$$\frac{P_1}{P_2} = \frac{V_2}{V_1} \ (m = const, T = const): \qquad (2)$$

Նկ.2

Գազի ճնշման կախումը ծավալից պատկերող կորը կոչվում է *իզոթերմ*: Եթե կոորդինատային առանցքների վրա տեղադրենք գազի ճնշման և ծավալի արժեքները, ապա այդ կախումը, ըստ (1) առնչության, կպատկերվի հիպերբոլի մի ճյուղով (նկ.1) (երկրորդ՝ բացասական V–երին համապատասխանող ճյուղը ֆիզիկական իմաստ չունի):

Բոյլ-Մարիոտի օրենքը ճիշտ է բոլոր գազերի, գազերի խառնուրդների համար: Միայն մթնոլորտային ճնշումից մի քանի հարյուր և ավելի անգամ մեծ ճնշումների և ցածր ջերմաստիճանների դեպքում դիտվում են զգալի շեղումներ օրենքից, ընդ որում, նույն պայմաններում շեղման չափը կախված է գազի տեսակից:

Փորձի կատարման ընթացքը

1.Ծալքավոր չսեղմված գլանը ռետինե խողովակով միացրեք մանոմետրին, փակեք մանոմետրի ազատ ծորակը, որպեսզի գազի զանգվածը գլանում մնա անփոփոխ (նկ.2):

2.Գրանցեք ծալքավոր գլանի ծավալը սանդղակի միջոցով և մանոմետրի ցուցմունքը: Ստացված արդյունքները գրանցեք աղյուսակում:

V=	P=	P V=
V_1=	P_1=	P_1 V_1=

3.Պտուտակի միջոցով դանդաղ սեղմեք գլանը և գրանցեք ծավալի ու ճնշման տվյալները:

4.Կատարեք 4-5 գրանցում և համոզվեք, որ PV արտադրյալը չի փոխվում:

Այսպիսինն է նշված պլանի բովանդակությունը: Այսինքն՝ աշխատանքն ավարտվում է չափումների արդյունքների վրա հիմնված պարզագույն հաշվումներով: Կատարված աշխատանքն ակնհայտորեն հետազոտական բնույթ չի կրում:

Դիտարկենք փորձարարական սարքի, դրանով կատարվող չափումների և համապատասխան հաշվումների այլընտրանքային տարբերակ:

Նկ.3.

Նկ.4.

Նախ նկ.2-ում պատկերված սարքը փոխարինենք նկ.3-ում ներկայացված ավելի կոմպակտ և նոր տարբերակով: Նկատենք, որ այն կազմված է շատ պարզ մասերից, որոնք կարելի է ձեռք բերել սովորական դեղատներից:

Մինչ փորձի կատարման ընթացքին ու չափումներին անցնելը, փորձենք ստանալ հետաքրքիր ֆունկցիոնալ կախվածություն որոշ մեծությունների միջև, օգտվելով Բոյլ-Մարիոտի օրենքի մաթեմատիկական ձևակերպումից, որը ներկայացված է (1) հավասարումով:

Դիտարկենք գազի P_1,V_1,T_1 և P_2,V_2,T_2 պարամետրերով բնութագրվող երկու վիճակներ, որտեղ $P_2=P_1+\Delta P_1$: Համաձայն (1)-ի՝ նշված պարամետրերը կապված են հետևյալ առնչությամբ՝

$$P_1 V_1 = (P_1 + \Delta P_1)V_2: \quad (3)$$

Ձևափոխենք (3)-ը հետևյալ տեսքի՝

$$P_1 + \Delta P_1 = P_1 \frac{V_1}{V_2}: \quad (4)$$

(4)-ից կունենանք՝

$$\Delta P_1 = P_1 \frac{V_1}{V_2} - P_1, \quad (5)$$

որտեղից՝

$$\Delta P_1 = P_1 \frac{V_1}{V_2} + (-P_1): \quad (6)$$

Ընդհանրացնելով (6)-ը n թվով (n=1,2,…) չափումների համար՝ կունենանք՝

$$\Delta P_n = p_1 \frac{V_1}{V_n} + (-p_1): \quad (7)$$

(7)-ից ակնհայտ է ճնշումների ΔP_n տարբերության և V_1/V_n հարաբերության միջև գծային կախվածությունը: Փորձենք այն պատկերել գրաֆիկորեն: Այդ նպատակով կատարենք համապատասխան չափումներ նկ.3-ում պատկերված փորձասարքով:

Նշենք, որ մինչև չափումներին անցնելն անհրաժեշտ է համոզվել, որ ճնշաչափն ու ներարկիչը միացնող ռետինե խողովակից օդի արտահոսք չկա: Նաև պետք է ուշադրություն դարձնել մխոցի սկզբնական դիրքին և համապատասխանորեն ճնշաչափի նախնական ցուցմունքին (նշենք, որ ճնշաչափը ցույց կտա ներարկիչում օդի ճնշման և արտաքին մթնոլորտային ճնշման տարբերությունը): Ճիշտ տարբերակը ցուցադրված է նկ. 3-ում: Այսինքն՝ պետք է ունենանք $\Delta P_1=0$, $V_1=50$մլ:

Մխոցի օգնությամբ 2մլ քայլով փոփոխելով գազի ծավալը (նկ.4)՝ կատարենք չափումներ (8-10 անգամ) և ճնշումների տարբերության ու ծավալի ստացված արժեքները գրանցենք աղյուսակում:

V_n, *մլ*	50	48	46	44	42	40	38	36	34
ΔP_n, *մմ. սնդ. սյ.*	0	20	45	70	105	140	180	220	265

Հաջորդ աղյուսակում պետք է գրանցել ΔP_n տարբերության և V_1/V_n հարաբերության թվային արժեքները՝ կատարելով համապատասխան հաշվումներ:

ΔP_n, *մմ. սնդ. սյ.*	0	20	45	70	105	140	180	220	265
V_1/V_n	1	1,042	1,087	1,136	1,190	1,250	1,316	1,389	1,471

Կատարենք հաշվումներ (7) բանաձևով՝ ընդունելով, որ գազի սկզբնական ճնշումը հավասար է նորմալ մթնոլորտային ճնշմանը՝ P_1=760 մմ. սնդ. սյան, իսկ ծավալների հարաբերությունը փոփոխվում է 0,05 քայլով՝ սկսած 1-ից (գազի սկզբնական ծավալը 50 մլ է):

V_1/V_n	1	1.05	1.1	1.15	1.2	1.25	1.3	1.35	1.4
ΔP_n, *մմ. սնդ. սյան*	0	38	76	114	152	190	228	266	304

Նման տեսական ու փորձնական հաշվարկներից հետո, ընտրելով հարմար մասշտաբներ և տեղադրելով աբսցիսների առանցքի վրա ծավալների V_1/V_n հարաբերության, իսկ օրդինատների առանցքի վրա՝ ճնշումների ΔP_n տարբերության արժեքները, կարելի է կառուցել նշված մեծությունների կախվածության գրաֆիկը և համոզվել, որ երկու դեպքում էլ այն ուղիղ գիծ է:

Նշված գրաֆիկների կառուցման այլընտրանքային ու ավելի հարմար տարբերակը կլինի դրանց կառուցումը համակարգչային համապատասխան ծրագրերի օգնությամբ, ինչպիսիք են Microsoft Excel-ը և Mathcad-ը: Ստորև ներկայացված են այդ ծրագրերով կատարված աշխատանքի արդյունքները:

Նկ. 5-ում պատկերված արդյունքը ստացվել է Microsoft Excel ծրագրով: Նկարից երևում է, որ ծավալների հարաբերության սկզբնական արժեքը հավասար է մեկի, այն զրոյի հավասար լինել չի կարող, քանի որ գազի սկզբնական ծավալը զրո չէ:



Նկ.5

Նկ. 6-ում պատկերվածը Mathcad ծրագրով կատարված համանման աշխատանքի արդյունքն է:



Նկ.6

Այսպիսով, միևնույն հարթության վրա տեղադրելով տեսական հաշվարկների ու փորձի արդյունքները և կառուցելով համապատասխան գրաֆիկները, կարելի է նկատել, որ դրանք չեն համընկնում: Այդ տարբերությունը պայմանավորված է փորձի կատարման ոչ իդեալական պայմաններով: Այդուհանդերձ նշված մեծությունների միջև գծային կախվածությունն ակնհայտ է: Հենց դրանում համոզվելն էլ կատարված հետազոտության նպատակն էր:

Գրականություն

1. Анциферов Л.И., Пищиков И.М., Практикум по методике и технике школьного физического эксперимента, М., Просвещение, 1984, стр. 255.
2. Հակոբյան Գ.Վ., Սովորողների հետազոտական ունակությունների զարգացումը ֆիզիկայի դասավանդման ընթացքում, «Լույս» հրատարակչություն, Եր., 1977, 160 էջ:
3. Кузнецов С.И., Курс физики, Часть I. Механика. Молекулярная физика. Термодинамика. Издательство Томского политехнического университета, 2013, стр. 377.
4. Савелев И.В., Курс общей физики. Том I. Механика. Колебания и волны. Молекулярная физика, Издательство «Наука», главная редакция физико-математической литературы, М., 1970, стр. 512.
5. Ландсберг Г. С., Элементарный учебник физики, Том I. Механика. Теплота. Молекулярная физика. Издательство «Наука», главная редакция физико-математической литературы, М., 1975, стр. 656.

Նյութը ներկայացվել է 16.05.2023,
գրախոսման է ուղարկվել 15.06.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ֆ.մ.գ.թ. Կ.Ս.Արամյանը:

ՀՏԴ 53

Ֆիզիկա

Արկադի ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ, Ֆ.մ.գ.թ
E-mail: Sohomonyan@gmail.com

Կարեն ԱՐԱՄՅԱՆ
Ար.ՊՀ Մաթեմատիկայի և ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսորի պաշտոնակատար, Ֆ.մ.գ.թ.
E-mail: k_aramyan@rambler.ru

Ռուզաննա ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

ԲՅՈՒՐԵՂՆԵՐԻ ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

Սույն հոդվածում նշվում է «սիմետրիա» կամ հայերենով՝ «համաճափության» բառի ֆիզիկայում օգտագործվող իմաստը: Նշվում է, որ սիմետրիայի մաթեմատիկական ձևակերպումը սկիզբ է առել միայն XIX-րդ դարի երկրորդ կեսից սկսած: Տրված է սիմետրիայի սահմանումը որպես որոշակի ձևափոխության նկատմամբ օբյեկտի անփոփոխ մնալու հատկություն:

Նշվում է, որ սիմետրիկ ձևափոխությունների հիմքում ընկած է մաթեմատիկական (ֆիզիկական) օրենքի՝ ձևափոխությունների որոշակի խմբերի նկատմամբ ինվարիանտության ընդհանուր գաղափարը: Սիմետրիայով օժտված են նաև տարածության և ժամանակի հատկությունները՝ տարածության համասեռությունը և իզոտրոպությունը, ժամանակի համասեռությունը:

Դիտարկվել է բյուրեղների սիմետրիայի տեսության որոշ դրույթներ, որոնք հանդիսանում են բյուրեղների

ֆիզիկական հատկությունների ուսումնասիրության հատուկ մեթոդ: Դիտարկվել է նաև պտույտի դեպքում համակարգի համիլտոնիանի ինվարիանտությունը: Դա նշանակում է, որ պտտման $\hat{S}$–օպերատորը հանդիսանում է սիմետրիայի ձևափոխություն:

Բանալի բառեր՝ *սիմետրիա (համաչափություն), բյուրեղներ, բյուրեղագիտություն, անիզոտրոպիա, ինվերսիա, մատրիցա, կինետիկ էներգիա, պոտենցիալ էներգիա, ինվարիանտ, համիլտոնիան:*

А.Согомонян, К.Арамян, Р. Согомонян

ОСНОВНАЯ ТЕОРИЯ КРИСТАЛЛИЧЕСКОЙ СОВМЕСТИМОСТИ И ЕЕ МАТЕМАТИЧЕСКАЯ ФОРМУЛИРОВКА

В статье отмечается смысл, в котором слово симметрия используется в физике. Отмечается, что начало математическому определению термина «симметрия» было положено уже во-второй половине XIX века. Приводится определение симметрии как свойства объекта оставаться неизменным в результате применения определенного преобразования.

Отмечается, что в основе понятия симметричных преобразований лежит инвариантность математического, или физического закона по отношению к некоторой группе преобразований. Симметрией обладают также свойства пространства и времени – однородность и изотропность пространства, однородность времени.

Рассмотрены некоторые положения теории симметрии кристаллов, которая представляет собой особый метод изучения физических свойств кристаллов. Рассмотрена инвариантность гамильтониана системы по отношению к вращениям. Это означает, что оператор вращения $\hat{S}$ – представляет собой преобразование симметрии.

Ключевые слова: *симметрия, кристаллы, кристаллография, анизотропия, инверсия, матрица, кинетическая энергия, потенциальная энергия, инвариант, гамильтониан.*

A.Soghomonyan, K.Aramyan, R. Soghomonyan

BASIC THEORY OF CRYSTAL COMPATIBILITY AND ITS MATHEMATICAL FORMULATION

The article notes the meaning in which the word “symmetry” is used in physics. It is noted that the beginning of the mathematical definition of the term "symmetry" was laid in the second half of the 19th century. Symmetry is defined as the property of an object to remain unchanged as a result of applying a certain transformation.

It is noted that the concept of symmetric transformations is based on the invariance of a mathematical or physical law with respect to a certain group of transformations. Symmetry is also possessed by the properties of space and time - the homogeneity and isotropy of space, the homogeneity of time.

Some provisions of the theory of crystal symmetry, which is a special method for studying the physical properties of crystals, are considered. The invariance of the Hamiltonian of the system with respect to rotations is considered. This means that the rotation operator $\hat{S}$ is a symmetry transformation..

Key words: symmetry, crystals, crystallography, anisotropy, inversion, matrix, kinetic energy, potential energy, invariant, hamiltonian.

Հունարեն “սիմետրիա” բառը հայերեն նշանակում է “համաչափություն”: Համաչափության գաղափարը տարածվում է առօրյա կյանքում: Սիմետրիկ են օրինակ ծաղիկների պսակները, թիթեռների թևերը, ձյան աստղերը, մարդու մարմնի մասերը և այլն: Մարդկությունը վաղուց օգտագործել է “սիմետրիա” հասկացությունը՝ կիրառելով այն իր գործողության տարբեր ոլորտներում: Այնուամենայնիվ, սիմետրիայի ուսմունքի մաթեմատիկական զարգացումը իրականացվել է միայն XIX դարի երկրորդ կեսին:

Սիմետրիան որոշակի փոփոխության (ձևափոխության) նկատմամբ օբյեկտի անփոփոխ մնալու հատկությունն է: Լայն առումով, սիմետրիա ասելով հասկանում են որոշակի կառուցվածքի, համակարգի կազմակերպվածություն, նրա տարրերի կարգավորվածություն, մասերի ներդաշնակ միավորում ընդհանուրի մեջ:

Սիմետրիայի սկզբունքները կիրառելի են մաթեմատիկայում (երկրաչափություն, աբստրակտ հանրահաշիվ, համաչափ մատրիցաները գծային հանրահաշվում, հավանականությունների տեսություն և այլն), կենսաբանությունում, քիմիայում, ֆիզիկայում և այլն:

Սույն հոդվածում դիտարկելու ենք միայն բյուրեղների սիմետրիայի հիմնարար սկզբունքը և սիմետրիայի մաթեմատիկական ձևակերպումը:

20-րդ դարի ֆիզիկայում սիմետրիայի սկզբունքները երևան են եկել 1905թ.-ին՝ կապված տարածության-ժամանակի ինվարիանտության խմբի Այնշթայնյան ըմբռնմամբ: Այդ ժամանակից սկսած՝ սիմետրիան ֆիզիկոսների համար դարձել է բնության պարզությունը ամենատարբեր մակարդակներում արտահայտելու միջոց:

Նյոթերի թեորեմը պնդում է, որ ֆիզիկական համակարգի յուրաքանչյուր անընդհատ սիմետրիայի համապատասխանում է որոշակի պահպանման օրենք, իսկ Վիգների դասակարգումը հաստատում է, որ ֆիզիկական օրենքների համաչափությունը բնորոշում է բնության մեջ մասնիկների շարժումը:

Սիմետրիկ ձևափոխությունների հիմքում ընկած է մաթեմատիկական (ֆիզիկական) օրենքի՝ ձևափոխությունների որոշակի խմբերի նկատմամբ ինվարիանտության ընդհանուր գաղափարը: Այն օրթոգոնալ ձևափոխությունները, որոնք որևէ պատկեր համատեղում են ինքն իր հետ, կազմում են տվյալ կառուցվածքի սիմետրիայի խումբ: Սիմետրիայի այսպիսի ընդհանրական-մաթեմատիկական ըմբռնումը հնարավորություն է տալիս ակնառու և հայտնի ձևերից զատ հայտնաբերել սիմետրիայի ոչ բացահայտ ձևեր, որոնք կիրառվում են ֆիզիկայի տարբեր բնագավառներում, հատկապես տարրական մասնիկների ֆիզիկայում և քվանտային մեխանիկայում:

Սիմետրիայով՝ օժտված են նաև տարածության և ժամանակի հատկությունները՝ տարածության համասեռությունը (տարածության բոլոր կետերը հավասարազոր են) և իզոտրոպությունը (տարածության մեջ բոլոր ուղղությունները հավասարազոր են), ժամանակի համասեռությունը (ժամանակի բոլոր պահերը հավասարազոր են): Թվարկած հատկություններից յուրաքանչյուրին համապատասխանում են որոշակի ձևափոխություններ (տարածության համաչափությանը՝ տարածական տեղափոխությունը, իզոտրոպությանը՝ տարածական պտույտը, ժամանակի համասեռությանը՝ ժամանակի հաշվարկման սկզբի փոփոխությունը), որոնց նկատմամբ ֆիզիկայի օրենքները մնում են անփոփոխ (ինվարիանտ), այսինքն՝ ֆիզիկայի օրենքները ևս սիմետրիկ են: Ֆիզիկայի օրենքները սիմետրիկ են նաև հաշվարկման իներցիալ համակարգի նկատմամբ: Ֆիզիկայի օրենքներին բնորոշ է նաև հայելային սիմետրիան, որը նշանակում է կոորդինատների ձախ և աջ համակարգերի համաչափություն: Օրինակ, քվանտային մեխանիկայում բացահայտվեցին սիմետրիայի նոր օրենքներ, մասնավորապես, տարածական ինվերսիան (P), լիցքի համալուծությունը (C), T-ինվերսիան և դրանց համադրությունը (տես Լյուդերս-Պաուլիի թեորեմը):

Արդի ֆիզիկայում մեծ տեղ է հատակացվում տրամաչափվայծ սիմետրիային (դաշտի քվանտային տեսության շարժման հավասարումներ), որը հնարավորություն է տալիս միավորելու թույլ և էլեկտրամագնիսական փոխազդեցությունները:

Ֆիզիկական համակարգում սիմետրիայի առկայությունը պայմանավորում է ֆիզիկական մեծության պահպանումը (Նյոթերի թեորեմը): Երկրաչափական սիմետրիայի հատկությունները կարևոր են բյուրեղների սիմետրիայի ուսումնասիրության համար: Այս բնագավառում մեծ է Պիեռ Կյուրիի դերը, որը ընդհանրացրեց սիմետրիայի սկզբունքը և այն տարածեց ֆիզիկական երևույթների ընդարձակ դասի նկատմամբ՝ սիմետրիան կապելով պատճառական ու կառուցվածքային խնդիրներին:

Բյուրեղների համաչափությունը, հատկությունները, կառուցվացքը և առաջացման պայմանները, ուսումնասիրում է բյուրեղագիտությունը՝ գիտություն բյուրեղների և նյութի բյուրեղային վիճակի մասին: Բյուրեղագիտության հիմնական մեթոդը խարսխված է բյուրեղների սիմետրիայի հատկության վրա ըստ որի բյուրեղները դասակարգվում են բյուրեղական 7 համակարգի, 32 դասի և 230 տարածական խմբի:

Բոլոր բյուրեղները կառուցված են նյութական մասնիկներից, որոնք երկրաչափորեն ճիշտ տեղակայված են տարածության մեջ: Ատոմների, մոլեկուլների ր իոնների դասավորված բաշխումը տարբերում է բյուրեղային վիճակը ոչ բյուրեղային վիճակից, որտեղ կարգի աստիճանը բոլորովին աննշան է:

Բյուրեղները բոլոր պինդ մարմիններն են, որոնցում մասնիկները (ատոմներ, իոններ, մոլեկուլներ) կանոնավոր կերպով դասավորված են տարածական ցանցերի հանգույցների տեսքով:

Անիզոտրոպիան և համաչափությունը բյուրեղների բնորոշ հատկություններն են՝ պայմանավորված դրանց ներքին կառուցվածքի կանոնավորությամբ և համաչափությամբ: Սիմետրիայի տարրերը կոչվում են օժանդակ երկրաչափական պատկերներ (կետեր, ուղիղներ, հարթություններ), որոնց օգնությամբ հայտնաբերվում է պատկերների համաչափությունը:

Ինվերսիայի կենտրոնը նկարի ներսում եզակի կետ է, որը բնութագրվում է նրանով, որ միջով գծված ցանկացած գիծ նրա երկու կողմերում և հավասար հեռավորությունների վրա հանդիպում է նկարի նույն համապատասխան կետերին: Երկրաչափության մեջ նման կետը կոչվում է սիմետրիայի կենտրոն:

Համաչափության հարթությունը հարթություն է, որը պատկերը բաժանում է երկու հայելային հավասար մասերի, որոնք գտնվում են միմյանց նկատմամբ որպես առարկա և նրա հայելային պատկեր: Համաչափության առանցքը ուղիղ գիծ է, որի շուրջ պատկերի հավասար մասերը կրկնվում են մի քանի անգամ:

Ինվերսիայի առանցքը այնպիսի ուղիղ գիծ է, որ նրա շուրջը որոշակի անկյան տակ պտտման ժամանակ, որին հաջորդում (կամ նախորդում) է անդրադարձում պատկերի կենտրոնական կետում, պատկերը համընկնում է ինքն իր հետ:

Բոլոր բյուրեղները բաժանվում են 7 սինգոնիայի՝ (հունարենից «սուն»՝ միասին, «գոնիաս»՝ անկյուն)՝ տրիկլինիկ, մոնոկլինի,ռոմբիկ, եռանկյուն, քառանկյուն, վեցանկյուն և խորանարդ:

Նույն նյութերը տարբեր պայմաններում կարող են ձևավորել բոլորովին տարբեր բյուրեղային կառուցվաքներ, և, հետևաբար, տարբեր հանքանյութեր: Վառ օրինակ է հանդիսանում ածխածինը՝ եթե այն ունի վեցանկյուն սինգոնիա, ապա առաջանում է գրաֆիտ, եթե խորանարդ է՝ ադամանդ:

Բյուրեղի ձևը թույլ է տալիս ենթադրել, թե մասնիկները ինչ կարգով են միավորվում նրա կառուցվածքներում: Բացի այդ, բոլոր ֆիզիկական հատկությունները սերտորեն կապված են սիմետրիայի հետ: Այն որոշում է, թե կոնկրետ բյուրեղը ինչ ֆիզիկական հատկություններ կարող է ունենալ կամ չունենալ, այսինքն՝ որոշում է ֆիզիկական հատկությունների անիզոտրոպության բնույթը:

Համաչափությունը ներթափանցում է բյուրեղների ամբողջ ֆիզիկան և գործում է որպես բյուրեղների ֆիզիկական հատկությունների ուսումնասիրության հատուկ մեթոդ: Հետևաբար, բյուրեղագիտության հիմնական մեթոդը երևույթների, հատկությունների, կառուցվածքի և բյուրեղների արտաքին ձևի համաչափության հաստատումն է:

Եթե $F(x_1, x_2, x_3)$ ֆունկցիան նկարագրում է օբյեկտ, օրինակ, բյուրեղի ձևը եռաչափ տարածության մեջ, իսկ $g(x_1, x_2, x_3)$գործողությունը փոխակերպում է օյեկտի բոլոր կետերի կոորդինատները, ապա g գործողությունը համարափության ձևափոխություն է, իսկ F-ը սիմետրիկ օբյեկտ՝, եթե տեղի ունեն հետևյալ պայմանները՝

$$g[x_1, x_2, x_3] = x_1' x_2' x_3'$$
$$F(x_1, x_2, x_3) = F(x_1', x_2', x_3')$$

Կետի համաչափության ձևափոխությունները կարելի է ներկայացնել գծային հավասարումներով

$$\begin{cases} x_1' = a_{11}x_1 + a_{12}x_2 + a_{13}x_3 \\ x_1' = a_{21}x_1 + a_{22}x_2 + a_{23}x_3 \\ x_3' = a_{31}x_1 + a_{32}x_2 + a_{33}x_3 \end{cases}$$

այսինքն՝ գործակիցների մատրիցը՝ (a_{ij}) ունի հետևյալ տեսքը.

$$(a_{ij}) = \begin{bmatrix} a_{11} & a_{12} & a_{13} \\ a_{21} & a_{22} & a_{23} \\ a_{31} & a_{32} & a_{33} \end{bmatrix}$$

Այժմ ներկայացնենք բյուրեղների սիմետրիայի մաթեմատիկական մոդելը՝կիրառելով մատրցները, երբ պինդ մարմինը կատարում է α անկյունով պտույտ (OZ)առանցքի շուրջը:

Սիմտրիայի գործողությունը հարմար է ներկայացնել մատրիցայով: Նպատակահարմարությունը կապված է նրա հետ, որ սիմետրիայի

գործողության հաջորդական կիրառումը նկարագրվում է մատրիցաների բազմապատկումով:

Դիտարկենք, օրինակ, մարմնի պտույտը Z-առանցքի շուրջը α անկյունով: Դիտարկենք մարմնի $r'(x', y', z')$ կետի շարժումը նոր r (x,y,z) դիրքի: Նկ.1-ում երևում է, որ

$$\frac{x'}{r'} = cos\beta;\ \frac{y'}{r'} = \sin\beta; \quad (1)$$

$$\frac{x}{r} = cos(\alpha + \alpha);\ \frac{y}{r} = sin(\alpha + \beta): \quad (2)$$

Քանի որ պտույտի դեպքում $r' = r$, ապա (1)-ից և (2)-ից կստանանք.

$x = rcos(\alpha + \beta), y = rsin(\alpha + \beta)$, որտեղից հետևում է

$$\begin{cases} x = x'cos\alpha - y'sin\alpha \\ y = x'sin\alpha + y'cos\alpha \\ z = z' \end{cases} \quad (3)$$

Օրթոգոնալ մատրիցան կազմված է (3) հավասարումների գործակիցներից և ունի հետևյալ տեսքը

$$\tilde{S}(\alpha) = \begin{pmatrix} cos\alpha & -sin\alpha & 0 \\ sin\alpha & cos\alpha & 0 \\ 0 & 0 & 1 \end{pmatrix} \quad (4)$$

Այն տալիս է պտույտի լրիվ նկարագրությունը:



Նկ.1. Պինդ մարմնի պտույտը z առանցքի շուրջը՝ α անկյունով

Հակառակ ուղղությամբ $(-\alpha)$ անկյամբ պտույտի դեպքում նկարագրվում է հակադարձ $\tilde{S}^{-1}$ մատրիցայով, որը որոշվում է $\tilde{S} \cdot \tilde{S}^{-1} = \tilde{I}$ արտադրյալով, որտեղ $\tilde{I}$-ն միավոր մատրիցան է:

Z առանցքի շուրջը 90°-ով պտույտի դեպքում մատրիցան կլինի

$$\tilde{S}(90^o, z) = \begin{bmatrix} 0 & -1 & 0 \\ 1 & 0 & 0 \\ 0 & 0 & 1 \end{bmatrix}, \quad (5)$$

Z առանցքի շուրջը 180°-ով պտույտի դեպքում մատրիցան կլինի

$$\tilde{S}(180^o, z) = \begin{bmatrix} -1 & 0 & 0 \\ 0 & -1 & 0 \\ 0 & 0 & 1 \end{bmatrix}, \quad (6)$$

(ZOY) հարթության մեջ արտացոլմամբ կհամապատասխանի հետևյալ մատրիցան.

$$\tilde{S}(\sigma) = \begin{bmatrix} -1 & 0 & 0 \\ 0 & 1 & 0 \\ 0 & 0 & 1 \end{bmatrix}, \quad (7)$$

r'շառավիղ վեկտորի կոորդինատի և r նոր վեկտորի կոորդինատի միջև կապը կարելի է արտահայտել $\tilde{S}$ մատրիցայի միջոցով.

$$|r| = \tilde{S}|r'|; \quad (8)$$

$$|r'| = \tilde{S}^{-1}|r|: \quad (9)$$

Այժմ, եթե $f(r)$ ֆունկցիան նկարագրում է պինդ մարմնի ֆիզիկական հատկությունները, ապա սիմետրիայի գործողության կիրառումը այդ ֆունկցիայի նկատմամբ նշանակում է, որ $\tilde{S}$ սիմետրիայի գործողությունը կիրառելի է նրա r արգումենտի նկատմամբ:

$$\tilde{S}^{-1}f(r) = f(\tilde{S}^{-1}r): \quad (10)$$

Կիրառելով $\tilde{S}$-ը $\hat{H}(r)$ Համիլտոնի նկատմամբ, որը կախված չէ Շրեյդինգերի ստացիոնար հավասարման ժամանակից (R_i) կետում՝ մեկուսացված ատոմի համար կունենանք հետևյալ տեսքը.

$$\hat{H}(r)\varphi = E\varphi, \quad (11)$$

որտեղ

$$\hat{H} = -\frac{\hbar^2}{2m_0}\nabla^2 - \frac{ze^2}{|r-R_i|}: \quad (12)$$

(11) հավասարման մեջ (երկրորդ կարգի դիֆերենցիալ հավասարում) առաջին գումարելին (կինետիկ էներգիան) պարունակում է հետևյալ օպերատորը.

$$\nabla^2 = (\nabla\cdot\nabla) = \frac{\partial^2}{\partial x^2} + \frac{\partial^2}{\partial y^2} + \frac{\partial^2}{\partial z^2}, \quad (13)$$

և հանդիսանում է ∇ երկու վեկտորների սկալյար արտադրյալը:

$\tilde{S}$ պտույտի դեպքումերկու վեկտորները, սկալյար արտադրյալի դեպքում, պտտվում են միատեսակ և սկալյար արտադրյալը չի փոխվում.

$$-\frac{\hbar^2}{2m_0}\tilde{S}^{-1}\nabla^2 = -\frac{\hbar^2}{2m_0}(\nabla')^2, \quad (14)$$

այսինքն՝ կինետիկ էներգիան (x', y', z') և (x, y, z) կոորդինատներում ունեն միևնույն ֆունկցիոնալ տեսքը:

Այժմ, դիտարկենք Համիլտոնի օպերատորում պոտենցիալ էներգիան (12) բանաձևից և կիրառենք $\tilde{S}$ գործողությունը $U(r-R_i)$ հայտարարի նկատմամբ.

$$\tilde{S}^{-1}(r-R_i)^2 = \tilde{S}^{-1}[(x-X_i)^2 + (y-Y_i)^2 + (z-Z_i)^2], \quad (15)$$

Տեղադրելով (15)-ի մեջ (3)-ը, կստանանք՝

$$\tilde{S}^{-1}(r-R_i)^2 = (x-X_i)^2 + (y-Y_i)^2 + (z-Z_i)^2 = (r'-R_i')^2:$$

Այս դեպքում ասում են, որ $\hat{H}(r)$ Համիլտոնը ինվարիանտ է $\tilde{S}$-ի նկատմամբ, կամ որ նույնն է՝ $\tilde{S}$-ը հանդիսանում է սիմետրիայի ձևափոխությունը, մնալով $\hat{H}(r)$-ի նկատմամբ ինվարիանտ:

E-էլեկտրոնի էներգիան
φ-էլեկտրոնի լիցքը
$\hbar$-Պլանկի հաստատուն

m_0-էլեկտրոնի զանգվածը
e-էլեկտրոնի լիցքը
$\widehat{H}$-Համիլտոնի օպերատորը
$\tilde{S}$ -մատրիցա

Գրականություն

1. Киттель И. , Квантовая теория твердого тела, М., Наука, 1967г, с.492.
2. Косевич А.М., Основы механики кристаллической решетки, М., Наука, 1972г, с.280.
3. Шаскольская М.П.,Кристаллография, М., Высшая школа, 1984г.
4. Федоров Е.С., Симметрия и структура кристаллов, М., Наука, 1949г.

Նյութը ներկայացվել է 8.06.2023,
գրախոսման է ուղարկվել 15.06.2023:
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ մաթեմատիկայի և ֆիզիկայի ամբիոնը։

ՀՏԴ 621.382

Ֆիզիկա

Մելս ՄԻՆԱՍՅԱՆ

ԱրՊՀ մաթեմատիկայի և ֆիզիկայի ամբիոնի դոցենտ, Ֆ.մ.գ.թ.

ՈՐՈՇ ՄԿՄ ԿԱՌՈՒՑՅՆԵՐՈՒՄ ՀՈՍԱՆՔԻ ԿԻՍԱԽՈՐԱՆԱՐԴԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Աշխատանքում ցուցադրված է փորձառական արդյունք, և նրա ստացումը ենթադրաբար կապվում է բարձրաօհմ նմուշում հարստացված մերձկոնտակտային շերտի գոյացման հետ:

Բանալի բառեր՝ *մետաղ, թույլ հաղորդականությամբ կիսահաղորդիչ, հաղորդականության գոտի, միաբևեռ ինժեկցիա, տարածական լիցք, գերզծային հոսանք:*

М.Минасян

О ВОЗМОЖНОСТИ ПОЛУКУБИЧЕСКОГО УЧАСТКА В ТОКЕ НЕКОТОРЫХ МПМ СТРУКТУР

В работе показан экспериментальный результат, получение которого предположительно связывается с образованием приконтактного обогощенного слоя, возможного в высокоомном образце.

Между структурой металл-полупроводник-металл (МСМ) и вакуумным диодом существует общность, особенно в отношении начальных условий генерации электрического тока, когда еще не прикладывались межэлектродные напряжения. Основное отличие тока в вакууме от тока в среде связано с существенной разницей в механизмах рассеяния. Однако аналогичное изменение тока можно ожидать и на вольт-амперных характеристиках (ВАХ) до тех пор, пока анодное напряжение не будет доведено до значения насыщения. При напряжениях этого диапазона в МСМ-структурах получаются сверхлинейные ВАХ: $I \sim U^2$ или

$I \sim U^{3/2}$. Теория приносит первое для твердотельного диода с плоским катодом. Во втором случае важен тот факт, что диод является «точечным», у которого катодная пластинка представлена с очень малым радиусом кривизны.

Ключевые слова: *металл, полупроводник со слабой проводимостью, зона проводимости, монополярная инжекция, пространственный заряд, сверхлинейный ток.*

M.Minasyan

ON THE POSSIBILITY OF A SEMICUBIC SECTION IN THE CURRENT OF SOME MSM STRUCTURES

The paper shows an experimental result, the receipt of which is presumably associated with the formation of a near-contact enriched layer, which is possible in a high-resistance sample. There is a commonality between the metal-semiconductor-metal (MSM) structure and the vacuum diode, especially in terms of the starting conditions for the generation of electric current, when no inter-electrode voltages have yet been applied. The main difference between the current in vacuum and in the medium is due to the significant difference in the scattering mechanisms. However, a similar change in current can be expected in the volt-ampere characteristics (VAC) until the anode voltage is brought to a saturation value. Under the voltages of this range, superlinear VACs are obtained in MSM structures: $I \sim U^2$ or $I \sim U^{3/2}$. The theory brings the first for a flat-cathode solid-state diode. In the second case, the fact that the diode is "point" is important, in which the cathode blade is presented with a very small radius of curvature.

Key words: *metal, low conductivity semiconductor, conduction band, monopolar injection, space charge, superlinear current.*

Վաղուց հայտնի է ոչ գծային անհամաչափ ՎԱԲ-երի ստացումը մետաղ-կիսահաղորդիչ «կետային» կոնտակտներում և դրանց հանդեպ հետաքրքրվածությունը [4]: Սակայն հոսանք-լարում ցանկալի կախվածությունները ապահովվում են միայն որոշակի պայմաններում: Փորձը և տեսությունը օգնում են կողմնորոշվելու մասնավորապես այն բանում, թե էներգիական որպիսի արգելքի հետ գործ կունենանք՝ կոնտակտի այս կամ այն իրականացման դեպքում:

Փորձառությունը, իհարկե, սկսվում է հենքային կիսահաղորդչի ընտրությունից, քանի մենք կարևորում ենք այն, որ հոսանքի կախվածությունը ջերմաստիճանից և կոնտակտում առաջացող պոտենցիալային արգելքներից տարբեր է այլասերված և ոչ այլասերված կիսահաղորդիչների պարագայում: Ազատ էլեկտրոնները վերջիններիս մեջ կարգերով ավելի նվազ են, ինչը համեմատականորեն մեծացնում է մետաղի հետ կոնտակտում ձևավորվող էներգիական արգելապատնեշի լայնությունը, բերելով (որոշ վերապահումներով) քվանտային թունելային անցումների մերժմանը: Նաև, ինչպես նշվում է [1] -ում, հաղորդականության գոտու վիճակների միայն ցածր էներգիական հատվածն է զբաղեցվում ազատ էլեկտրոններով՝ վերջիններիս ցածր կոնցենտրացիայի պատճառով: Պարզ է, որ c-գոտու հատակին մոտ տեղավորված էլեկտրոնները լավագույնս են «նկատում» պոտենցիալային արգելքի փոփոխությունները:



Նկ.1.ա, բ

Նկ.1.ա, բ-ում ներկայացված են n-տիպի կիսահաղորդչի հետ մետաղի կոնտակտի էներգիական դիագրամները՝ շեղող արտաքին լարման բացակայության պարագայում:

Նկ. 1. ա-ի դեպքում կիսահաղորդչային կողմում առկա է մերձմակերևույթային աղքատացում: Առաջացող էներգիական արգելքն ունի $eU_к$ բարձրություն (e-ն պայմանանշում է էլեկտրոնի լիցքի բացարձակ արժեքը):

Նկ. 1. բ-ի դեպքում n-տիպի կիսահաղորդչի հետ հավասարակշռությունը ձեռք է բերված մերձմակերևույթային տեղամասի «հարստացումով»:

Երկու դեպքերում էլ նկարագրերը իդեալականացված են: Դրանք մոտարկումներ են՝ հաղորդականության տարբեր նախադրյալներ ունեցող կոնտակտների համար: Գործնական հարթությունում երկրորդի իրականացումը շատ ավելի խնդրահարույց է, ինչը կարող է նրա վերաբերյալ ավելի սակավ հրապարակումների պատճառը լինել:

Ստորև, մեջբերելով [1-4] աշխատանքներից փոխառնված որոշակի տեղեկություններ, մենք փորձում ենք նկ.1, բ-ի դեպքում ընկալելի դարձնել էլեկտրահաղորդման առանձնահատուկ նրբությունների գոյացումը: Շնորհիվ դրանց, հնարավոր է դառնում մի այլ մոտեցում ևս, ըստ որի՝ հոսանքի ակնհայտ կախվածությունը ջերմաստիճանից և լարումից պիտի ճանաչվի

որպես հենքային, բայց և ավելացվի պարամետրական կախվածություն կոնտակտում հնարավոր դարձող մեխանիկական լարումներից: Խոսքը կոնտակտում պոտենցիալային արգելքի վրա լրացուցիչ ներգործության մասին է, ուրեմն և ինժեկցիոն հոսանքի սահուն մոդուլացման մասին: Վերջին հաշվով, այդ կերպ կարելի է հասնել ՎԱԲ-ի նպատակային փոփոխմանը՝ կիրառական մի այլ խնդրի առաջադրումով:



Նկ.2

Նկ. 2–ում ցուցադրված է երկու կողմերից հարթ մետաղական կոնտակտներ ունեցող կիսահաղորդչային բյուրեղային շերտի տեղամասում առաջացող էներգիական արգելքը: Նկարագիրը վերաբերում է տարանցիկ հոսանքի բացակայության դեպքին: Ըստ կոորդինատի փոփոխվում է և՛ $\varphi(x)$ պոտենցիալը, որը էլեկտրոններով հարստացված բյուրեղում բացասական է ($\varphi < 0$), և՛ ազատ էլեկտրոնների $n = n(x)$ կոնցետրացիան: Պայմանով, որ շերտի հաստությունը դեռևս չի սահմանափակված, կարելի է օգտվել հավասարումների՝ [1]-ում առաջադրված համակարգից՝

$$j = -en\mu\frac{d\varphi}{dx} + \mu kT\frac{dn}{dx}, \tag{1}$$

$$\frac{d^2\varphi}{dx^2} = \frac{4\pi e}{\mathcal{E}}(n - n_0) \tag{2}$$

և սահմանային պայմաններից՝

$$x = 0, \varphi = 0, n = n_լ, \; x = \infty, \varphi = U_լ + U, n = n_0: \tag{3}$$

Վերը անտեսվել է շեղման հոսանքը, ինչպես նաև դիֆուզիայի $\mathcal{D}_n$ գործակցի փոխարեն (ըստ Էյնշտեյնի) գրանցվել է $\frac{kT}{e}\mu_n$: Սահմանային (3) պայմանում U-ն՝ արտաքին լարումն է, ինչպես նաև մտցված է նշանակում՝

$$n_լ = n_0 exp\left(-\frac{eU_լ}{kT}\right): \tag{3′}$$

Նկատենք, որ բյուրեղի՝ հավելյալ էլեկտրոններով հարստացած շերտի սահմաններում՝ մակերևույթից դեպի նրա ծավալի խորքը $\varphi(x)$ պոտենցիալը նվազող է: Նկ. 2-ում ծավալային լիցքի տիրույթը առանձնացված է որպես 1 տեղամաս: Քանի որ նրանում տարածական լիցքը բացասական է, և էլեկտրոնները դաշտի կողմից ձգվում են դեպի մետաղական կոնտակտ: Թող $-eU_լ > (2 \div 3)kT$, հոսանքի խտության համար դեռևս տեղի ունի $j = 0$: Այդ պարագայում (1)-ից կունենանք՝

$$\frac{dn}{n} = \frac{e}{kT}d\varphi, \text{և } n(x) = n_լ exp\frac{e\varphi(x)}{kT}, \tag{4}$$

որտեղ $n_կ$–ն սահմանային՝ $x = 0$ հարթությունում առկա կոնցետրացիան է: Տեղադրելով $n(x)$ –ը (2)-ում, ստանում ենք

$$\frac{d^2\varphi}{dx^2} = \frac{4\pi e}{\mathcal{E}} n_կ \left(exp\frac{e\varphi(x)}{kT} - exp\frac{eU_կ}{kT} \right) = \frac{4\pi e}{\mathcal{E}} n_0 \left[exp\frac{e(\varphi - U_կ)}{kT} - 1 \right]: \quad (5)$$

(5) հավասարումից, ինչպես հարստացված, այնպես էլ աղքատացած կոնտակտային շերտերի դեպքերում, հնարավոր է գտնել $\varphi(x)$ բաշխվածությունները:

Կոնցետրացիայի, դաշտի E լարվածության և φ պոտենցիալի համար տեղ գտնող կոորդինատային փոփոխությունները որոշ իմաստով ընդհանրական են՝ բոլորն էլ էքսպոնենցիալային են: Օրինակ, երբ աղքատացած շերտում հաղորդականության գոտու եզրի ծռվածությունը մեծ չէ (ըստ նկ. 1.ա-ի), և $eU_կ$-ի համար կարելի է ընդունել $eU_կ \ll kT$, ապա (5)-ում էքսպոնենցիալ ֆունկցիայի մոտարկում կատարելով, ստանում են՝ [1]

$$\varphi(x) = U_կ \left[1 - exp\left(-\frac{x}{L_դ} \right) \right], \quad (6)$$

որում $L_դ = \left(\frac{\mathcal{E}kT}{4\pi e^2 n_0} \right)^{1/2}$ մեծությունը հայտնի է որպես էլեկտրաստատիկ դաշտի էկրանավորման Դեբայի երկարություն: Կիսահաղորդչում $n_0 \sim 10^{15}$ $սմ^{-3}$ –ի և $\mathcal{E} \sim 10$-ի դեպքում՝ $L_դ \sim 10^{-5}$սմ է (կամ 0.1 մկմ):

Էլեկտրոններով հարստացված կոնտակտային շերտի պարագայում φ պոտենցիալը ձգտում է 1-տեղամասում գալ նվազագույն արժեքի, մինչդեռ $x = 0$-ում տեղի ունի $\varphi(0) = 0$: Այդ հանգամանքը թույլ է տալիս համարել $|U_կ| > |\varphi|$, ուրեմն և

$$exp\frac{eU_կ}{kT} \ll exp\frac{e\varphi}{kT}: \quad (7)$$

Դրանում օգտվում ենք նաև $-eU_կ > (2 \div 3)kT$ պայմանից: Ի վերջո, օգտվելով (7)-ից, կարող ենք պարզեցված տեսքի բերել նաև (5)-ը՝

$$\frac{d^2\varphi}{dx^2} = \frac{4\pi e}{\mathcal{E}} n_կ exp\frac{e\varphi}{kT}: \quad (8)$$

(8)-ի ինտեգրումը կատարվում է ըստ φ-ի՝ նախապես երկրորդ կարգի դիֆերենցիալ հավասարման երկու կողմերը բազմապատկելով $d\varphi/dx$-ով: Ինտեգրումը բերում է (9)-ին՝

$$\left(\frac{d\varphi}{dx} \right)^2 = \frac{8\pi kT}{\mathcal{E}} n_կ exp\frac{e\varphi}{kT} + C: \quad (9)$$

Ինտեգրման C հաստատունը որոշվում է պայմանից, որ 1 և 2 տեղամասերի սահմանին ունենանք

$$\varphi = U_կ, \qquad \frac{d\varphi}{dx} = 0:$$

Այդ պահանջում ընդգծված է, որ հոսանքի բացակայության պարագայում 1-ից 2-րդ շերտ անցնելու տեղում գոտիների եզրերը արդեն հարթ են: Հաստատունի համար ստացվում է՝

$$C = -\frac{8\pi kT}{\mathcal{E}} n_{կ} exp \frac{eU_{կ}}{kT}:$$

Դրանում $\frac{eU_{կ}}{kT}$-ի հետ կապված ունենք (7) առնչությունը, ինչը թույլ է տալիս (9)-ում անտեսել C-ն: Արդյունքում ստանում ենք $\varphi(x)$-ը պայմանավորող դիֆերենցիալ հավասարում, որն արդարացի է կիսահաղորդչի 1 տեղամասի համար՝

$$\frac{d\varphi}{dx} = \pm \left(\frac{8\pi kT n_{կ}}{\mathcal{E}}\right)^{1/2} exp \frac{e\varphi}{2kT}: \quad (10)$$

Քանի φ-ն բացասական է $x > 0$ տիրույթում և կոնտակտից հեռանալուց նվազող է, ապա հավասարման մեջ թողնվում է մինուսի նշանը: Հետագա ինտեգրումը ենթադրվում է իրականացնել 0-ից x-տիրույթում: Այն տալիս է

$$-e\varphi = 2kTln(1 + x/a), \quad (11)$$

որտեղ a-ն բնութագրական երկարություն է, նման Դեբայի $L_դ$-ին: Տվյալ դեպքում

$$a = \left(\frac{\mathcal{E}kT}{2\pi e^2 n_{կ}}\right)^{1/2}: \quad (12)$$

Էլեկտրոնների կոնցենտրացիայի կոորդինատային կախվածությունը 1 շերտում այսպիսին է՝

$$n = n_{կ} exp \frac{e\varphi}{kT} = n_{կ} \left(\frac{a}{a + x}\right)^2: \quad (13)$$

Ավելի հեռու գտնվող՝ խորքային կետերում (2 տիրույթում ըստ նկ. 2-ի) տեղի ունի՝

$$\varphi = U_{կ}, \qquad n = n_{կ} exp \frac{eU_k}{kT} = n_0: \quad (14)$$

Մենք տեսնում ենք (14)-ում, որ U_k-ն φ-ի լրիվ փոփոխությունն է 1 շերտի տեղամասում, իսկ $\mathcal{E}_C$-ի և $\mathcal{E}_V$-ի փոփոխությունները նույն շերտում հավասարվում են $-eU_k$-ի: Նկ. 2-ում ցույց է տրված նաև ազատ էլեկտրոնների n կոնցենտրացիայի փոփոխությունը 1 տեղամասում՝ կոնտակտի հարթությունում ունեցած $n_{կ}$ արժեքից մինչև խորքում եղած n_0-ն: Այն 2 շերտում և՛ նվազ է, և՛ անփոփոխ:

Խնդրի մատչելիությունը կարևորելով՝ նկ. 2-ը համապատասխանեցված է երկու կողմերում միանման էլեկտրոդներով պարփակված բյուրեղային նմուշի (բարակ թիթեղի) դեպքին: Ինչպես նշվել է, նկ. 2-ի դեպքում արտաքին շեղում չի տրված, և հոսանքը բացակայում է:

Վերը դիտարկվածի ուշագրավ արդյունքներից մեկը նրանումն է, որ կոնտակտամերձ (մոտավորապես a հաստություն ունեցող) շերտերում հայտնվում և կուտակվում են էլեկտրոններ անսպասելի բարձր կոնցենտրացիայով, մինչդեռ n_0 խորքային արժեքը դերակատարություն չունի, կարող է անգամ շատ փոքր լինել, ինչպես մեկուսիչներում է: Շնորհիվ մետաղական էլեկտրոդներից տեղափոխված այդ էլեկտրոնների, որոնց կուտակումը 1 տեղամասերից յուրաքանչյուրում կարելի է նմանեցնել կոնտակտամերձ լիցքային ամպերի, նախադրյալներ են ստեղծվում, որ միջէլեկտրոդային լարում կիրառելու դեպքում որոշակի հոսանք դիտվի՝ ի հաշիվ մի կոնտակտից դեպի մյուսը ներքաշվող էլեկտրոնների: Ինչպես նշվում է [1]-ում, բացառված չէ տարանցիկ հոսանքների առաջացումը նույնիսկ այն պարագայում, երբ առանց կոնտակտների, այսինքն ի հաշիվ հենց բյուրեղի տեսակարար հաղորդականության, հոսանքի դիտումը տվյալ լարման տակ կլիներ անհնարին:

Ինչպես տեսնում ենք, ՄԿՄ կառուցվածքի և վակուումային դիոդի միջև առկա է ընդհանրություն, հատկապես էլեկտրական հոսանքի առաջացման ելակետային պայմանների մասով, երբ դեռ միջէլեկտրոդային լարումներ չեն կիրառված: Նկատի ունենք շիկացած կաթոդի շուրջ էլեկտրոնային ամպի գոյացումը և կաթոդ-անոդ միջակայքում հոսանքակիրների խիստ սակավությունը: Վերջինում էլեկտրոնների կոնցենտրացիան կփոխվի անոդային լարում կիրառելուց: Լարումը մոնոտոն մեծացնելիս, կլինեն մեծացող քանակով էլեկտրոններ, որոնք միջէլեկտրոդային միջակայք ներթափանցելով, հասնում են անոդին: Որոշ լարումների դեպքում անոդային հոսանքը կարող է ինչպես կախված, այնպես էլ անկախ լինել տարածական լիցքերից: Հոսանքի հիմնական տարբերությունը վակուումում և միջավայրում պայմանավորվում է ցրման մեխանիզմների էական տարբերությամբ: Այնուամենայնիվ կարելի է սպասել ՎԱԲ-երում հոսանքի փոփոխման նմանություն (լարումից՝ հոսանքի փոփոխման միատեսակ արտահայտվածություն):



Նկ.3

Անդրադառնանք նկ. 3-ին, որում ներկայացված է ազատ էլեկտրոնի էներգիայի կոորդինատային փոփոխությունը բյուրեղային նմուշում՝ մետաղի հետ կոնտակտի մեջ գտնվող նիստին ուղղահայաց ուղղությամբ: Հաղորդականության գոտու (c-գոտու) եզրի՝ 1-ով տրված բաշխվածությունը տեղի ունի հաստատված ջերմային հավասարակշռության պայմանում,

երբ անոդին լարում չի կիրառված: Կորի վերընթաց մասում (տարածական լիցքի գոյության տեղամասում) առկա են հոսանքի դրեյֆային և դիֆուզիոն բաղկացուցիչներ, որոնք իրար հակառակ են և հավասար: Արդյունարար հոսանքը զրոյական է: Երբ անոդին դրական լարում է կիրառվում, $\mathcal{E}_c$-ի ընթացքը ներկայացվում է 2-ով: X' հարթության կետերում էլեկտրոնի պոտենցիալ էներգիան մաքսիմալ է, և հոսանքը դիֆուզիոն է: Արտաքին լարման էլ ավելի մեծացումը բերում է 3-ին. X' հարթությունը տեղաշարժվում է դեպի ձախ, այն մոտենում է կոնտակտային հարթությանը, իսկ էներգիական արգելքի բարձրությունը նվազում է: Արգելքի տարածական սփռվածությունը նույնպես փոխվում է, այն սեղմվում է: Ամեն մի այդպիսի փոփոխության արդյունքում մի բան մնում է անփոփոխ. X' հարթությունը, որում պոտենցիալ էներգիան մաքսիմալ է, տեղակայվում է այնպես, որ նրանում դիֆուզիայի հոսանքը հավասարվում է բյուրեղով անցնող հոսանքին, այսինքն՝ X' –ում էլեկտրոնների դրեյֆը զրոյացվում է, մնում է միայն դիֆուզիան: Այս առանձնահատկությամբ օժտված կոնտակտները դառնում են էլեկտրոնների հավաքատեղի, որտեղից ապահովվում է էլեկտրոնների առաքումը (էմիսիան):

Նկ. 4. *CdS*-ի (20 Օմ.սմ. տեսակարար դիմադրությամբ միաբյուրեղի) վրա իրականացված կետային դիոդի վոլտամպերային բնութագրերը ուղիղ (1) և հակառակ (2) շեղումների տակ, ստացված սենյակային ջերմաստիճանում:



Կոնտակտի շառավիղը մոտ 1մկմ է: Փորձարարական կետերը խաչիկներ են (x), երբ մետաղական սայրը բացասական շեղման տակ է: Դրանց ընթացքը ներկայացնում է 1 կորը: Կետագծերով տարված կորը, որը I = 1 մU-ի կետում ճիշտ համատեղված է փորձարարական տվյալի հետ, իրենից ներկայացնում է 3/2-ի օրենքին համապատասխանող կորը: Գծիկավորը, որը նույնպես համատեղված I = 1 մU կետում, տարված է որպես քառակուսային օրենքին համապատասխանող: Մութ օղակները ստացված են սայրին դրական շեղում տալուց: Դրանց ներկայացնող ուղղագիծը (2) համապատասխանում է Օհմի օրենքին:

Շնորհիվ անոդի դրական պոտենցիալի, էլեկտրոնները ներքաշվում են ծավալի խորքերը: Բյուրեղի այդպիսի հարստացումը էլեկտրոններով տվյալ պարագայում պիտի անվանվի *հիմնական լիցքակիրների ինժեկցիա*: Առաջանում է համապատասխան տարածական լիցք, և, Պուասոնի հավասարման հետ համաձայնությամբ, գոյանում է հավելյալ էլեկտրական դաշտ: Հիշյալի չեզոքացումը համապատասխան չափով պահանջում է արտաքին շեղող լարման ավելացում: Ոչ մեծ անոդային լարումների պայմաններում հոսանքը համարվում է տարածական լիցքով սահմանափակված (ՏԼՍՀ): Այստեղ նորից առկա է նմանություն լամպային դիոդում առաջացող հոսանքի հետ, երբ անոդային լարումը դեռ չի բերվել հագեցնող արժեքին: Այս տիրույթի լարումների տակ ՄԿՄ կառուցվածքներում ստացվում են գերգծային ՎԱԲ-եր՝ $I \sim U^2$ կամ $I \sim U^{3/2}$: Դրանց տարբերակումը մեզնից կպահանջի մոդելավորման ճշգրտում: Տեսությունը բերում է առաջինին՝ հարթ կաթոդով պինդմարմնային դիոդի համար: Երկրորդի դեպքում կարևորվում է դիոդի «կետային» լինելու հանգամանքը, որում կաթոդի սայրը ներկայացվում է կորության շատ փոքր շառավղով [5]: Համապատասխան աղբյուրում մեկնաբանված է փորձառական ՎԱԲ-ի ստացումը: Տրված նկարագիրը բերում ենք ամբողջությամբ (նկ.4.), ինչպես նաև ավելացնում Ge–ի վրա մեր կողմից ստացվածը (նկ.5.):





ա) բ)

Նկ.5.ա,բ. ՎԱԲ-ի հակառակ (ա) և ուղիղ (բ) ճյուղերը: Գործարանային Д2 դիոդի համար՝ ընդհատ (-----), փոխակերպվածի համար՝ հոծ (_____):

Փաստացի նյութի նման հարստացումը, անշուշտ, մոտեցնում է մեզ այստեղ արծարծված թեզերի հետագա ճշգրտմանը, ինչը վերաբերում է նաև ՎԱԲ-երի

ստացման նախադրյալներին և այդ ՎԱԲ-երի ծառայեցմանը տեխնիկայում պահանջվող նպատակներին:

Գրականություն

1. В. Л. Бонч-Бруевич, С. Г. Калашников, Физика полупроводников, М.: Наука, 1977. 672 с
2. Олфрей Г. Ф. , Физическая электроника, Пер. с англ. В. И. Гайдука. – М.: Мир, 1966.
3. *Зи* С.М., *Физика полупроводниковых приборов,* В 2 томах. Изд-во: М.: Мир, 1984 г.;
4. Епифанов Г.И., Мома Ю.А., Физические основы конструирования и технологии РЭА и ЭВМ, М. Сов.радио, 1979г.
5. Ламперт М., Марк П., Инжекционные токи в твердых телах, Изд-во Мир, М., 1973.

Նյութը ներկայացվել է 16.05.2023,
գրախոսման է ուղարկվել 15.06.2023:
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ֆ.մ.գ.թ. Կ.Ս.Արամյանը:

ՀՏԴ 53

Ֆիզիկա

Կարեն ԱՐԱՄՅԱՆ
Ար.ՊՀ Մաթեմատիկայի և ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսորի պաշտոնակատար, Ֆ.մ.գ.թ.
e-mail: k_aramyan@rambler.ru

Արկադի ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ, Ֆ.մ.գ.թ
e-mail: Sohomonyan@gmail.com

Աննա ԳԱՍՊԱՐՅԱՆ
ԱրՊՀ մաթեմատիկա և ֆիզիկա ամբիոնի ասիստենտ,
e-mail. gasparyananna1997@mail.ru

ДИАЛЕКТИКА В МИКРОМИРЕ

ԴԻԱԼԵԿՏԻԿԱՆ ՄԻԿՐՈԱՇԽԱՐՀՈՒՄ

Հոդվածում՝ ֆիզիկայի պատմությունից հայտնի փաստերը դիտարկված են դիալեկտիկայի օրենքների տեսանկյունից: Այդպիսիք են հանդիսանում հավասարակշիռ ճառագայթման տեսությունը, որտեղ Մաքս Պլանկը առաջին անգամ էլեկտրամագնիսական ճառագայթումը դիտարկել է ոչ թե որպես կանգուն էլեկտրամագնիսական ալիքների համախմբություն, քանի որ դա բերում էր ճառագայթման էներգիայի անվերջ մեծ արժեքի: Ըստ Մաքս Պլանկի, էներգիայով փոխանակումը ճառագայթման և խոռոչի պատի միջև տեղի ունենում այնպիսի մեծություններով, որոնք պատիկ են էներգիայի մինիմալ արժեքին, կամ՝ քվանտին: Քվանտի էներգիան, իր հերթին, ուղիղ համեմատական է հաճախությանը: Այսպիսով, Նյուտոնի՝ լուսային կորպուսկուլների մասին նախնական գաղափարները, որոնք փոխարինվեցին ալիքային պատկերացումներով ինտերֆերենցի և դիֆրակցիայի երևույթները բացատրելու համար Ֆրենելի կողմից, նորից

փոխարինվեցին կորպուսկուլյար պատկերացումներով: Այստեղ բացահայտորեն դիտվում է ժխտման ժխտումի վերաբերյալ օրենքը, ինչպես նաև համախության հետ կապվաց՝ քանակը որակի անցման մասին օրենքի դրսևորումը:

Ատոմի մասին պատկերացումների կայացման գործընթացում դիտվում է, թե ինչպես Թոմսոնի մոդելի դասական պատկերացումները փոխարինվել են ատոմի մոլորակային մոդելով: Իրադրությունը լուծվեց Ն.Բորի կողմից կանխադրութերը մտցնելով, որոնք հակասական էին դասական էլեկտրադինամիկայի տեսանկյունից:

Դիալեկտիկայի օրենքների տեսանկյունից զուգահեռ է տարվում հասարակական-քաղաքական, կրթական ոլորտների հետ, որտեղ զարգացման օրենքների փաստացի ժխտումը բերել է տագնապալի արդյունքների:

Բանալի բառեր՝ *դիալեկտիկա, հակասությունների միասնություն և պայքար, ժխտման ժխտում, հավասարակշիռ ճառագայթում, ֆոտոէֆեկտ, ատոմի տեսություն, էլեկտրոնների դիֆրակցիա, կրթական համակարգ, հասարակական և քաղաքական գործընթացներ:*

К.Арамян, А.Согомонян, А.Гаспарян

ДИАЛЕКТИКА В МИКРОМИРЕ

На основе известных из истории физики фактов в статье прослеживается проявление законов диалектики: отрицания отрицания, единства и борьбы противоположностей.

В качестве таковых приводится теория равновесного излучения, в которой Макс Планк впервые рассмотрел излучение не как совокупность стоячих электромагнитных волн. Согласно Планку, обмен энергией между излучением и стенкой сосуда происходит величинами, кратными минимальной величине (кванту) энергии. Таким образом, первоначальная гипотеза Ньютона о корпускулах света, которая была заменена волновыми представлениями для объяснения явлений интерференции и дифракции света, снова была заменена корпускулярными представлениями. В таком же свете рассматривается и теория фотоэффекта.

В качестве диалектического единства корпускулярной и волновой концепций приводится также результат опыта Дэвисона-Джермера, в котором электроны проявляют волновые свойства, а также теория атома Бора, в которой

вводится не свойственное классической физике представление о стационарных состояниях, а также используются квантовые представления о свете.

Приведенные примеры с точки зрения законов диалектики сравниваются с явлениями, происходящими в социально-политической сфере, в сфере образования.

Ключевые слова: *диалектика, единство и борьба противоположностей, отрицание отрицания, равновесное излучение, фотоэффект, теория атома, дифракция электронов, система образования, общественно-политические процессы.*

K. Aramyan, A.Sogomonyan, A.Gasparyan

DIALECTICS IN THE MICROCOSM

The article deals with facts known from the history of physics from the point of view of the laws of dialectics: negation of negation, unity and struggle of opposites.

These are the theory of equilibrium radiation, where for the first time Max Planck considered electromagnetic radiation not as a set of standing electromagnetic waves. According to M. Planck, the exchange of energy between radiation and the wall of the cavity occurs in quantities that are multiples of the minimum value (quantum) of energy. Thus, Newton's original concepts of light corpuscles, which were replaced by wave representations in order to explain interference and diffraction, were again replaced by corpuscular ones. In this regard, the phenomenon of the photoelectric effect is also given.

The given examples of the manifestation of dialectics laws are compared with the processes taking place in the education system, in the socio-political sphere from the point of view of the laws of dialectics.

Key words: *dialectics, unity and struggle of opposites, negation of negation, equilibrium radiation, photoelectric effect, atomic theory, electron diffraction, education system, social and political processes.*

Один из основных законов диалектики – это закон единства и борьбы противоположностей, а также закон перехода количества в качество. В современных общественных, политических процессах эти законы зачастую игнорируются, больше всего – по незнанию, что приводит к нежелательным, зачастую – трагическим последствиям.

Указанные законы носят всеобщий характер, они действуют как в живой, так и неживой природе, в общественных, политических явлениях.

В статье рассматриваются некоторые аспекты происходящих в микромире явлений и прослеживается проявление вышеуказанных законов диалектики в них.

1.Опыты Резерфорда и теория атома Бора.

До открытия в опытах Резерфорда строения атома существовала теория атома по Томсону, согласно которой атом представляет собой положительно заряженный шар, в который «вкраплены» отрицательно заряженные электроны. Согласно известному из электростатики закону (теореме) Гаусса, на электрон, находящийся на расстоянии x от центра шара (рис.1), кулоновское силовое воздействие оказывает лишь заряд шара, на поверхности которого находится электрон. Объём этого шара равен $4\pi x^3/3$, а заряд, соответственно, $\rho \cdot 4\pi x^3/3$, где ρ- объёмная плотность положительного заряда атома. Для атома водорода $\rho = \frac{e}{4\pi R^3/3}$, где $e = 1.6 \cdot 10^{-19}$ Кл – величина заряда электрона, R- радиус атома.



Рис.1

Сила кулоновского взаимодействия электрона с указанным шаром

$$F = ek\frac{e}{4\pi R^3/3}\cdot\frac{1}{x^2}\cdot\frac{4\pi}{3}x^3 = \frac{ke^2}{x^2}\left(\frac{x}{R}\right)^3,$$

$k = 9\cdot 10^9 \frac{\text{Н}\cdot\text{м}^2}{\text{Кл}^2}$ – постоянная закона Кулона в системе Си.

Таким образом, зависимость силы взаимодействия электрона от расстояния до центра шара оказывается линейной:

$$F(x) = \frac{ke^2}{R^3}x \qquad (1)$$

Второй закон Ньютона для электрона в атоме, соответственно, имеет вид:

$$ma = m\ddot{x} = -\frac{ke^2}{R^3}x$$
$$\ddot{x} = -\frac{ke^2}{mR^3}x = -\frac{k'}{m}x, \qquad (2)$$
$$k' = \frac{ke^2}{R^3}.$$

Уравнение (2) является уравнением гармонических колебаний с круговой частотой

$$\omega = \sqrt{\frac{k'}{m}} = \sqrt{\frac{ke^2}{mR^3}} \qquad (3)$$

Согласно известной к тому времени (1863г.) электродинамике Максвелла, заряженная частица, совершающая колебания с некоторой частотой, излучает

(поглощает) электромагнитные волны той же частоты. Таким образом, в рамках модели Томсона оказалось возможным объяснить факт излучения и поглощения атомами электромагнитного излучения, что представляло собой значительное достижение.

После открытия α-частиц Э.Резерфорд (1909-1911) поставил опыт (рис.2), в котором тонкую золотую фольгу облучал α-частицами. Энергия α-частиц такова, что вероятность того, что α-частица рассеется от атома по Томсону на угол, больший, чем 90^0, равна практически нулю. Как говорил сам Резерфорд, вероятность указанного рассеяния такова, как если бы «выстрелить пушкой по комару и снаряд отразится от глаза комара».



Рис.2

Однако опыт показал, что примерно одна из 2000 α-частиц отражается от фольги. Это указывало на то, что положительный заряд атома расположен в области, гораздо меньшей, чем сам атом. Если размер атома порядка $\sim 10^{15}$м, то размер области, в которой расположен положительный заряд, в 100 000 раз меньше. Таким образом возникло понятие об атомном ядре, а электронам «оставалось» вращаться вокруг ядра, подобно тому, как планеты вращаются вокруг Солнца.

Однако планетарная модель атома столкнулась с принципиальными трудностями.

Вращение электрона вокруг ядра – это ускоренное движение. При ускоренном движении заряженной частицы, согласно электродинамике Максвелла (к тому времени уже установившаяся наука), частица излучает электромагнитную волну и, следовательно, теряет энергию.

TYPES OF APPLE TREE PESTS DISTRIBUTED IN THE CONDITIONS OF THE FOOTHILL ZONE OF THE ARTSAKH REPUBLIC AND THE BIOLOGICAL AND ECONOMIC EFFECTIVENESS OF COMBATING THEM

In Artsakh Republic apple trees are damaged by numerous phytophages, which are one of the main causes of crop loss. From this point of view, the development and implementation of effective pest control measures is considered relevant. In order to carry out an effective fight against harmful organisms, it is necessary to recognize the types of harmful organisms, to be familiar with their lifestyle and development features, to know in many ways the forms, nature and dates of damage caused by harmful organisms.

The article examines the effects of preparations belonging to various chemical groups against the most common apple tree aphids: green (Aphis pomi Deg.) and woolly aphids (Eriosoma

Lanigerum Hausm.), fruit borer (Carpocapsa pomonella L.) and flower borer (Anthonomus pomorum L.) in the conditions of the foothill zone of the Republic of Artsakh. According to the research results, it turned out that the variant of sequential spraying of movento (1l/ha + danital (1l/ha) + fosban (2l/ha) + nurell D (1l/ha) surpassed the other variants in biological efficiency, providing a yield of 189.8 c/ha.
Key words: *apple tree pest, degree of infection, hibernation phase, mature insect, crop loss, preparation, biological efficiency.*

Ներածություն

2020թ. սեպտեմբերին թշնամու կողմից սանձազերծած պատերազմի հետևանքով ԱՀ գյուղատնտեսական նշանակության տարածքների 81,4 տոկոսը հայտնվել է թշնամու վերահսկողության տակ կամ գտնվում է մշակության համար վտանգավոր գոտում: Մասնավորապես՝ մինչև պատերազմական գործողությունները առկա էին՝ 7,4 հազար հեկտար բազմամյա տնկարկներ, ներկայումս առկա է 2,65 հազար հեկտար, կամ թշնամու տիրապետության տակ է անցել 64,2 տոկոսը [1]:

Եթե հաշվի առնենք, որ մեկ մարդու կողմից տարեկան օգտագործվում է 91 կգ միրգ, որից 49 կգ-ը՝ խնձոր [6], ապա կարելի է ենթադրել, որ ԱՀ բնակչության կողմից տարեկան օգտագործվում է 10920տ միրգ, որից 4920 տոննան՝ խնձոր:

Ազգաբնակչությանը գյուղատնտեսական մթերքներով, այդ թվում՝ պտղով ապահովելու համար կարևորվում է գյուղացիական տնտեսություններում առաջավոր տեխնոլոգիաների ներդրումը, որը կնպաստի արտադրության արդյունավետության բարձրացմանը:

Խնձորենու մշակության և բարձր բերք ստանալու համար վճռորոշ նշանակություն ունի պաշտպանության նոր, ժամանակակից մեթոդների կիրառումը: Վնասատու օրգանիզմների դեմ արդյունավետ պայքար իրականացնելու համար անհրաժեշտ է ճանաչել վնասակար օրգանիզմների տեսակները, ծանոթ լինել նրանց կենսակերպին ու զարգացման առանձնահատկություններին, բազմակողմանիորեն իմանալ վնասակար օրգանիզմների հասցրած վնասի ձևերը, բնույթը և ժամկետները:

Խնդրի դրվածքը

Մեր ուսումնասիրություններով նպատակ ենք հետապնդել ԱՀ նախալեռնային գոտու պայմաններում ուսումնասիրել խնձորենու վնասատուների տեսակային կազմը և առավել վտանգավոր ֆիտոֆագերի զարգացման կենսաբանական առանձնահատկությունների ուսումնասիրման հիման վրա մշակել գիտականորեն հիմնավորված պայքարի արդյունավետ միջոցառումներ: Այդ իսկ տեսանկյունից խնդիր է դրվել բացահատել.

1.խնձորենու ագրոբիոցենոզում վնասակար էնտոմոֆաունայի տեսականին, տարածվածությունը, վնասատուների հասցրած վնասի չափն ու բնույթը,

2.փորձարկել քիմիական տարբեր խմբերի պատկանող ինսեկտոակարիցիդներ, մշակել պայքարի արդյունավետ միջոցառումներ,

3. հաշվարկել ներդրման առաջարկվող պատրաստուկների կենսաբանական և տնտեսական արդյունավետությունները:

Հետազոտության արդյունքները

Խնձորենու վնասատուների տեսակային կազմը և տարածվածությունը պարզելու համար ուսումնասիրությունները կատարվել են 2021-2022թթ. ընթացքում ԱՀ նախալեռնային գոտու Իվանյան, Բերքաձոր և Կարմիր Շուկա համայնքներում (ծ.մ. 600մ)։ Այդ նպատակով վաղ գարնանից սկսած կատարվել են երթուղային հետազոտություններ, որի ընթացքում զննվել են ծառերի բները, սաղարթը, պտուղները, արձանագրվել և հավաքվել են մորֆոլոգիական զարգացման տարբեր փուլերում հայտնաբերված բոլոր վնասատուների տեսակները (օգտագործվել են նաև ֆերոմոնային թակարդներ) [6]: Հավաքված նյութի տեսակային պատկանելությունը որոշվել է մասնագիտական որոշիչների օգնությամբ [8]։

2021-2022 թթ. խնձորենու այգիներում տարածված պտղակերների, ծաղկակերների և լվիճների դեմ պայքարի միջոցառումների փորձարկումները կատարվել են ԱՀ Մարտունու շրջանի Կարմիր Շուկա համայնքի խնձորենու 18-19 տարեկան այգում (սորտ Այդոռեդ)։ Հիմք ընդունելով գրականության տվյալները՝ պայքարի համար ընտրվել են քիմիական տարբեր խմբերի պատկանող հետևյալ պատրաստուկները՝ ֆոսֆորօրգանական պատրաստուկներից՝ ֆոսբան, ագրոֆոս, դանիտալ, պիրետրոիդներից՝ կարատե, դեցիս պրոֆի, նուրելլ Դ, տետրոնաթթուների խմբից՝ մովենտո [4;7]։

Փորձարկումները իրականացվել են հետևյալ տարբերակներով.

1.Ստուգիչ (առանց սրսկումների),

2.կարատե ԽԷ, 0,4լ/հա (1-ին սրսկում) + կարատե ԽԷ, 0,4լ/հա (2-րդ սրսկում) + կարատե ԽԷ, 0,4լ/հա (3-րդ սրսկում) + կարատե ԽԷ, 0,4լ/հա (4-րդ սրսկում) (չափանմուշ),

3.ագրոֆոս ԽԷ, 2լ/հա (1-ին սրսկում) + դեցիս պրոֆի ԽԷ, 0,5լ/հա (2-րդ սրսկում) + կարատե ԽԷ, 0,4լ/հա (3-րդ սրսկում)+նուրելլ Դ ԽԷ, 1լ/հա (4-րդ սրսկում),

4.մովենտո ԽԿ, 1լ/հա (1-ին սրսկում) + դանիտալ ԽԷ, 1լ/հա (2-րդ սրսկում)+ֆոսբան ԽԷ, 2լ/հա (3-րդ սրսկում) + նուրելլ Դ ԽԷ, 1լ/հա (4-րդ սրսկում)։

Բոլոր տարբերակներն ունեցել են երեքական կրկնություններ։ Յուրաքանչյուր կրկնության մեջ ընդգրկվել են 10-ական ծառեր։ Պատրաստուկների կենսաբանական արդյունավետությունը որոշվել է՝ համաձայն գիտական հետազոտությունների մեթոդաբանության [5]։

Փորձարարական այգում աշնանը՝ փորձի բոլոր տարբերակներում, այդ թվում ստուգիչ, տերևաթափից հետո բուսական մնացորդները ոչնչացվել և այգու միջշարային տարածությունները փխրեցվել են, կատարվել է պարարտացում փտած գոմաղբով (20 տ/հա): Այգու միջշարային և մերձբնային տարածություններում փորվել են 25 սմ լայնությամբ և 30 սմ խորությամբ փոսեր, հեկտարին հատկացվելիք գոմաղբը բաժանվել է ըստ պատրաստած փոսերի թվի, ապա լցվել է փոսերի մեջ ու ծածկվել հողով: Տերևաթափից հետո և գարնանը՝ նախքան բողբոջների բացվելը, կատարվել են սանիտարական հատումներ. հատվել են հիվանդ, չորացած, ինչպես նաև սաղարթը խտացնող ճյուղերը: Բոլոր տարբերակներում, այդ թվում ստուգիչ, ծառերը ոռոգվել են. առաջին ջրումը կատարվել է վաղ գարնանը՝ ծաղկումից 2 շաբաթ առաջ, (500մ^3 ջրման նորմով), երկրորդը՝ պսակաթերթերի թափվելուց անմիջապես հետո, երրորդը՝ պտուղների ձևավորման շրջանում [2]:

Բոլոր տարբերակներում, այդ թվում ստուգիչ, խնձորենու հիվանդությունների դեմ «կանաչ կոնի» փուլում կատարվել են սրսկումներ անտրակոլի 70% թրջվող փոշով (2,5կգ/հա):

Սրսկումները կատարվել են OՎS-1B մակնիշի տրակտորաքարշ սրսկիչի օգնությամբ: 1-ին սրսկումը կատարվել է նախքան բողբոջների ուռչելը, քանի դեռ լվիճները չեն մտել բողբոջների մեջ, 2-րդ սրսկումը՝ առաջին սրկումից 15 օր անց բողբոջները ուռչելու ժամկետում, քանի դեռ ծաղկակերները, սաղոցողները չեն վնասել, 3-րդ սրսկումը պսակաթեթերը թափվելուց 10 օր անց՝ պտղակերների դեմ, 4-րդ սրսկումը՝ 3-րդ սրսկումից 15 օր անց: Վնասատուների հաշվառումները կատարվել են սրսկումներից 5, 7, 15 և 21 օրեր անց:

Ստորև ներկայացված է ԱՀ նախալեռնային գոտում խնձորենու առավել տարածված ֆիտոֆագերի դասային պատկանելությունը (գծ.1):

Գծ. 1. ԱՀ նախալեռնային գոտում խնձորենու ֆիտոֆագերի դասային պատկանելիությունը (2021թ.)



Գծապատկեր 1-ի տվյալները վերլուծելով՝ պարզվում է, որ ԱՀ նախալեռնային գոտու պայմաններում խնձորենու այգիները վնասում են 38 տեսակ վնասատուներ, որոնցից 2-ը պատկանում են սարդակերպների, 36-ը՝ միջատների դասին: Արձանագրված վնասատուները պատկանում են տաքսոնոմիական 8 կարգերի, որոնցում առավել ընդգրկունը թեփուկաթևերի *(Lepidoptera)* 12 տեսակ և միակերպաթևերի *(Homoptera)* 10 տեսակ - կարգերի ներկայացուցիչներն են: Ըստ սննդային մասնագիտացման՝ առավել շատ տարածված են պոլիֆագերը (20 տեսակ), օլիգոֆագերը և մոնոֆագերը՝ 5 տեսակ, ֆիլոֆագերը՝ 8 տեսակ, գեներատիվ օրգանները վնասում է 4 տեսակ, իսկ 1 տեսակ՝ խնձորենու ծաղկակերը, անտոֆագ է և վնասում է ծաղիկները:

Հետազոտությունների տարիներին այգիներին զգալի վնաս են հասցրել խնձորենու պտղակերը (վարակվածությունը կազմել է 57,8%), ծաղկակերը (վարակվածությունը կազմել է 39,4%), կանաչ և բրդապատ լվիճները (վարակվածությունը կազմել է 38,5%), որոնց վրա էլ կենտրոնացվել են մեր փորձարկումները:

Տարածված վնասատուների դեմ պայքարի տարբեր ձևերի կենսաբանական արդյունավետության ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Խնձորենու այգում վնասատուների դեմ տարվող պայքարի տարբեր ձևերի կենսաբանական արդյունավետությունը ԱՀ նախալեռնային գոտու պայմաններում (2021-2022թթ. միջինը)

Տարբերակ	Ծախսի քանակը, լ հա կգ/հա	Տերևների և շիվերի բնակեցվածության աստիճանը լվիճներով, %	Կենսաբանական արդյունավետությունը, %	Ծաղիկների վնասվածությունը	Կենսաբանական արդյունավետությունը, %	Պտուղների վնասվածությունը պտղակերով, %	Կենսաբանական արդյունավետությունը, %
Ստուգիչ (առանց սրսկման)							
-	-	26,3	-	46,7	-	32,1	-
-	-	30,8	-	53,1	-	57,5	-
-	-	47,8	-	44,2	-	60,2	-
-	-	58,7	-	40,3	-	68,9	-
Սխեմա 1 (չափանմուշ)							

Կարատե ԽԷ (1-ին սրսկում)	0,4լ/հա	22,3	15,2	28,4	39,1	12.1	62,3
Կարատե ԽԷ (2-րդ սրսկում)	0,4լ/հա	15,7	49,0	23,8	55,1	10,4	82,0
Կարատե ԽԷ (3-րդ սրսկում)	0,4լ/հա	8,7	81,8	14,2	67,9	8,9	85,2
Կարատե ԽԷ (4-րդ սրսկում)	0,4լ/հա	5,3	91,0	3,5	91,3	3,8	94,4
Սխեմա 3							
Ագրոֆոս ԽԷ (1-ին սրսկում)	2լ/հա	22,1	15,9	27,5	41,1	12.3	61,7
Դեցիս Պրոֆի ԽԷ (2-րդ սրսկում)	0,5լ/հա	15,2	50,6	20,4	61,6	10,3	82,0
Կարատե ԽԷ (3-րդ սրսկում)	0,4լ/հա	7,3	84,7	13,2	70,1	5,6	90,7
Նուրելլ Դ ԽԷ (4-րդ սրսկում)	1լ/հա	1,9	96,8	2,2	94,5	3,1	95,5
Սխեմա 4							
Մովենտո ԽԿ (1-ին սրսկում)	1 լ/հա	21,9	16,7	26,9	42,4	11,9	63,0
Դանիտալ ԽԷ (2-րդ սրսկում)	1լ/հա	14,7	52,3	19,5	63,3	9,4	83,7
Ֆոսբան ԽԷ (3-րդ սրսկում)	2լ/հա	4,4	90,8	9,8	77,8	4,9	91,8
Նուրելլ Դ ԽԷ (4-րդ սրսկում)	1լ/հա	1,2	98,0	1,2	100	3,0	95,6

Աղյուսակի տվյալներից երևում է, որ հաշվարկման բոլոր ժամկետներում չորրորդ տարբերակը (մովենտո ԽԿ (1լ/հա) + դանիտալ ԽԷ (1լ/հա) + ֆոսբան ԽԷ(2լ/հա) + նուրելլ Դ ԽԷ (1լ/հա)) կենսաբանական արդյունավետությամբ գերազանցում է մնացած տարբերակներին, այդ թվում՝ չափանմուշային կարատեի ցուցանիշներին: Չափանմուշային կարատեն (տարբերակ 2) ստուգիչի համեմատ լվիճների դեմ ցուցաբերել է 15,2 - 91,0% կենսաբանական արդյունավետություն, ծաղկակերի դեմ՝ 39,1-91,3%, իսկ պտղակերի դեմ՝ 62,3-94,4%: 3-րդ տարբերակի պատրաստուկների հաջորդական սրսկումները լվիճների դեմ ապահովել են 15,9-96,8% կենսաբանական արդյունավետություն, ծաղկակերի դեմ՝ 41,1-94,5%, իսկ պտղակերի դեմ՝ 61,7-95,5%:

Խնձորենու բերքատվության ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 2-ում: Փորձարկված տարբերակները ստուգիչի նկատմամբ ապահովել են 53,7-81,1գ/հա բերքի հավելում: Առավել բարձր բերք ստացվել է 4-րդ տարբերակում՝ 189,8գ/հա, որը 3-րդ տարբերակին գերազանցել է 3,7գ/հա-ով:

Առաջարկվող 3-րդ և 4-րդ սխեմաներով խնձորենու լվիճների, ծաղկակերի և պտղակերի դեմ պայքար կազմակերպելիս կբացառվեն ինսեկտոակարիցիդների դիմացկունության առաջացման հնարավորությունները: Հավելյալ շահույթը վերոնշյալ տարբերակներում համապատասխանաբար կազմել է՝ 1780,3 և 2449,3 հազ.դրամ:

Աղյուսակ 2.

Խնձորենու Այրոռեդ սորտի բերքատվությունը, գ/հա

Հ/Հ	Տարբերակները	Բերքատվությունը, գ/հա			Բերքի հավելումը ստուգիչի նկատմամբ, գ/հա
		Ապրանքային բերքը	Ոչ ապրանքային բերքը	Ընդամենը	
1	Ստուգիչ (առանց սրսկման)	13,1	95,6	108,7	-
2	Կարատե ԽԷ (0,4լ/հա)+ կարատե ԽԷ (0,4լ/հա)+ կարատե ԽԷ (0,4լ/հա)+ կարատե ԽԷ (0,4լ/հա) (չափանմուշ)	129,2	33,2	162,4	53,7
3	Ագրոֆոս ԽԷ (2լ/հա)+դեցիս Պրոֆի ԽԷ (0,5լ/հա)+կարատե ԽԷ (0,4լ/հա)+ նուրելլ Դ ԽԷ (1լ/հա)	164,8	21,3	186,1	77,4
4	Մովենտո ԽԿ (1լ/հա)+դանիտալ ԽԷ (1լ/հա)+ֆոսբան ԽԷ (3 լ/հա)+ նուրելլ Դ ԽԷ (1լ/հա)	199,7	20,1	189,8	81,1

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. ԱՀ նախալեռնային գոտու պայմաններում խնձորենու այգիները վնասում են 38 տեսակ վնասատուներ, որոնցից 2-ը պատկանում են սարդակերպների, 36-ը՝ միջատների դասին:

2. Հետազոտությունների տարիներին այգիներին զգալի վնաս են հասցրել խնձորենու պտղակերը (վարակվածությունը կազմել է 57,8%), ծաղկակերը (վարակվածությունը կազմել է 39,4%), կանաչ և բրդապատ լվիճները (վարակվածությունը կազմել է 38,5%):

3.Հաշվարկման բոլոր ժամկետներում չորրորդ տարբերակը (Մովենտո ԽԿ (1լ/հա)+դանիտալ ԽԷ (1լ/հա)+ֆոսբան ԽԷ (3 լ/հա)+նուրելլ Դ ԽԷ (1լ/հա)) կենսաբանական արդյունավետությամբ գերազանցել է մնացած տարբերակներին, այդ թվում չափանմուշային կարատեյի ցուցանիշներին:

4.Փորձարկված տարբերակները ստուգիչի նկատմամբ ապահովել են 53,7-81,1ց/հա բերքի հավելում: Առավել բարձր բերք ստացվել է 4-րդ տարբերակում՝ 189,8ց/հա, որը 3-րդ տարբերակը գերազանցել է 3,7ց/հա-ով:

5. Հավելյալ շահույթի առավելագույն ցուցանիշ է գրանցվել 4-րդ տարբերակում, որը կազմել է 2449,31 հազ.դրամ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆԸ

1.Խնձորենու կանաչ և բրդապատ լվիճների, ծաղկակերի ու պտղակերի դեմ արդյունավետ պայքար կազմակերպելու համար, առաջարկվում է կիրառել մովենտո ԽԿ (1լ/հա) + դանիտալ ԽԷ (1լ/հա) + ֆոսբան ԽԷ (2լ/հա) + նուրելլ Դ ԽԷ (1լ/հա) կամ ագրոֆոս ԽԷ (2լ/հա)+ դեցիս պրոֆի ԽԷ (0,5լ/հա)+ կարատե ԽԷ (0,4լ/հա)+ նուրելլ Դ ԽԷ (1լ/հա) տարբերակներից մեկը:

2.Ցանկալի է ըստ տարիների նշված տարբերակները կիրառել փոխեփոխ:

Գրականություն

1. 2021 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվություն:
2.Գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման նորմերն ու ռեժիմները Հայաստանի Հանրապետության ոռոգելի հողատարածքների համար, 2007, էջ 162:
3. Մարգարյան Ա.Ե., Շահինյան Հ.Ն., Պտղաբուծություն, Եր., 1976, 559 էջ:
4. Տեր-Գրիգորյան Ա., Սարգսյան Ս.- Պտղատու ծառատեսակների վնասակար էնտոմոֆաունա և պայքար, Եր., 2021, 264 էջ:
5. Խաչատրյան Ա.Ռ., Ագրոքիմիական հետազոտությունների մեթոդներ, Եր., 2002, 237 էջ:
6.Рекомендуемые уровни потребления пищевых и биологически активных веществ: Методические

рекомендации. МР 2.3.1.1915-04. – М.: Федеральный центр Госсанэпиднадзора Минздрава России, 2004. – 28 с.,
7. Колесова Д.А., Интегрированная защита яблони // Садоводство и виноградарство. 1992, N 3, с. 7-11.
8. Энциклопедия насекомых (Определители насекомых) (narod.ru)

Նյութը ներկայացվել է 25.04.2023,
գրախոսման է ուղարկվել 19.06.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023։
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, կ.գ.դ. Հ.Գ.Գալստյանը։

ՀՏԴ 581.8

Բուսաբանություն

Կարինե ԲԱԼԱՅԱՆ
ԱրՊՀ կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ.
E-mail: balayan-karine@mail.ru

Արթուր ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԱրՊՀ կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
E-mail: aveartur64@mail.ru

Սոնա ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԱրՊՀ կենսաբանության և քիմիայի ամբիոնի ասիստենտ
E-mail: sona_82@mail.ru

Ռոզա ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
Շուշիի տեխնոլոգիական համալսարանի դասախոս
E-mail: rozakostandyan67@mail.ru

Աննա ՍԻՄՈՆՅԱՆ
ԱրՊՀ մագիստրոս
E-mail: anna.simonyan.17@mail.ru

ՍԻՐՏ - ԱՆՈԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՐՈՇ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԴԵՂԱԲՈՒՅՍԵՐԸ, ՆՐԱՆՑ ՄԱՆՐԱԴԻՏԱԿԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդվածում ներկայացվում են սիրտ-անոթային համակարգի որոշ հիվանդությունների դեպքում լայնորեն կիրառվող դեղատու բույսերի տեսակային բազմազանությունը, նրանց կառուցվածքային առանձնահատկությունները և որոշ ներկայացուցիչների մանրադիտակային ուսումնասիրությունների արդյունքները: Ներկայումս

սիրտ-անոթային հիվանդությունների կանխարգելումը համարվում է առողջապահության ոլորտում հիմնական բժշկասոցիալական խնդիրը: Սրտի և արյան անոթների հիվանդությունները տնտեսապես զարգացած երկրների բնակչության վաղաժամ մահվան, հաշմանդամության և ժամանակավոր անաշխատունակության պատճառ են հանդիսանում: Սիրտ-անոթային հիվանդությունների բուժման համար հաճախ օգտագործվում են դեղաբույսերի պատրաստուկներ: Հանգստացնող ազդեցություն ունեցող դեղաբույսերը կարող են նվազեցնել նյարդային լարվածության, սթրեսի, հոգեբանական անկայունության պատճառով բարձրացած արյան ճնշումը: Սիրտ-անոթային համակարգի որոշ հիվանդությունների դեպքում դեղատու բույսերից ընդգրկվել են հետևյալ ներկայացուցիչները՝ ալոճենի (Crataegus L.), մասրենի (Rosa L.), նռնենի (Punica L.), բալենի (Cerasus L.), կիտրոն (Citrus L.), պոմելո (Citrus maxima L.), ինչպես նաև նեխուր (Apium L.), բազուկ (Beta L.), ռեհան (Ocimum L.), ավոկադո (Persea americana L.), ակտինիդիա (Actinidia L.), ցեյլոնի դարչին (Cinnamomum verum L.) և այլն: Նշված դեղաբույսերը պարունակում են վիտամիններ, ալկալոիդներ, եթերայուղեր և այլն, որոնք օգտակար են մարդու առողջության պահպանման ու վերականգնման համար:

***Բանալի բառեր՝** աթերոսկլերոզ, հիպերտոնիա, խոլեստերին, դեղաբույսեր, ֆիտոթերապիա, նեխուր, պոմելո, ավոկադո, ակտինիդիա, դարչին:*

К. Балаян, А. Аветисян, С. Григорян,
Р. Костандян, А. Симонян

МИКРОСКОПИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ ЛЕКАРСТВЕННЫХ РАСТЕНИЙ ПРИМЕНЯЕМЫХ ПРИ НЕКОТОРЫХ ЗАБОЛЕВАНИЯХ СЕРДЕЧНО-СОСУДИСТОЙ СИСТЕМЫ

В работе представлено видовое разнообразие лекарственных растений, широко применяемых при некоторых заболеваниях сердечно-сосудистой системы, особенности их строения и результаты микроскопических исследований некоторых представителей. На сегодняшний день сердечно- сосудистые заболевания являются главной медико-социальной проблемой в области здравоохранения.

Болезни сердца и сосудов являются причиной преждевременных летальных исходов, инвалидности и временной нетрудоспособности среди населения экономически развитых стран. Для лечения сердечно-сосудистых заболеваний часто используются препараты из лекарственных растений. Травы с успокоительным действием позволяют сократить давление по причине нервного напряжения, стрессов, психологической нестабильности. При некоторых заболеваний сердечно-сосудистой системы были включены следующие лекарственные растения: боярышник *(Crataegus* L.*)*, шиповник (*Rosa* L.), вишня (*Cerasus* L.), лимон (*Citrus* L.), помело (*Citrus maxima* L.), гранат *(Punica* L.), а также сельдерей (*Apium* L.), свёкла (*Beta* L.), базилик (*Ocimum* L.), авокадо (*Persea americana* L.), актинидия (*Actinidia* L.), коричник цейлонский (*Cinnamomum verum* L.) и др.. Исследованные лекарственные травы содержат витамины, алкалоиды, эфирные масла и др., полезные для поддержания и восстановления здоровья человека.

Ключевые слова: *атеросклероз, гипертония, холестерин, лекарственные травы, фитотерапия, сельдерей, помело, авокадо, актинидия, корица.*

K. Balayan, A. Avetisyan, S. Grigoryan, R. Kostandyan, A. Simonyan

MICROSCOPIC STUDIES OF MEDICINAL PLANTS USED IN SOME DISEASES OF THE CARDIOVASCULAR SYSTEM

The paper presents the species diversity of medicinal plants widely used in certain diseases of the cardiovascular system, the features of their structure and the results of microscopic studies of some representatives. Today, cardiovascular diseases are the main medical and social problem in the field of health care. Diseases of the heart and blood vessels are the cause of premature deaths, disability and temporary disability among the population of economically developed countries. For the treatment of cardiovascular diseases, preparations from medicinal plants are often used. Herbs with a sedative effect can reduce pressure due to nervous tension, stress, psychological instability. For some diseases of the cardiovascular system, the

following medicinal plants have been included: hawthorn (*Crataegus* L.), rose (*Rosa* L.), cherry (*Cerasus* L.), lemon (*Citrus* L.), pomelo (*Citrus maxima* L.), pomegranate (*Punica* L.), as well as celery (*Apium* L.), beetroot (*Beta* L.), basil (*Ocimum* L.), avocado (*Persea americana* L.), actinidia (*Actinidia* L.), ceylon cinnamon (*Cinnamomum verum* L.) and others. The studied medicinal herbs contain vitamins, alkaloids, essential oils, etc., useful for maintaining and restoring human health.

Key words: *atherosclerosis, hypertension, cholesterol, medicinal herbs, phytotherapy, celery, pomelo, avocado, actinidia, cinnamon.*

Սիրտ-անոթային համակարգի հիվանդությունները սրտի և արյունատար համակարգի հիվանդությունների խումբ են, որոնց մեջ են մտնում սրտի իշեմիկ հիվանդությունը, ռևմոկարդիտը (սրտամկանի և սրտի փականների վնասվածքը՝ ռևմատիզմի հետևանքով), գլխուղեղի անոթների հիվանդությունները, սրտի բնածին արատները, թրոմբոզները և այլն: Եթե ԱՄՆ-ում սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների պատճառով մահերը կազմում են բոլոր մահերի մոտ 34%-ը, ապա Հայաստանում, ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների, դրանք կազմում են բոլոր մահերի մոտ 50%-ը: Քաղաքակրթության զարգացմանը զուգընթաց սրտային հիվանդությունները «երիտասարդանում» են [1]:

Աշխատանքն արդիական է, քանի որ սիրտ-անոթային համակարգի հիվանդությունները համարվում են 21-րդ դարի մեծ չարիք ու մարդկանց մահացության պատճառների առաջատարների թվին են պատկանում, նկատվում է նաև այդ հիվանդության «երիտասարդացում»: Ուստի նշված համակարգի հիվանդություններից խուսափելու համար պետք է կարողանալ հատուկ ուշադրություն դարձնել կանխարգելման տարբեր միջոցներին, հատկապես դեղաբույսերի միջոցով կանխարգելմանը: Ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում ու Արցախում առավել տարածված են աթերոսկլերոզը և հիպերտոնիան:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների կանխարգելման ժամանակ օգտագործվող դեղաբույսերի տեսակային բազմազանությունն ու նրանց կառուցվածքային առանձնահատկությունները: Սիրտ-անոթային համակարգի հիվանդություններ ձեռք բերելու գլխավոր ռիսկային գործոններն են սխալ սնունդը, ֆիզիկական ակտիվության պակասը և ծխախոտը: Սթրեսները նույնպես նպաստում են անոթների զարկերակային համակարգի վնասմանը և աթերոսկրելոզի զարգացմանը:

Սիրտ-անոթային համակարգի հիվանդությունները, ինչպես նաև շատ այլ նենգ հիվանդություններ, զարգանում են շատ «աննկատ», իսկ մենք դրանց մասին իմանում ենք միայն այն ժամանակ, երբ հիվանդության հետևանքներն ու զարգացումները բավականին լուրջ բնույթ են կրում: Էկոլոգիայի անբարենպաստ պայմանները, նյարդային լարվածությունը, սթրեսային վիճակները ոչ ոքի համար էլ, բնականաբար, առողջարար չեն և վատ են անդրադառնում սրտի վրա: Մեր կենսակերպը ևս մեծ դեր ունի՝ հաճախ ոչ ճիշտ սնվելը, բարեկեցիկ կյանքին ձգտելու մեր ցանկությունները դարձնում են մեզ ավելի անշարժ:

Կարևոր գործոններ են նաև երկրում տիրող պատերազմական իրավիճակը, սոցիալ-տնտեսական մթնոլորտը, ծանր աշխատանքը, նյարդերը, հանգստի պակասը… Գուցե այս պատճառով են սիրտ-անոթային համակարգի հիվանդությունները տարածված հենց համեմատաբար «անապահով» երկրներում: Այդպիսի երկրներում նման հիվանդությունների կանխարգելում էլ, որպես կանոն, չկա, ինչն էլ ավելի է մեծացնում նրանց զարգացման ռիսկը: Սրտի և անոթների հիվանդությունների աճը բնորոշ է զարգացած, նյարդահոգեկան բարձր լարվածությամբ աչքի ընկնող արդյունաբերական երկրներին [3]:

Աթերոսկլերոզը (երբեմն այս հիվանդությունը անվանում են «կյանքի ժանգ») զարկերակների ախտահարումն է, որի ժամանակ զարկերակների ներքին մակերեսին առաջանում են ճարպային նյութ (հատկապես խոլեստերին և դրա եթերները) պարունակող դեղնավուն թիթեղիկներ (հաստուկներ): Դրա հետևանքով զարկերակների լուսանցքը նեղանում է և դժվարացնում արյունահոսքը: Անոթների պատերը կորցնում են առաձգականությունը, և դժվարանում է թթվածնի ու սննդանյութերի մատակարարումն օրգաններին: Դրա հետևանքով առաջանում է հյուսվածքների թթվածնաքաղց, որն ուղեկցվում է ցավերով [2]:

Սխալ սնվելու հետևանքով մեր անոթների պատերին խարամներ են առաջանում, որոնք մեզ հայտնի են *խոլեստերինային թիթեղիկներ* անունով: Դրանք հիմնականում առաջանում են կենդանական սննդի, յուղոտ մսի, ճարպի, սերուցքային կարագի, բարձր յուղայնություն ունեցող կաթնամթերքի հետևանքով: Խոլեստերինային թիթեղիկների պատճառով անոթների լուսանցքերը նեղանում են ու դառնում դժվարանցանելի: Այս երևույթը կոչվում է *աթերոսկլերոզ*, ինչի պատճառով արյունն անոթներով չի շրջանառվում, ինչպես պետք է իրականում լիներ, այլ արյան հոսքը դանդաղում է՝ ճանապարհին հաղթահարելով բազում «խոչընդոտներ»: Դա էլ իր հերթին հանգեցնում է արյան բարձր ճնշման, թուլացնում է հիշողությունը, նվազում է աշխատունակությունը: Հյուսվածքները նույնպես տուժում են, թվարկված պատճառների հետևանքով հյուսվածքներ մատակարարվող թթվածինն ու սննդարար նյութերը լիարժեք տեղ չեն հասնում: Մի խոսքով, հասկանալի է, որ

երբ անոթները մաքրվեն խարամներից, մեր օրգանիզմը կաշխատի լիարժեք, իր հնարավորությունների ու կարողությունների ողջ հզորությամբ: Երբ անոթները մաքրվեն, դա անմիջապես կանդրադառնա նաև մեր ինքնազգացողության ու արտաքին տեսքի վրա:

Աթերոսկլերոզի զարգացմանը նպաստում են ոչ ճիշտ սնվելը, հատկապես կենդանական ճարպերի գերօգտագործումը, նյարդային լարվածությունը, նստակյացությունը, մկանային գործունեության անբավարարությունը և այլ գործոններ: Միաժամանակ արյան պլազմայում խոլեստերինի, լիպոիդների և լիպոպրոտեիդների քանակության մեծացումը ճնշում է հակամակարդիչ համակարգիը ու նպաստում մակարդուկների առաջացմանը: Վերջիններս խցանում են կամ նեղացնում անոթները, վնասում սրտի պսակաձև անոթները, նպաստում նրանց կծկանքին և պսակաձև անբավարարության զարգացմանը նույնիսկ ինֆարկտին: Նշված բոլոր գործընթացներն առաջացնում են ուժեղ գլխացավեր, գլխապտույտ, հիշողության թուլացում, ներքին արգելակում, ընդհուպ ուշաթափություն և սուր ցավեր սրտի շրջանում:

Խոլեստերինը սովորաբար բաժանվում է երկու տեսակի՝ «վատ» և «լավ»: Երկու տեսակներն էլ գտնվում են արյան պլազմայում՝ լիպոպրոտեինների բաղադրության մեջ: «Լավ» խոլեստերինը բարձր խտության լիպոպրոտեինների պայմանական անվանումն է: Խոլեստերինի այս տեսակի հիմնական գործառույթն ավելորդ խոլեստերինը վերամշակման համար արյան միջից լյարդ տեղափոխելն ու հետագայում օրգանիզմից դուրս բերելն է, ուստի խոլեստերինի այս տեսակը պաշտպանում է օրգանիզմը լուրջ հիվանդություններից և մաքրում է անոթների ներքին պատերը: Ի տարբերություն «լավ» խոլեստերինի՝ «վատ» խելեստերինը կուտակվում է զարկերակների պատերին՝ առաջացնելով խցանումներ: Այն միանում է ապոպրոտեինների հետ՝ առաջացնելով ճարպասպիտակուցային նյութեր՝ ցածր խտության լիպոպրոտեիններ: Առողջության համար վտանգավոր է համարվում հենց այս խոլեստերինի բարձր մակարդակը: Մարդու արյան մեջ խոլեստերինի մակարդակը կարող է տատանվել 3,6 մմոլ/լ-ից 7,8 մմոլ/լ-ի միջև [4]:

Սույն աշխատանքի ուսումնասիրության մեթոդներից են՝ հերբարիումային, նկարագրական, մանրադիտակային ուսումնասիրությունների և ֆիտոթերապիայի: ԱրՊՀ կենսաբանության և քիմիայի ամբիոնի լաբորատորիայում կատարվել են մանրադիտակային ուսումնասիրությունները թվային մանրադիտակի օգնությամբ: Հերբարիումային մեթոդի շնորհիվ կատարվել են աշխատանքում ընդգրկված դեղաբույսերի չորացումը: Ֆիտոթերապիայի կամ բուսաբուժության մեթոդի շնորհիվ սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների կանխարգելման համար ուսումնասիրվել են դեղատու բույսերի մի շարք բաղադրատոմսեր:

Դեղաբուսական հումքից տնային պայմաններում կարելի է պատրաստել թեյեր, սպիրտային թուրմեր, ջրաթուրմեր, եփուկներ, թարմ հյութեր և այլն:

Ստորև ներկայացվում են սիրտ-անոթային համակարգի որոշ հիվանդությունների դեպքում լայնորեն կիրառվող որոշ դեղատու բույսերի տեսակային բազմազանությունը, նրանց կառուցվածքային առանձնահատկությունները և մանրադիտակային ուսումնասիրությունների արդյունքները:

Բալենու (Вишня, *Cerasus* L.) պտուղները հակաօքսիդանտների ու հակաբորբոքային ազդեցությամբ օժտված բաղադրիչների հարուստ աղբյուր են: Այդ նյութերը դանդաղեցնում են ծերացման գործընթացն ու պաշտպանում քրոնիկ հիվանդություններից, այդ թվում նաև սիրտ-անոթային հիվանդություններից, շաքարային դիաբետից, ուռուցքներից, ծերունական թուլամտությունից ու ճարպակալումից: Բալի հյութի գործածությունը նվազեցնում է խոլեստերինի ընդհանուր ցուցանիշները, այդ թվում նաև «վատ» խոլեստերինի մակարդակը:

Բազուկն (Свёкла, *Beta* L.) ունի մի շարք օգտակար հատկություններ աթերոսկլերոզի և արյան բարձր ճնշման դեպքում: Գարնանը սննդի մեջ են օգտագործում մատղաշ տերևներն ու կոթունները, իսկ աշնանը և ձմռանը՝ արմատապտուղները: Բազուկի բաղադրության առատ մագնեզիումը նպաստում է աթերոսկլերոզի ու արյան բարձր ճնշման կարգավորմանը: Այս բանջարեղենով պատրաստուկներն օրգանիզմից դուրս են բերում վատ խոլեստերինը, իսկ բաղադրության յոդի ու կոբալտի շնորհիվ բարելավվում է հիշողությունը, ուշադրության կենտրոնացումը:

Կիտրոնի (Лимон, *Citrus* L.) պտուղներում պարունակող ֆլավանոիդներն իջեցնում են արյան ճնշումը և պաշտպանում արյունատար անոթները: Հյութը հարուստ է կիտրոնաթթվով, պարունակում է բազմաթիվ մակրո և միկրոտարրեր, C, A, B խմբի վիտամիններ[4]: Կիտրոնն օժտված է ընդհանուր կազդուրիչ, հակաբորբոքային, հակամանրէային, հակասկլերոտիկ և վերքերը վերականգնող ազդեցությամբ: Եթերային յուղն ունի արտահայտած հակավարակային ազդեցություն, կիրառվում է արոմաթերապիայում, ունի հակաայտուցային, խորխաբեր, հիպոլիպիդեմիկ ազդեցություն (իջեցնում է խոլեստերինի պարունակությունն արյան մեջ):

Սզնու (Боярышник, *Crataegus* L.) պտուղների պատրաստուկները (թուրմ, եփուկ, ոգեթուրմ) լայնորեն կիրառվում են սիրտ-անոթային համակարգի, հիպերտոնիայի դեպքում որպես հանգստացնող միջոց: Պտուղներն ու ծաղկաբույլերը հնուց օգտագործվում են որպես փորձված ժողովրդական միջոց և կիրառվում սրտի արատի, անքնության, աթերոսկլերոզի, գլխուղեղի արյան մատակարարման կարգավորման ժամանակ: Կոկոնները և ծաղիկներն ունեն թույլ յուրահատուկ հոտ և դառնավուն համ: Ծաղիկներից և տերևներից պատրաստում են թեյ:

Դարչինը դափնազգիների ընտանիքին պատկանող ցեյլոնյան դարչնածառի (Корица, Коричник цейлонский, *Cinnamomum verum*) չորացրած կեղևն է, որն օգտագործում են որպես համեմունք: Դարչինը նպաստում է արյան մեջ «վատ» խոլեստերինի մակարդակի նվազեցմանը: Աշխատանքային օրվա սկզբին դարչինով մի բաժակ թեյ խմելու սովորությունը կարող է զգալիորեն նվազեցնել սիրտ-անոթային հիվանդությունների զարգացման վտանգը: Նույնիսկ նրանց համար, ովքեր արդեն սրտի կաթված են տարել, դարչինը կարող է օգնել ամրապնդել սրտամկանները և նվազեցնել կրկնվող ինֆարկտի վտանգը: Ինչպես և ցանկացած այլ, նույնիսկ ամենաօգտակար մթերքի դեպքում դարչինը ևս չի կարելի չարաշահել:

Ռեհանն (Базилик, *Ocimum* L.) ամենահզոր հակաօքսիդանտն է և մարդու օրգանիզմի անոթներից մաքրում է «վատ» խոլեստերինը: Խոլեստերինի բարձր մակարդակն այսօր «ամենանորաձև» խնդիրներից է, որը կարող է հանգեցնել սրտի հիվանդության: Որպես կանոն, այդ խնդրի դեմ հիմնականում պայքարում են դեղորայքով: Իսկ մեր բնությունը, ինչպես ավելի ու ավելի ենք համոզվում, ունի յուրաքանչյուր խնդրի լուծումը, բնական միջոցը, որը, ի դեպ, շատ ավելի արդյունավետ է խոլեստերինի մակարդակի իջեցման համար: Այսինքն, ռեհանը բնական հզոր հակաօքսիդանտ է:

Կիվին, ակտինիդիան (Актинидия, *Actinidia* L.) անհրաժեշտ է օգտագործել առավոտյան՝ նախաճաշից առաջ: Այն պարունակում է ավելի շատ C վիտամին, քան նարինջը կամ կիտրոնը: Բացի այդ, կիվին հարուստ է օրգանական թթուներով, մագնեզիումով, պեկտիններով, ֆոսֆորով, կալիումով, երկաթով: Կիվիի հաճախակի օգտագործումը նպաստում է էնդորֆինի՝ երջանկության հորմոնի արտադրությանը: Ավելին, կիվին կարգավորում է նաև արյան ճնշումը, սիրտ-անոթային համակարգի աշխատանքը: Այս տրոպիկական միրգն ունի նաև հակաուռուցքային, հակաօքսիդանտ հատկություն:

Մասուրը (Роза, *Rosa* L.) լայնորեն կիրառվում է ժողովրդական բժշկության մեջ որպես բուժական միջոց տարբեր հիվանդությունների դեմ: Մասրենու ծաղկաթերթերից կարելի է ստանալ էքստրակտ սրտամկանի բորբոքային պրոցեսների բուժման համար: Մասուրը լավագույն հակաբորբոքիչ միջոց է:

Նուռը (Гранат, *Punica* L.) կամ նռան հյութը հզոր անոթամաքրիչ է: Մրգերի մեջ նուռն առաջատար է հակաօքսիդանտների պարունակությամբ. երեք անգամ գերազանցում է կանաչ թեյը կամ նարինջը: Դեռ հնում նռան հյութն օգտագործվել է սիրտ-անոթային հիվանդությունները կանխարգելելու համար: Նուռը համարվում է բնական ասպիրին՝ թույլ չի տալիս արյան մակարդումն ու արյան գնդիկների խցանումների առաջացումը արյունատար անոթներում: Այն օժտված է նաև բարձր ճնշումն իջեցնելու հատկությամբ: Նռան հյութը պայքարում է մարմնում առկա ազատ ռադիկալների դեմ և կանխում քաղցկեղի առաջացումը:

Ավոկադոյի (Авокадо, Персея американская, *Persea americana* L.) պտուղները հարուստ են վիտամիններով և կարևոր հանքային նյութերով: Ավոկադոյի պտուղների մեջ պարունակվող ֆոլաթթուն նվազեցնում է խոլեստերինի մակարդակն արյան մեջ: Պտուղները հանդիսանում են նաև հակասթրեսային և հակաքաղցկեղային միջոց:

Պոմելոն (Помело или помпельмус, *Citrus maxima* L.) ցիտրուսային միրգ է, որի օգտագործումը լայն տարածում է գտել մեզ մոտ: Հանդիպում է տարբեր գույների՝ բաց կանաչից մինչև դեղնավարդագույն: Պտուղները երկշերտ կեղևով են: Դրա կեղևը բավական հաստ է ու դառը: Արտաքին կեղևը դեղին կամ նարնջագույն է, ունի եթերային յուղերով լցված զետեղարաններ, որոնց վնասվելուց պտուղները կորցնում են բույրը և արագ փչանում: Երկրորդ շերտը սպիտակ է, դառը, պարունակում է հեսպերիդին գլյուկոզիդ:

Եթերայուղերի առկայությունը մասրենու ծաղիկներում, պոմելոյի ու ավոկադոյի պտուղներում ուսումնասիրվել է թվային մանրադիտակի միջոցով՝ X150 խոշորացմամբ և ներկայացվում է ստորև բերված նկարում:



ա



Բ



Գ

Նկ. Ա – Եթերայուղերի առկայությունը մասրենու ծաղկաթերթերում՝ թվային մանրադիտակի X 150 խոշորացմամբ, Բ - Եթերայուղերի առկայությունը ավոկադոյի պտղամսում՝ թվային մանրադիտակի X 150 խոշորացմամբ, Գ - Եթերայուղերի զետեղարանների առկայությունը պոմելոյի պտուղների կեղևում՝ թվային մանրադիտակի X150 խոշորացմամբ:

Նեխուրը (*Apium* L.) կամ քյարավուզն իր բուժական հատկություններով առանձնանում է, քանի որ պարունակում է վիտամիններ C, PP, B_1, B_2, շաքարներ, եթերայուղ, կալիումի, կալցիումի, ֆոսֆորի աղեր և այլն [5]: Նեխուրի ցողունը, տերևները և արմատն օգտագործում են օրգանիզմից տոքսինների դուրս բերման համար: Նեխուրը նաև հակաօքսիդանտ է, ուստի կանխում է մեր օրգանիզմի վրա վտանգավոր ազատ ռադիկալների ունեցած ազդեցությունը: Նեխուրն ունի նաև միզամուղ հատկություն, այն կարգավորում է նյութափոխանակությունը: Նեխուրի հյութն արդյունավետ է նաև արյան բարձր ճնշման դեպքում: Հետազոտությունների արդյունքում կարող ենք նշել, որ հետևյալ բաղադրատոմսն իջեցնում է արյան բարձր ճնշումը. մեկ շաբաթ շարունակ ամեն օր նեխուրի հյութ խմելով՝ կնվազեցվի արյան ճնշումը: Լավագույն արդյունքի հասնելու համար, մեկ շաբաթ պետք է խմել հյութը, ապա 3 շաբաթ դադար տալ, հետո կրկնել: Նեխուրի կիրառումը դրական արդյունք է տալիս սիրտ-անոթային հիվանդությունների դեպքում, ինչպես նաև համարվում է աթերոսկլերոզի հրաշալի կանխարգելիչ միջոց:

Այսպիսով, արդի ժամանակաշրջանում մտավոր գործունեությունն աստիճանաբար դուրս է մղում ֆիզիկական աշխատանքը: Դրա հիմնական պատճառն ավտոմատացված տեխնոլոգիաների ներդրումն է աշխատանքային գործունեության տարբեր բնագավառներում: Սակայն որոշ մտավոր բնագավառների աշխատողների (բժիշկներ, մանկավարժներ) գործունեությունը կապված է նյարդային մեծ լարվածության հետ, ուստի նրանք ենթակա են սիրտ-անոթային հիվանդությունների: Սակավաշարժությունը կամ

նստակյաց կենսակերպը հիմնականում հատուկ է քաղաքի բնակիչներին և բացասաբար է ազդում մարդկանց առողջության վրա: Ճարպակալումը ևս ռիսկի գործոն է սիրտ-անոթային հիվանդությունների զարգացման համար: Անհատականությունը նույնպես ազդում է սիրտ-անոթային հիվանդությունների առաջացման վրա: Այն անձինք, ովքեր ունեն մշտապես ներքին լարվածություն, պատվախնդիր են, զգալիորեն ենթակա են սրտային սակավարյունային հիվանդության զարգացման:

Գրականություն

1.Մինասյան Ս. Մ., Ադամյան Ծ. Ի., Առողջագիտություն, Եր., 2008 թ., էջ 144:
2.Мазнев Н., Новейшая энциклопедия лекарственных растений, М., 2008, с. 208.
3.Мартиросян А., Энциклопедия лекарственных растений и секреты фитотерапии, Ер., 2010, с. 115.
4.Нужный В. П., Рожанец В. В., Ефремов А. П., Фитотерапия, М., 2009, с. 128.
5.Пронченко Г. Е., Лекарственные растительные средства. М. 2002. с. 152.

Նյութը ներկայացվել է 8.05.2023,
գրախոսման է ուղարկվել 19.06.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, կ.գ.դ. Հ.Գ.Գալստյանը:

ՀՏԴ 57(159.91)

Հոգեֆիզիոլոգիա

Արտյոմ ՍԱՀԱԿՅԱՆ
Արցախի պետական համալսարանի կենսաբանության և քիմիայի ամբիոնի հայցորդ, Արցախի գիտական կենտրոնի ֆիզիոլոգիայի լաբորատորիայի գիտաշխատող

ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԵՎ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հոդվածում ուսումնասիրվել են Արցախյան պատերազմի մասնակիցների հոգեբանական վիճակի մի քանի ասպեկտներ, գնահատվել են պատերազմական գործողությունների հետևանքով ծագած հոգետրավմատիկ գործոնների ազդեցությունը և դրանց հոգեբանական հետևանքները: Իրականացվել է մասնակիցների կյանքի որակի գնահատում «QofL SF-36» թեստով: Հետազոտվողների խմբերում բացահայտվել է դեպրեսիայի, աստենիայի, հիպոխոնդրիայի արտահայտվածություն, տագնապայնության բարձր մակարդակ պատերազմական գործողություններին չմասնակցած ստուգիչ խմբի անհատների համեմատությամբ: Հայտնաբերվել է ֆիզիկական և հոգեկան առողջության բաղադրիչների արժանահավատ ցածր մակարդակ՝ ստուգիչ խմբի համեմատ: Բացահայտվել է, որ պատերազմի մասնակիցներից առավել խոցելի վիճակում են գտնվում տարբեր աստիճանի և բարդության վիրավորում ստացած մասնակիցները: Պարզվել է, որ մասնակիցների մոտ ի հայտ եկել կյանքի որակի էական փոփոխություններ, ֆիզիկական ակտիվության և գործառության նվազում, հոգեկան առողջության խաթարում պայմանավորված հետտրավմատիկ սթրեսով և հոգեհուզական գերլարվածությամբ: Դիտարկվում է խաղաղ պայմաններում մարտական գործողությունների մասնակիցների սոցիալ-հոգեբանական վերականգնման

համար համապատասխան միջոցառումների և հանձնարարականների մշակման անհրաժեշտությունը:

Բանալի բառեր՝ պատերազմական գործողություններ, հոգետրավմատիկ վիճակ դեպրեսիա, աստենիա, հիպոքոնդրիա, տագնապայնության մակարդակ, կյանքի որակ

А. Саакян

ИЗУЧЕНИЕ ПСИХОЛОГИЧЕСКОГО СОСТОЯНИЯ И КАЧЕСТВА ЖИЗНИ УЧАСТНИКОВ АРЦАХСКОЙ ВОЙНЫ

В работе изучены некоторые аспекты психологического состояния участников Арцахской войны, оценено влияние психотравмирующих факторов, вызванных боевыми действиями, и их психологические последствия. Оценка качества жизни участников проводилась с помощью теста «QofL SF-36». Выявлен более высокий уровень депрессии, астении, ипохондрии, тревожности в группах испытуемых по сравнению с лицами контрольной группы, не участвовавшими в боевых действиях. Выявлены достоверно более низкие уровни компонентов физического и психического здоровья по сравнению с контрольной группой. Выявлено, что среди участников войны в наиболее уязвимом состоянии находятся участники, получившие ранения разной степени и сложности. У участников боевых действий отмечаются значительные изменения качества жизни, снижение физической активности и работоспособности, нарушение психического здоровья вследствие посттравматического стресса и психоэмоционального перенапряжения. Рассмотрена необходимость разработки соответствующих мероприятий и инструкций по социально-психологической реабилитации участников боевых действий в мирных условиях.

***Ключевые слова**: боевые действия, психотравмирующее состояние, депрессия, астения, ипохондрия, уровень тревожности, качество жизни.*

A. Sahakyan

A STUDY OF THE PSYCHOLOGICAL STATE AND QUALITY OF LIFE OF THE PARTICIPANTS OF THE ARTSAKHIAN WAR

The paper studies some aspects of the psychological condition of the Artsakh war participants, assesses the impact of psycho-traumatic factors caused by military operations and their

psychological consequences. Evaluation of the participants' quality of life was carried out using the "QofL SF-36" test. A higher level of depression, asthenia, hypochondria and anxiety was found in the test groups compared to control group who did not participate in hostilities. The lower levels of physical and mental health components were revealed compared with the control group. It was revealed that among war participants in the most vulnerable state are participants who received injuries of varying degrees and complexity. The war participants have significant changes in the quality of life, a decrease in physical activity and working capacity, mental health disorders due to post-traumatic stress and psycho-emotional overstrain. It is considered the necessity of developing appropriate measures and instructions for the socio-psychological rehabilitation of combatants in peaceful conditions.

Key words: *war operations, psychotraumatic state, depression, asthenia, hypochodria, anxiety level, quality of life*

Պատերազմը աղետալի ազդեցություն է թողնում մարդկանց առողջության և բարեկեցության վրա: Այն հանդիսանում է սթրեսային իրադարձություն յուրաքանչյուր մարդու, հատկապես նրա անմիջական մասնակիցների համար: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ռազմական գործողությունները ավելի շատ մահացության և հաշմանդամության պատճառ են դառնում, քան որևէ լուրջ հիվանդություն [8]: Մեծ կարևորություն է ստանում մարտական գործողությունների ընթացքում և հետպատերազմյան ժամանակաշրջանում մասնակիցների հոգեբանական վիճակի ուսումնասիրությունը, նրանց վարքագծային դրսևորումների և ծագման պատճառների գնահատումը [1,2]: ԱՀԿ վիճակագրությունը ցույց է տվել, որ պատերազմից տուժած շրջանների բնակիչների շրջանում արձանագրվում է հոգեկան վիճակի խաթարումների բարձր աճ և տարածվածություն [11]: Պատերազմական գոտիներում ապրող մարդկանց մոտ դրսևորվում են հոգեկան վիճակի այնպիսի խանգարումներ, ինչպիսիք են, դեպրեսիան, անհանգստությունը, տագնապայնության բարձր մակարդակը, հետտրավմատիկ սթրեսային խանգարումը (PTSD), թմրամիջոցների օգտագործման հակվածության ռիսկը, որոնց տարածվածությունը պատերազմից տուժած բնակչության շրջանում կարող է հասնել մինչև 30-40%: Այդ տարածաշրջաններում մարդկանց մինչև 30%-ի մոտ կարող են դրսևորվել հետտրավմատիկ սթրեսային խանգարման ախտանիշներ [11]: Պատերազմի սթրեսային ազդեցությունը երկար տարիներ կարող է պահպանվել, հանգեցնել մարդկանց կյանքի որակի զգալի անկման [6,7]:

Այսօր, աշխարհի տարբեր մասերում շարունակվող պատերազմների համատեքստում, շատ կարևոր է ուսումնասիրել մարտիկների հոգեբանական

վիճակի վրա պատերազմի բացասական ազդեցության բնույթը և իրական չափերըը: Ելնելով վերոնշյալից՝ սույն հետազոտության նպատակն է հանդիսացել ուսումնասիրել Արցախյան պատերազմի մասնակիցների հոգեբանական վիճակը՝ մի շարք հոգեբանական բնութագրերի համեմատական վերլուծությամբ:

Մեթոդը և նյութը

Հետազոտություններն իրականացվել են Արցախյան պատերազմի մասնակիցների մոտ (83 տղամարդ՝ 18-35 տարեկան), որոնք բաժանվել են 4 խմբի. I խումբ՝ ժամկետային զինծառայողներ, II խումբ՝ ծառայողներ, III խումբ՝ կամավորներ, IV խումբ՝ տարբեր աստիճանի վիրավորում ստացած անհատներ: Ստուգիչ խմբում ընդգրկվել են նույն տարիքային խմբի անձինք, ովքեր չեն մասնակցել ռազմական գործողություններին և չեն բնակվել պատերազմական գործողությունների տարածքում (36 տղամարդ): Արդյունքների համադրելիության համար ուսումնասիրություններն իրականացվել են օրվա միևնույն ժամին (ժամը 11.00-ին) :

Հոգեբանական վիճակն ուսումնասիրելու համար օգտագործվել են համակարգչին ադապտացված հետևյալ հոգեբանական թեստերը.

· Թեյլորի տագնապայնության մակարդակը որոշող թեստը (Taylor Manifest Anxiety Scale): Թեյլորի տագնապայնության մակարդակի ինքնագնահատման թեստի սանդղակը բաղկացած է 50 կետից, որոնցից յուրաքանչյուրը պահանջում է «այո» կամ «ոչ» պատասխան: Ճիշտ կամ սուտ պատասխանները գնահատվում են յուրաքանչյուր կետի համար 0-ից 50 միավոր համակարգով: Գնահատման սանդղակը բաշխվում է հետևյալ կերպ. 41-50 և ավել միավոր՝ տագնապայնության շատ բարձր մակարդակ, 26-40 միավոր՝ տագնապայնության բարձր մակարդակ, 16-25 միավոր՝ միջին մակարդակ (բարձր մակարդակի հակվածություն), 6-15 միավոր՝ միջին մակարդակ, 0–5 միավոր՝ տագնապայնության ցածր մակարդակ [3]:

Թեստի տևողությունը մոտավորապես 10-15 րոպե է:

· Պիշոյի թեստը (Pichot Inventory Pichot Inventory) 39 կետից բաղկացած ինքնագնահատման թեստ է, որը ներառում է երեք ենթակարգեր՝ յուրաքանչյուրում 13 միավոր: Թեստով որոշվում են հոգեբանական վիճակի 3 ասպեկտները (դեպրեսիա, աստենիա և հիպոքոնդրիա): Յուրաքանչյուր կետի համար օգտագործվում են *ճիշտ-սուտ* պատասխանները, հաշվարկվում են *դեպրեսիա, աստենիա և հիպոքոնդրիա* մատնանշող պատասխանները: Սանդղակի տիրույթը կազմում է 0-ից 100 միավոր. 71-100 միավորի դեպքում գնահատվում է դեպրեսիայի, աստենիայի և հիպոքոնդրիայի բարձր մակարդակ, 31-70 միավոր՝ միջին մակարդակ, 0-30 միավոր՝ ցածր մակարդակ [4]: Թեստի տևողությունը կազմում է մոտավորապես 10-15 րոպե:

· «Կյանքի որակ SF-36» թեստ՝ ծրագիր-հարցաշար, որով որոշվում է հետազոտվողների ֆիզիկական և հոգեկան առողջության մակարդակը: SF-36 ծրագրի կառուցվածքը և առանձնահատկությունները հետևյալն են. հարցաթերթի 36 կետերը խմբավորված են ըստ ութ սանդղակների՝ ֆիզիկական գործառություն (PF), ֆիզիկական գործառության դերակատարություն (RF), ֆիզիկական ցավի ընկալունակություն (BP), ընդհանուր առողջության ընկալում (GH), կենսական ակտիվություն (VT), սոցիալական դերի գործառություն (SF), հոգեհուզական դերի գործառույթ (RE) և հոգեկան առողջություն (MH): Հարցման արդյունքները ներկայացված են գնահատականների տեսքով՝ նշված սանդղակներում: Յուրաքանչյուր սանդղակի չափագիծը գտնվում է 0-ից 100 միավորի տիրույթում: Բարձր արժեքները ցույց են տալիս կյանքի որակի բարձր մակարդակ: Թեստի կարևոր առանձնահատկությունն այն է, որ ութ սանդղակների արժեքներով հաշվարկվում են երկու ինտեգրալ բաղադրիչներ՝ ընդհանուր ֆիզիկական առողջության բաղադրիչ՝ PHC (հիմնված PF, RF, BP և GH սանդղակների արժեքների վրա) և հոգեկան առողջության բաղադրիչ MHC (հիմնված VT, SF, RE, MH սանդղակների արժեքների վրա) [5]: Ինտեգրալ բաղադրիչները ընդհանուր բնույթ ունեն և կարևոր դեր են խաղում հետազոտվողների կյանքի որակի ամբողջական գնահատման մեջ:

Վիճակագրական վերլուծություն

Տվյալները ներկայացված են մաթեմատիկական միջին արժեքով և ստադար շեղմամբ (M±SD): Տվյալների բաշխվածության նորմալությունը որոշվել է ըստ Բոնֆերոնի (Bonferroni correction) չափորոշիչի: Միջխմբային տարբերությունների արժանահավատությունը որոշվել է Ստյուդենտի t-չափորոշիչով: Տվյալները արժանահավատ են համարվել $p<0,05$ մակարդակում: Վիճակագրական վերլուծությունները կատարվել են Exsel-16 և GraphPad Prism 5-ի փաթեթների միջոցով:

Արդյունքները և քննարկումը

Ստացված տվյալների վերլուծությունը ցույց տվեց, որ հոգեբանական վիճակը բնութագրող ցուցանիշներն ունեն բարձր արտահայտվածություն պատերազմի մասնակիցների բոլոր խմբերում (նկ.1): Այսպես, դեպրեսիայի, աստենիայի և հիպոքոնդրիայի ցուցանիշները, ստուգիչ խմբի համեմատությամբ, արժանահավատ բարձր են հետազոտվողների չորս խմբերում էլ: Միևնույն ժամանակ նկատվել են հետազոտվողների միջխմբային տարբերություններ. I խմբի՝ ժամկետային զինծառայողների մոտ դեպրեսիայի և աստենիայի ցուցանիշները արժանահավատ ցածր են եղել մյուս խմբերի

համեմատությամբ: Դեպրեսիայի, աստենիայի և հիպոքոնդրիայի առավել բարձր արտահայտվածությամբ առանձնացել է IV խումբը՝ պատերազմում վիրավորում ստացած հետազոտվողները: Տագնապայնության մակարդակը, ստուգիչ խմբի համեմատությամբ, արժանահավատ բարձր է եղել II, III, IV խումբերի մոտ:



	Ստուգիչ խումբ	I_խումբ	II_խումբ	III_խումբ	IV_խումբ
Դեպրեսիա	12	25	34	34	41
Աստենիա	13	30	41	37	44
Հիպոխոնդրիա	12	14	22	16	37
Տագնապայնություն	13	15	20	17	21

Նկար1. Հոգեբանական վիճակը բնութագրող ցուցանիշների հիստոգրամ: Ներկայացված են միջին արժեքի և ստանդարտ շեղման տվյալները: Բերված են սխալմունքի շերտագծերը:

Հոգեբանական հետազոտություններում մեծ ուշադրություն է դարձվում կյանքի որակի ուսումնասիրությանը, որը հնարավորություն է տալիս բացահայտելու նրանց կենսաբժշկական, սոցիալ-տնտեսական և հոգեբանական-հուզական պարամետրերի բնութագրերը: Շատ հետազոտողներ կյանքի որակը համարում են բժշկական և սոցիալական երևույթ, որն արտացոլում է ֆիզիկական, սոմատիկ, հոգեֆիզիոլոգիական առողջությունը [5-7]:

Աղյուսակ 1.

«Կյանքի որակ SF-36» թեստի արդյունքները հետազոտվողների խմբերում M±Sd

	Ստուգիչ խումբ	I_խումբ	II_խումբ	III_խումբ	IV-խումբ
PF	53±4.3	54±4.5	53±5.3	50±7.9 ^	49±9.0 *^
RP	52±5.2	47±8.9 *	49±8.8	45±9.0 **#	47±9.2 *
BP	55±6.4	47±7.8 **	46±9.9 **	47±10 **	46±9.4 **
GH	55±8.6	46±6.6 ***	46±8.1 ***	45±9.2 ***	38±7.5 ***^
VT	56±7.3	53±5.7 *	52±5.6 *	51±9.0 *	48±8.2 **^
SF	50±9.1	44±10 *	46±11	47±8.3	45±9.4 *^
RE	51±7.0	47±9.7 *	46±9.9 *	45±9.7 *	47±10 *^
MH	53±8.5	46±7.5	45±8.0 *	46±6.7	43±6.2 *

Ծանոթագրություն. Յուցանիշների բացատրությունը նայել «Մեթոդը և նյութը» բաժնում:

*Նշանակումներ. *- արժանահավատությունը ստուգիչ և հետազոտական խմբերի միջև*

^-արժանահավատությունը I խմբի և II, III, IV խմբերի միջև

#-արժանահավատությունը II խմբի և III, IV խմբերի միջև

; **; *- համապատասխանաբար p<0,05 p<0,01,p<0,001*

Ինչպես երևում է աղյուսակից, ստուգիչ խմբի ֆիզիկական և հոգևոր առողջության բոլոր ցուցանիշների միջին արժեքները գտնվում են 50% մակարդակում և համապատասխանում են ընդունված նորմատիվային տվյալներին: Հետազոտվողների խմբերում ստուգիչի համեմատ նկատվում են, ֆիզիկական առողջության գրեթե բոլոր ցուցանիշների, բացառությամբ PF-ի (ֆիզիկական գործառություն), արժանահավատ ցածր արժեքներ: PF-ը, որը բնութագրում է ֆիզիկական ակտիվության մակարդակը, ցածր է միայն IV խմբում: Միևնույն ժամանակ, նկատելի է, որ բոլոր խմբերն ունեն RP-ի և BP-ի՝ համապատասխանաբար ֆիզիկական վիճակով պայմանավորված գործառույթային դերի և ֆիզիկական ցավի ինտենսիվության ցածր արժեքներ: Հետազոտվող խմբերում արժանահավատ ցածր է նաև GH-ը՝ ընդհանուր ֆիզիկական վիճակը և ակտիվությունը բնութագրող ցուցանիշը: Հայտնի է, որ BP-ի ցածր արժեքները բնութագրում են ցավի նկատմամբ ցածր

դիմադրողականությունը: Հետևաբար, ֆիզիկական առողջության բաղադրիչների դինամիկան վկայում է, որ հետազոտվողների մոտ առկա է ֆիզիկական ակտիվության և գործառության որոշակի սահմանափակում՝ պայմանավորված ցավի նկատմամբ դիմադրողականության նվազմամբ:

Հոգեկան առողջության վիճակը բնութագրող ցուցանիշների վերլուծությանը ցույց է տվել ստուգիչ խմբի համեմատությամբ VT, SF, RE, MH արժանահավատ ցածր արժեքներ հետազոտվողների բոլոր խմբերում: Նկատվել է նաև որոշ միջխմբային տարբերություններ: Այսպես IV խմբում I խումբի համեմատ դրսևորվել են VT կենսական ակտիվության, SF սոցիալական գործառության, RE հոգեհուզական վիճակի արժանահավատ ցածր արժեքներ: Չնայած MH՝ հոգեկան առողջության ցուցանիշի նվազման տենդենցին, այնուամենայնիվ, միջխմբային արժանահավատ տարբերություններ չեն արձանագրվել: Այսպիսով, հետազոտվողների բոլոր խմբերում նկատվում է հոգեկան վիճակի խաթարումներ, մասնավորապես կենսական ակտիվության նվազում հոգնածության դրսևորումներով, սոցիալական շփումների սահմանափակում, էմոցիոնալ վիճակի որոշակի լարվածություն և վատթարացում: Հոգեկան առողջության MH նվազումը վկայում է, որ հետազոտվողներն ունեն դեպրեսիայի առկայություն, տագնապային ապրումների, հոգեկան ոչ բարեկեցիկ վիճակ:

Հետազոտությունում գնահատվել է նաև ֆիզիկական և հոգեկան առողջության ինտեգրալ բաղադրիչների դինամիկան (նկ. 2) :



Նկար 2. Կյանքի որակ SF-36» թեստի ինտեգրալ ցուցանիշների հիստոգրամ: Ներկայացված են միջին արժեքի և ստանդարտ շեղման տվյալները:

Բերված են սխալմունքի շերտագծերը։ .
***- արժանահավատությունը ստուգիչ և հետազոտական խմբերի միջև**
^-արժանահավատությունը I խմբի և II, III, IV խմբերի միջև

Դիագրամում պատկերված են ֆիզիկական և հոգեկան առողջության բաղադրիչների արժանահավատ տարբերությունները ստուգիչ և հետազոտվողների խմբերի միջև, ընդ որում՝ առավել ցածր արդյունքեր են ցուցաբերել IV խմբի հետազոտվողները։ Այստեղ ուշագրավ է նաև այն փաստը, որ նկատվում են էական տարբերություններ ֆիզիկական և հոգեկան առողջության բաղադրիչների միջև, այսինքն՝ հետազոտվողների մոտ ավելի բարձր է ֆիզիկական ակտիվության, գործառության մակարդակը։

Ամփոփում

Այսպիսով, հոգեբանական վիճակը բնութագրող ցուցանիշների վերլուծությամբ պարզվեց, որ պատերազմի մասնակիցների մոտ հետպատերազմյան ժամանակահատվածում առկա են դեպրեսիայի արտահայտված դրսևորումներ, ասթենիկ վիճակ և տագնապայնության բարձր մակարդակ։ Հիպոքոնդրիա հիմնականում առկա է պատերազմում վիրավորում ստացած հետազոտվողների մոտ։ Հայտնի են աշխատանքներ հակամարտության գոտիներում մասնակիցների և բնակչության հոգեկան առողջության խաթարման, դրանց տարածվածության վերաբերյալ [8,9]։ Ուսումնասիրությունները ցույց են տվել հոգեկան խանգարումների հաճախականության և տարածվածության որոշակի աճ վնասվածքներ և վիրավորումներ ստացած վետերանների շրջանում, որոնք ուղեկցվում են նաև ֆիզիոլոգիական գործառույթների, մասնավորապես, սիրտ-անոթային համակարգի, ինչպես նաև կոգնիտիվ գործընթացների ֆունկցոնալ փոփոխությամբ [9,10]։

Կյանքի որակի բաղադրիչները բացահայտում են առողջական վիճակը և անհատի բավարարվածության աստիճանը սեփական կյանքից, այսինքն՝ անձի ֆունկցիոնալ հնարավորությունները՝ ներառյալ ֆիզիկական, հուզական և սոցիալական կարգավիճակը։ Մեր ստացած արդյունքները վկայում են, որ հետազոտվողները ֆիզիկական առողջության համեմատաբար բարվոք վիճակ ունեն։ Միևնույն ժամանակ նրանց հոգեկան առողջությունը գտնվում է ավելի խոցելի վիճակում, նրանք դժվարություններ են կրում սոցիալական շփումներում, ունեն կենսունակության նվազում, հոգեհուզական լարվածություն, այսինքն՝ նրանց մոտ առկա են հոգեբանական վիճակի խաթարումներ, ինչը հաստատվում է նաև մեր հոգեբանական հետազոտության տվյալներով։ Այս դրսևորումները, ամենայն հավանականությամբ, պայմանավորված են պատերազմի հետևանքով առաջացած հետտրավմատիկ սթրեսային իրավիճակներով։ Որոշ հետազոտություններում ցույց է տրված, որ պատերազմական վիճակների հետևանքով առաջացած հետտրավմատիկ

սթրեսային խանգարումը, հոգեհուզական գերլարվածությունը զուգակցվում կյանքի որակի էականորեն նվազմանը [6,7]:

Այսպիսով, պատերազմական գործողությունները տարբեր կերպ են ազդում մասնակիցների վրա: Մարդը շատ խոցելի է պատերազմի սթրեսային գործոնների նկատմամբ: Կարևոր է հստակեցնել պատերազմական գործողությունների մասնակիցների առողջության վրա սթրեսային գործոնների ազդեցության բնույթը, ինչպես նաև մշակել կանխարգելիչ միջոցառումների համալիր, որոնք կմեղմացնեն սթրեսի հետևանքով առաջացած ֆունկցիոնալ փոփոխությունները: Խիստ անհրաժեշտ է խաղաղ պայմաններում մարտական գործողությունների մասնակիցների սոցիալ-հոգեբանական վերականգնման համար համապատասխան միջոցառումների և հանձնարարականների մշակումը, «արտակարգ իրավիճակներում հոգեկան առողջության պահպանման և հոգեսոցիալական աջակցության» աշխատանքային խմբերի ստեղծումը :

Եզրակացություն

1. Արցախյան պատերազմի մասնակիցների խմբերում, ստուգիչ խմբի համեմատությամբ հայտնաբերվել է դեպրեսիայի, ասթենիայի բարձր արտահայտվածություն, տագնապայնության բարձր մակարդակ:

2.Պատերազմի մասնակիցներն ունեն կյանքի որակի էական փոփոխություններ, ֆիզիկական ակտիվության և գործառության նվազում, հոգեկան առողջության խաթարում պայմանավորված հետտրավմատիկ սթրեսով և հոգեհուզական գերլարվածությամբ:

3.Բացահայտվել է, որ պատերազմի մասնակիցներից առավել խոցելի վիճակում են գտնվում տարբեր աստիճանի և բարդության վիրավորում ստացած մասնակիցները:

Գրականություն

4. Караяни А.Г., Волобуева Ю.М., Военная психология как область специального научного знания и практики. "Вестник МГУ", сер.14 "Психология",2007, № 4, с.20-33. ISSN: 2309-9852 (Electronic), 0137-0936 (Print).
5. Караяни А.Г., Караяни Ю.М., Психологические последствия войны и социально-психологическая реадаптация участников боевых действий. Вестник ЮУрГУ. 2014, том 7, № 4, с.59-66. ISSN: 2411-1104 (Electronic), 2071-3053 (Print).
6. Дерманова И.Б., Личностная шкала проявлений тревоги (Тейлор Дж., адаптация Немчина Т.А.). Диагностика эмоционально-нравственного развития. Ред. и сост.

Дерманова И.Б. 2002., с.26–128.
7. Нафтульева А.И., Психологическое тестирование: тесты (Пишо П., пер. с фр. Кружилина И.). Науч. ред. пер. на рус. яз. Нафтульева А.И. СПб. Питер. 2003.
8. Gandek B., Sinclair S.J, Kosinski M, Ware JE Jr., Psychometric evaluation of the SF-36 health survey in Medicare managed care. Health Care Financ Rev. 2004 Summer;25(4):5-25. PMID: 15493441; PMCID: PMC4194895.
9. Giacco D., Matanov A., Priebe S., Symptoms and subjective quality of life in post-traumatic stress disorder: a longitudinal study. PLoS One. 2013 Apr 9;8(4):e60991. doi: 10.1371/journal.pone.0060991. PMID: 23585868; PMCID: PMC3621668.
10. Matanov A., Giacco D., Bogic M., Ajdukovic D., Franciskovic T., Galeazzi G.M., Kucukalic A., Lecic-Tosevski D., Morina N., Popovski M., Schützwohl M., Priebe S., Subjective quality of life in war-affected populations. BMC Public Health. 2013 Jul 2;13:624. doi: 10.1186/1471-2458-13-624. PMID: 23819629; PMCID: PMC3716711.
11. Murthy R.S., Lakshminarayana R., Mental health consequences of war: a brief review of research findings. World Psychiatry. 2006 Feb;5(1):25-30. PMID: 16757987; PMCID: PMC1472271.
12. Pizarro J., Silver R.C., Prause J., Physical and mental health costs of traumatic war experiences among Civil War veterans. Arch Gen Psychiatry. 2006 Feb;63(2):193-200. doi: 10.1001/archpsyc.63.2.193. PMID: 16461863; PMCID: PMC1586122.
13. Rouja Nikolova, PhD, MD, Lyubomir Aleksiev, Mircho Vukov, PhD, Psychophysiological Assessment of Stress and Screening of Health Risk in Peacekeeping Operations, *Military Medicine*, 2007, Volume 172, Issue 1, , Pages 44–48, https://doi.org/10.7205/MILMED.172.1.44
14. World Health Organization. World health report 2001 - Mental health: new understanding, new hope. Geneva: Switzerland; 2022. [Google Scholar]

Նյութը ներկայացվել է 22.05.2023թ.
գրախոսման է ուղարկվել 19.06.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, կ.գ.դ. Հ.Գ.Գալստյանը:

ՀՏԴ 581.9

Բուսաբանություն

Գայանե ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԱրՊՀ կենսաբանության ամբիոնի դոցենտ, կ.գ.թ.
e-mail. gayanegeorgevna1981@mail.ru

Մանուշ ՄԻՐԶՈՅԱՆ
ՇՏՀ հայցորդ

ԹԵՅԱԳՈՐԾԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԹՓԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽՈՒՄ

Վերջին 5 տարիներին Արցախում թեյագործական նշանակության բուսատեսակների նկատմամբ հատուկ հետաքրքրություն առաջացրել է գիտական վերլուծությունների անհրաժեշտություն: Երթուղային, համեմատական, մակրոսկոպիկ /արտաքին զննում/ մեթոդների և որոշիչների զուգակցմամբ կատարված մեկամյա հետազոտությունների արդյունքում իդենտիֆիկացվել են թեյագործական նշանակության շուրջ 11 թփատեսակներ:

Պարզաբանվել է հայտնաբերված տեսակների օգտակար հատկությունները, ցուցումները և ուղենշվել նաև հակացուցումները:

Ֆերմենտացումն իրականացվում է 4 փուլով. առաջին փուլը դա հումքի նախապատրաստումն է, երկրորդ փուլը՝ թառամած տերևների ոլորումն է: Երրորդ փուլը ֆերմենտացման որոշիչ փուլն է, որի տևողությունից, խոնավությունից և ջերմաստիճանից կախված կարելի է ստանալ տարբեր թնդության կանաչ և սև թեյերի տեսականի: Այդ փուլում ոլորված հումքը խտացված տեղավորում են էմալապատ ամաններում և ծածկում թողնելով 8-12 ժամ: ֆերմենտացման ողջ գործընթացն ավարտվում է 4-րդ փուլով, երբ հումքի ֆերմենտացումը կոտրվում է կտրուկ բարձր ջերմաստիճանով: Չորացված

հումքն անմիջապես օգտագործման ենթակա չէ որպես թեյահումք, այն պետք է 2-3 ամիս հնեցվի, որի ժամանակ թեյը ստանում է իր յուրահատուկ հոտը և կայունանում է համը:

Արցախի անգնահատելի կենսաբազմազանության ռեսուրսների արդյունավետ օգտագործմամբ և ֆերմենտացման շնորհիվ հնարավոր է ստանալ տարբեր թնդության կանաչ և սև թեյերի տեսականի, որը կհամարվի շրջափակման պայմաններում այլընտրանք և տնտեսության կրիտիկական վիճակի որոշակի թեթևացում:

Բանալի բառեր՝ *թեյաբույսեր, վարդազգիներ, մասրենի, մոշենի, հաղարճենի, հատապտուղներ, ֆերմենտացում, օգտակար թեյ, կանաչ և սև թեյ, ցուցումներ և հակացուցումներ:*

Г.Маргарян, М.Мирзоян

ИССЛЕДОВАНИЕ НЕКОТОРЫХ ВИДОВ КУСТАРНИКОВ ЧАЯОПРОИЗВОДИТЕЛЬНОГО НАЗНАЧЕНИЯ В АРЦАХЕ

В последние 5 лет особый интерес к чайным заводам в Арцахе вызвал необходимость научного анализа. В результате годичных исследований, проведенных с применением маршрутных, сравнительных, макроскопических/внешних осмотров/ методов и определителей, было выделено около 11 видов чайных кустов.

Уточнены полезные свойства, показания и противопоказания выделенных видов. Ферментация проводится в 4 стадии. первый этап – подготовка сырья, второй этап – скручивание увядших листьев. Третий этап является решающим этапом ферментации, в зависимости от продолжительности, влажности и температуры можно получить сорта зеленого и черного чая разной интенсивности. На этом этапе скрученное сырье концентрируют, помещают в эмалированные емкости и оставляют под крышкой на 8-12 часов. весь процесс брожения заканчивается 4-й стадией, когда брожение сырья прерывается резкой высокой температурой. Высушенное сырье нельзя сразу использовать в качестве чайного сырья, оно должно выдерживаться в течение 2-3 месяцев, за это время чай приобретает свой неповторимый запах и стабилизируется вкус. При эффективном использовании бесценных ресурсов биоразнообразия Арцаха и благодаря ферментации можно получить разнообразные сорта зеленого и черного чая разной крепости, которые будут считаться альтернативой в блокадных условиях и некоторым

облегчением критического состояния экономики.

Ключевые слова: *Чайные травы, розовые, тутовые, гранатовое дерево, кизиловое дерево, липа, акация, ферментация, полезный чай, зеленый и черный чай, показания и противопоказания.*

G.Margaryan, M.Mirzoyan

THE STUDY OF SOME BUSH SPECIES' TEA CULTIVATION SIGNIFICANCE IN ARTSAKH

In the last 5 years, the special interest in tea-making plants in Artsakh has caused the need for scientific analysis. As a result of a one-year research conducted with a combination of route, comparative, macroscopic /external inspection/ methods and determinants, around 11 types of tea-making shrubs were identified. The useful properties, indications and contraindications of the identified species were clarified.

Fermentation is carried out in 4 stages. the first stage is the preparation of raw materials, the second stage is the twisting of withered leaves. The third stage is the decisive stage of fermentation, depending on the duration, humidity and temperature, a variety of green and black teas of different intensity can be obtained. At that stage, the twisted raw materials are concentrated and placed in enameled bowls and left covered for 8-12 hours. the entire fermentation process ends with the 4th stage, when the fermentation of the raw materials is broken by a sharp high temperature. The dried raw material cannot be used immediately as a tea raw material, it should be aged for 2-3 months, during which time the tea gets its unique smell and the taste stabilizes. With the effective use of the invaluable biodiversity resources of Artsakh and thanks to fermentation, it is possible to obtain a variety of green and black teas of different intensity, which will be considered an alternative in the blockade conditions and a certain relief of the critical state of the economy.

Key words: *Tea plants, rosaceae, rosae blackberry, currant, berries, fermentation, useful tea, green and black tea, indications and contraindications.*

Արցախի բնաշխարհին առանձնանում է իր հարուստ կենսաբազմազանությամբ, որոնք կազմում են բարձրակարգ բույսերից՝ խոտաբույսերը, թփերը և ծառատեսակները: Համեմատական կերպով ուսումնասիրելով Արցախի բուսականության և սննդային զամբյուղի մեջ օգտագործվող տեսակային կազմը. հստակ կարելի է փաստել բույսերի օգտակարության անգնահատելի արժեքը: Վերջին 5 տարիներին Արցախում թեյագործական նշանակության բուսատեսակների նկատմամբ հատուկ հետաքրքրությունն անցել է գիտական հարթակ: Առկա ուսումնասիրություններին ի լրումն՝ հետազոտության խնդիր հանդիսացավ Արցախում տարածված թեյագործական նշանակության թփերի տեսակային կազմի բացահայտումը, դրանց օգտակարության պարզաբանումը և կիրառական տեղեկատվության արձանագրումը: Թեյաբույսերի վեգետատիվ և գեներատիվ օրգանների ճիշտ չորացումը, ֆերմենտացումը և գրագետ համադրությունը, հնարավորություն կտա գիտական ուսումնասիրությունից սահուն անցում կատարել կիրառական դաշտ և տնտեսական զարգացման գործում ունենալ որոշակի ներդրում: Նման թեյերի օգտագործումը բարերար ազդեցություն է ունենում օրգանիզմի վրա. մինչդեռ բնակչության զգալի մասը տառապում է այնպիսի խրոնիկ հիվանդություններով ինչպիսիք են բարձր զարկերակային ճնշումը, սրտի անկանոն աշխատանքը, շաքարային դիաբետը, անքննությունը, ցածր դիմադրողականությունը, մարսողական խնդիրները:

Արցախում բնակչությանը հայտնի է մինչև 1 տասնյակ թեյաբույս և հիմնականում խոտաբույսեր, հազվադեպ թուփ կամ ծառ: Մինչդեռ հանդիպող թեյաբույսերի շարքը 5 տասնյակից ավելին է: Չափազանց կարևոր է նաև յուրաքանչյուր թեյաբույսի օգտակար հատկությունների բացահայտումը, դրանց չորացման մեխանիզմների պահպանումը, հումքի ճիշտ համադրումը և հակացուցումների ուղենշումը: Արցախում թեյաբույսերն ուսումնասիրվել են մասնակիորեն և դիտարկվել որպես կենսաբազմազանության մաս, ուստի գիտական հենքն ամրապնդելու համար թեյագործական նշանակության բուսատեսակների տվյալների բազան ունի գիտական ուսումնասիրության կարիք:

Ներկայացվող հետազոտական աշխատանքի նպատակն էր. բացահայտել Արցախում՝ հատկապես Մարտակերտի և Ասկերանի շրջանում տարածված թեյագործական նշանակության թփատեսակների տեսակային կազմը, տալ հայտնաբերված տեսակների կարգաբանությունը, ներկայացնել դրանց ամփոփ նկարագիրը, ուղենշել թեյագործական նշանակության ծառատեսակներից ստացված հումքի ցուցումները և հակացուցումները, տալ տեղեկություններ տեսակային կազմի արդյունավետ օգտագործման, վերականգնման, պահպանման, հավաքի կազմակերպման և ֆերմենտացիայի ընթացքի մասին:

Հետազոտություններն իրականացվել են երթուղային, համեմատական, մակրոսկոպիկ /արտաքին զննում/ մեթոդների և որոշիչների զուգակցմամբ [1;2;6]: Նախապես կազմվել է Արցախում տարածված թեյագործական նշանակության թփատեսակների ցանկ, դրանց ծաղկման շրջանի և հավաքի ժամանակացույց: Ըստ ժամանակացույցի կատարվել է համարժեք ուսումնասիրություններ, բույսերի հավաք և չորացումը: Հումքի հետագա պահպանման ժամանակ կատարվել է ուլտրամանուշակագույն ճառագայթմամբ մանրէազերծում: Հայտնաբերված տեսակների կենսաքիմիական հատկությունների հիմքով կատարվել է թեյաբույսերի ճիշտ համադրություն: Որպես աշխատանքի ամփոփում ստեղծվել է նրանց պահպանման և օգտագործման մասին տվյալների բազա:

Կատարված ուսումնասիրությունների ընթացքում պարզվեց, որ Մարտակերտի և Ասկերանի շրջանների բուսականությունը հարուստ է թեյագործական նշանակության թփատեսակներով, որոնց մեծ մասն ունեն օգտակար և բուժիչ հատկություններ: Հետաքրքրական էր, որ միևնույն բույսը կարող է տասնյակ օգտակար հատկություններ ունենալ, և միաժամանակ նույն բույսի տարբեր օրգաններ կարող են օժտված լինել կեսաբականական կարևոր և բուժիչ հատկություններով: Դա հիմնականում պայմանավորված է բույսի վեգետացիոն փուլից, ըստ որի միևնույն բույսի գեներատիվ և վեգետատիվ օրգանները վեգետացիայի այս կամ այլ փուլերում ունենում են ֆերմենտային տարբեր բաղադրություն [3-5]:

Արցախում իդենտիֆիկացված թեյագործական նշանակության թփատեսակների խմբավորումն ըստ ընտանիքների ներկայացվում է ստորև.

Արցախում նույնականացված թեյագործական նշանակության թփատեսակների խմբավորումն ըստ ընտանիքների

Աղյուսակ1

Հ/հ	Բույսի անվանումը	Ընտանիքի անվանումը
	Հայերեն/լատիներեն	Հայերեն/լատիներեն
1	Ազնվամորի/Rubus	Վարդազգիներ/Rosaceae
2	Ալոճենի/ Crataegus	Վարդազգիներ/Rosaceae
3	Ծորենի/Berberis	Ծորենազգիներ/Berberidaceae
4	Հաղարջենի/Ribes	Վարդազգիներ/ Grossulariaceae
5	Կոկռոշենի/ Grossulariae	Քարբեկազգիներ/Rosaceae
6	Մասրենի/Rosa	Վարդազգիներ/Rosaceae

7	Մոշենի/ Rubus	Վարդազգիներ/Rosaceae
8	Նազվարդ/Jasminum	Ձիթենազգիներ/
9	Վարդենի/Rosa	Վարդազգիներ/Rosaceae
10	Ցաքի/Paliurus	Դժնիկազգիներ/Rhamnaceae
11	Սրնգենի/Philadelphus	Հորտենազգիներ/Hydrangeaceae

Այսպիսով՝ իրականացված հետազոտական աշխատանքների վերլուծության հիման կարելի է փաստել, որ Արցախում տարածված թեյագործական նշանակության թփատեսակները թվով 11-ն են և ավելի: Ըստ աղյուսակում ներկայացված տվյալների 11 թփատեսակներից 6-ը պատկանում է վարդազգիների ընտանիքին և մեկական՝ դժնիկազգիների, ձիթենազգիների, քարբեկազկիների, հորտենազգիների ու ծորենազգիների ընտանիքներին:

Հայտնաբերված տեսակների թվում են ինչպես վայրի, այնպես էլ մշակովի տեսակները: Լայն տարածում է նկատվել թփատեսակներից՝ ալոճենու, մոշենու, մոռենու, մասրենու, հասմիկի, հաղարջենու, կոկոռշենու, ցաքի և վարդենու տեսակները: Նշված թփատեսակներից որոշների պտուղները բնակչության կողմից օգտագործվում են ինչպես թարմ, այնպես էլ վերամշակված ու չորացված վիճակում թե որպես թեյահումք, թե որպես սննդային զամբյուղի բաղադրիչ մաս: Կիրառման ենթակա են նաև բույսերի տերևները, ընձյուղները, բացված և չբացված ծաղիկները, պտուղները, սերմիկները:

Հարկ է նշել, որ մոշենու, մոռենու, հաղարճենու և մասրենու տերևների ֆերմենտացումից կարելի է ստանալ շատ արժեքավոր թեյատեսակներ: Կախված ֆերմենտացիայի աստիճանից նշված բույսերի տերևներից կարելի է ստանալ կանաչ թեյ, թույլ, միջին և ուժեղ թնդության սև թեյեր: Ֆերմենտացման արդյունքում տերևներում կուտակված օգտակար նյութերն ավելի հեշտ են յուրացվում օրգանիզմի կողմից և ունեն լայն կիրառում: Ֆերմենտացման ժամանակ տարբեր թնդության թեյատեսակների ստացումը պայմանավորված է ընտրված ֆերմենտացման ժամանակահատվածի տևողությունից և ջերմաստիճանից:

Ֆերմենտացումն իրականացվում է 4 փուլով. առաջին փուլը դա հումքի նախապատրաստումն է, որը կախված օգտագործվող բույսի տեսակից և ջերմաստիճանից տևում է 4-6 ժամ: Երկրորդ փուլը դա թառամած տերևների ոլորումն է, որը հարկ է իրականացնել ավտոմատացված ռեժիմով: Երրորդ փուլը ֆերմենտացման որոշիչ փուլն է, որի տևողությունից կախված կարելի է ստանալ տարբեր թնդության կանաչ և սև թեյերի տեսականի: Ոլորված հումքը խտացված տեղավորում են էմալապատ ամաններում և ծածկում թողնելով 8-12 ժամ: Ֆերմենտացման ողջ գործընթացն ավարտվում է 4-րդ փուլով, երբ հումքի

ֆերմենտացումը կոտրվում է կտրուկ բարձր ջերմաստիճանով: Վերջին փուլը պարտադիր պետք է իրականացնել էլեկտրական չորանոցում, որտեղ ջերմաստիճանը կայուն է և համաչափ տարածվող: Չորացված հումքն անմիջապես օգտագործման ենթակա չէ որպես թեյահումք, այն պետք է 2-3 ամիս հնեցվի, որի ժամանակ թեյը ստանում է իր յուրահատուկ հոտը և կայունանում է համը [7,9]:

Հաստատապես կարելի է փաստել, որ Արցախի հարուստ բնաշխարհի ճանաչումը հնարավորություն կտա ռեսուրսների արդյունավետ և նպատակային օգտագործման, ինչպես նաև ճգնաժամային խնդիրների կարգավորման[8]:

Գրականություն

1.Թորոսյան Ա.Ա, Հայաստանի դեղաբույսերը, Երևան, 1983, 294 էջ:

2.Հարությունյան Լ.Վ., Հարությունյան Ս.Լ., Հայաստանի դենդրոֆլորան, Երևան, 1985, 426 էջ:

3.Абрикосов Х. Н., Вишня // Словарь-справочник пчеловода / Москва,-1955. -154 с

4.Буданцев А.Л., Лесиовская Е.Е., Дикорастущие полезные растения, России, 2001, – 663 с.

5.Дудукал Г.Д., Руденко И.С., Кизил, Москва, -1990,- 48 с.

6.Тахтаджян А.Л., Жизнь растений, Москва, -1982, Т. 5(1), 425 с.

7.Попов В.И., Шапиро Д. К., Данусевич И. К., Лекарственные растения, Минск,-1990,- 304 с.

8.Махлаюк В.П., Лекарственные растения в народной медицине, Москва,-1992, - 544 с.

9.Попов В.И., Шапиро Д.К., Данусевич И.К., Лекарственные растения, Минск, -1990, – 304 с.

Նյութը ներկայացվել է 22.05.2023,
գրախոսման է ուղարկվել 19.06.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, կ.գ.դ. Հ.Գ.Գալստյանը:

ՀՏԴ 542.9

Քիմիա

Սիլվա ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
ՇՏՀ ավագ դասախոս

Վալոդյա ՄԻՐԶՈՅԱՆ
ԱրՊՀ կենսաբանության և քիմիքյի ամբիոնի պրոֆեսոր ք.գ.թ.

Ռուզաննա ՀԱԿՈԲՅԱՆ
ՇՏՀ դոցենտ, ք.գ.թ.

Լալիկ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՇՏՀ ուսանողուհի
E-mail. varustamyan@rambler.ru

ԿՈԼՈՒԴ ՄԱՍՆԻԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԿՈԱԳՈՒԼՄԱՆ ՈՐՈՇԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Հաշվի առնելով կենդանի օրգանիզմներում ինչպես նաև կենցաղային, արդյունաբերական, գյուղատնտեսական և դեղագործական ոլորտներում կոլոիդ համակարգերի տարածվածությունը, հոդվածում դիտարկվում է կոլոիդ համակարգերի հատկությունները և դրանց հետ կապված խնդիրների պարզաբանումը: Տրված են որոշ արդիական խնդիրների լուծման օրինակներ՝ կոլոիդ մասնիկի կառուցվածքի պարզաբանման, ադսորբցիոն և դիֆուզիոն շերտերի ընտրության, գրանուլի լիցքի որոշման վերաբերյալ: Լուծման մեջ մեկնաբանված է միցելի կառուցվածքի որոշումը, կորիզի բաղադրությունը, պոտենցյալ առաջացնող իոնների որոշումը , որոնք ընտրողական ադսորբցիայի շնորհիվ ադսորբվում են նստվածքի մասնիկների մակերևույթին՝ առաջացնելով կրկնակի էլեկտրական շերտի (ԿԷՇ) ներքին ոլորտը : Ցույց է տրված, թե հաստատուն հոսանքի ազդեցության տակ

լուծույթում գոյություն ունեցող տվյալ լիցքով գրանուլները դեպի որ էլեկտրոդը կշարժվեն (անոդ՝դրական բևեռ, կատոդ՝ բացասական): Շուլցեի-Գարդիի կանոնի կիրառմամբ հիմնավորված է տարբեր լիցքերով կոագուլյատորներից ամենաէֆեկտիվի ընտրության հարցը : Ներկայացված է կոագուլյացիայի շեմի հաշվման մեթոդիկան՝ տվյալ կոնցենտրացիայով և ծավալով էլեկտրոլիտի համար:

Բանալի բառեր՝ *դիսպերս համակարգ, դիֆուզիա, ադսորբցիոն շերտ, լիոֆոբ համակարգ, գրանուլ, միցել, կոագուլման շեմ,կայունացուցիչ:*

С. Арзуманян, В. Мирзоян, Р. Акопян, Л.Хачатрян

ВЫЯСНЕНИЕ НЕКОТОРЫХ ПРОБЛЕМ СТРУКТУРЫ КОЛЛОИДНЫХ ЧАСТИЦ И КОАГУЛЯЦИИ

Учитывая распространенность коллоидных систем в живых организмах, а также в бытовой, промышленной, сельскохозяйственной и фармацевтической сферах, в статье рассматриваются свойства коллоидных систем и выяснение связанных с ними проблем. Приведены примеры решения некоторых современных задач: выяснение структуры коллоидных частиц, подбор адсорбционных и диффузионных слоев, определение заряда гранул. В растворе определение структуры мицеллы, состава ядра, определение потенциально генерирующих ионов, которые адсорбируются на поверхности частиц осадка за счет избирательной адсорбции, генерирующей внутреннюю сферу двойного электрического поля. слой (DEL). Показано, к какому электроду будут двигаться гранулы с данным зарядом, находящиеся в растворе, под действием постоянного тока (анод: положительный полюс, катод: отрицательный). Выбор наиболее эффективных коагуляторов с разным зарядом обосновывается применением правила Шульцея-Гарди. Представлена методика расчета порога коагуляции для электролита заданной концентрации и объема.

Ключевые слова: *дисперсная система, диффузия, адсорбционный слой, лиофобная система, гранула, мицел, порог коагуляции, стабилизатор.*

S.Arzoumanyan. V.Mirzoyan. R.Hakobyan, L.Khachatryan

CLARIFICATION OF CERTAIN PROBL EMS OF COLLOIDAL PARTICLE STRUCTURE AND COAGULATION

Taking into account the prevalence of colloidal systems in living organisms as well as in domestic, industrial, agricultural and

pharmaceutical fields, this article considers the properties of colloidal systems and clarifies the problems associated with them.

Examples of solutions are given for some current problems: elucidation of the colloidal particle structure, selection of adsorption and diffusion layers, determination of granule charge.

In the solution, the determination of the structure of the micelle, the composition of the core, the determination of the potentially generating ions, which are adsorbed on the surface of the sediment particles due to selective adsorption, generating the inner sphere of the double electric layer (DEL) are interpreted.

It is shown that with a given charge existing in the solution to which electrode the granules will move (anode: positive pole, cathode: negative)under the influence of direct current.

The selection of the coagulator is justified using the Schulzei-Gardi rule. As well, the methodology for calculating the threshold of the coagulator for an electrolyte with a given concentration is presented.

Key words: *disperse system, diffusion, adsorption layer, lyophobic system, granule,micelles, coagulation threshold, stabilizer.*

Կոլոիդներն ունեն կենցաղային, արդյունաբերական, գյուղատնտեսական և դեղագործական մեծ կիրառություն: Օրգանիզմում կոլոիդային վիճակում են գտնվում ճարպերը, սպիտակուցները, բարդ ածխաջրերը, ֆերմենտները, արյունը, ոսկորը, մաշկը, մազերը և այլն: Բազմաթիվ կրիտիկական վիճակների (սուր արյունահոսություն, սեպսիս, սեպտիկ շոկ, այրվածքներ, պերիտոնիտ, պանկրեատիտ, վնասվածքներ և այլն) բուժման հիմքում ընկած է կոլոիդ լուծույթների ինֆուզիան: Մարդու կոլոիդ-քիմիական ֆիզիոլոգիայի տեսանկյունից նրա մարմինը կոլոիդային համակարգերի բարդ համալիր է, մշտական դինամիկ փոխազդեցությամբ [1]: Բնության մեջ լայնորեն տարածված են կոլոիդային համակարգերը: Միջաստղային նյութը բաղկացած է գազերից և փոշուց, որոնց մասնիկները կոլոիդային չափեր ունեն: Համաձայն մի շարք տիեզերական պատկերացումների արեգակնային համակարգը ձևավորվել է գազային-փոշու նյութից: Այս ամենը ցույց է տալիս կոլոիդ համակարգերի կառուցվածքի ու հատկությունների ուսումնասիրման արդիականությունը:

Կոլոիդը համակարգ է, որտեղ ցրված փուլի դիսկրետ մասնիկները, կաթիլները բաշխվում են մեկ այլ, սովորաբար շարունակական փուլում, որը տարբերվում է առաջինից բաղադրությամբ կամ ագրեգատային վիճակով և կոչվում է դիսպերսիոն միջավայր: Կոլոիդային մասնիկների չափերը տատանվում են 0,001-ից մինչև 0,1 մկմ: Կոլոիդային մասնիկը, որը շրջապատված է էլեկտրոլիտային հակաիոններով կոչվում է միցել: Միցելն

ամբողջությամբ էլեկտրականորեն չեզոք է, լիցքավորված է միայն կոլոիդային մասնիկը, նրա լիցքը որոշում են պոտենցիալ առաջացնող իոնները, լիցքի արժեքը որոշվում է ę էլեկտրակինետիկ պոտենցիալով[2]:

Ըստ դիսպերս ֆազի ու միջավայրի միջև փոխազդեցության ուժերի տարբերում են երկու տեսակի դիսպերս համակարգեր՝ լիոֆոբ և լիոֆիլ: Այն համակարգերը, որոնցում դիսպերս ֆազի և դիսպերս միջավայրի մասնիկների միջև փոխազդեցությունները բացակայում են (օրինակ արծաթի հալոգենիդների ջրային զոլը), կոչվում են լիոֆոբ համակարգեր (ջրային միջավայրի դեպքում՝ հիդրոֆոբ): Եթե դիսպերս համակարգում ֆազերի միջև այդ փոխազդեցությունները շատ ուժեղ են (օրինակ բարձրամոլեկուլային միացությունների (ԲՄՄ) և սպիտակուցների լուծույթներում), ապա այդպիսի կոլոիդ համակարգերը կոչվում են լիոֆիլ (ջրային դիսպերս համակարգում՝ հիդրոֆիլ): Դիսպերսիան լիոֆիլ կոլոիդային համակարգերի ձևավորմամբ տեղի է ունենում ինքնաբուխ ջերմային շարժման պատճառով[3]:

Համաձայն լիոֆոբ զոլերի կառուցվածքի միցելային տեսության, յուրաքնչյուր լիոֆոբ զոլ կազմված է երկու մասից՝ միցելից և միջմիցելային հեղուկից: Միցելներն կազմում են զոլի դիսպերս ֆազը, միջմիցելային հեղուկը՝ դիսպերս միջավայրը, որի կազմի մեջ են մտնում լուծիչը և նրա մեջ լուծված էլեկտրոլիտները ու ոչ էլեկտրոլիտները, այդ թվում նաև կայունացուցիչները:

Միցելն ունի ավելի բարդ կառուցվածք, քան մոլեկուլը: Միցելը բաղկացած է երկու մասից՝ միջուկից և իոնոգեն մասից, որն իր հերթին կազմված է երկու իոնական՝ ադսորբցիոն և դիֆուզիոն շերտերից[4]: Միջուկը կազմում է միցելի հիմնական զանգվածը և կազմված է ատոմներից կամ մոլեկուլներից, որոնց թիվը փոփոխական է ու կարող է տատանվել հարյուրից մինչև միլիոններ: Կոլոիդ մասնիկը լիցք է ձեռք բերում այն պատճառով, որ նա ադսորբում է գերազանցապես կամ ընտրողաբար մեկ կամ մյուս տեսակի իոններին՝ կախված կոլոիդ նյութի բնույթից և փորձի պայմաններից: Կոմպլեքսը, որը բաղկացած է կոլոիդ նյութից, նրա վրա ադսորբված իոններից և վերջիններիս հետ կապված հակաիոնների մի մասից, լուծույթում կազմում է մի ամբողջություն, որին անվանում են հատիկ կամ գրանուլ. այն հակաիոնների հետ միասին առաջացնում է էլեկտրաչեզոք միցելը:

Ըստ Ֆայանսի կանոնի՝ միջուկի կողմից գերազանցապես ադսորբվում են էլեկտրոլիտի այն իոնները, որոնք գտնվում են միջուկի կազմում կամ իրենց բնույթով նման են միջուկի իոններին: Դրանք հենց այն իոններն են, որոնք միջուկի մակերեսին ստեղծում են լիցքավորված շերտ և առաջացնում պոտենցիալների տարբերություն, դրա համար էլ նրանց անվանում են պոտենցիալ կամ լիցք առաջացնող իոններ:

Իրական լուծույթներից կոլոիդ համակարգերը տարբերվում են հիմնականում հետևյալ հատկություններով՝

1.Լույսը ցրելու ընդունակությամբ,

2.Դիսպերս միջավայրում դիսպերս ֆազի մասնիկների դանդաղ դիֆուզիայով,

3.Մասնիկների չափերով

4.Դիալիզի ընդունակությամբ։

Համարյա միշտ զոլեր ստանալիս նրանք կեղտոտվում են տարբեր խառնուրդներով, էլեկտրոլիտներով։ Այդպիսի նյութերի, հատկապես ավելցուկային քանակներով էլեկտրոլիտների ներկայությունը խիստ կերպով իջեցնում է զոլերի կայունությունը։ Այդ հանգամանքն էլ առաջ է բերում կոլոիդների մաքրման անհրաժեշտություն:

Քանի որ կոլոիդ համակարգերը, ըստ մասնիկների չափի, միջանկյալ դիրք են զբաղեցնում կոպիտ ցրված համակարգերի և իրական լուծույթների միջև, դրանց պատրաստումը կարելի է բաժանել երկու եղանակի՝ դիսպերսման և կոնդեսացման(խտացման)։

Խտացման մեթոդները հիմնված են իրական լուծույթի մոլեկուլների խոշորացման հիման վրա ,կոլոիդային մասնիկների առաջացմամբ, ինչը կարելի է իրականացնել ինչպես ֆիզիկական այնպես էլ քիմիական եղանակներով։

Ֆիզիկական եղանակը լուծիչների փոխարինման եղանակ է, իսկ քիմիական եղանակը ՝ քիմիական ռեակցիաներով կոլոիդային լուծույթների ստացումը քիչ լուծվող միացությունների ձևավորմամբ։

Եթե դիսպերս միջավայրը հեղուկ է, իսկ դիսպերս ֆազը պինդ (Պ/Հ), ապա համակարգը կոչվում է սուսպենզիա կամ կոլոիդ լուծույթ (կախված մասնիկների չափերի միջակայքից)։ Եթե դիսպերս միջավայրն ու դիսպերս ֆազը հեղուկ են, ապա համակարգը (Հ/Հ) կոչվում է էմուլսիա, իսկ եթե դիսպերս միջավայրը գազ է (Հ/Գ և Պ/Գ) ,ապա այն կոչվում է աէրոզոլ։

Համարյա միշտ զոլեր ստանալիս նրանք կեղտոտվում են տարբեր խառնուրդներով, էլեկտրոլիտներով։ Այդպիսի նյութերի, հատկապես ավելցուկային քանակներով էլեկտրոլիտների ներկայությունը խիստ կերպով իջեցնում է զոլերի կայունությունը։ Այդ հանգամանքն էլ առաջ է բերում կոլոիդների մաքրման անհրաժեշտություն:

Կոլոիդ համակարգերի ստացումից հետո խիստ կարևոր է պահպանել նրա կայունությունը: Կոլոիդ համակարգերի կայունության վերաբերյալ առաջարկվել է երկու՝ կինետիկական և ագրեգատային կայունություն հասկացությունները։

Կինետիկական կայունությունը՝ ձգողական գրավիտացիոն ուժերի ազդեցության նկատմամբ դիսպերս համակարգերի կայունությունն է։ Դա պայմանավորված է բրոունյան շարժման առկայությամբ, որի շնորհիվ դիսպերսված մասնիկները կարողանում են հակազդել ծանրության ուժին անջատվում[5]:

Ագրեգատային կայունությունը տվյալ համակարգի ընդունակությունն է այս կամ այն չափով պահպանելու իր դիսպերսման աստիճանը: Կայունության այս տեսակը բացատրվում է մի կողմից կոլոիդ մասնիկների միատեսակ լիցքավորմամբ, որը խանգարում է նրանց միաձուլմանը, իսկ մյուս կողմից՝ կոլոիդ մասնիկների շուրջը լուծիչի մոլեկուլներից սոլվատային թաղանթների առաջացումով:

Կոլոիդային համակարգի դիսպերս ֆազի մանրացման աստիճանի փոքրացումը, որը տեղի է ունենում առաջնային միցելների իրար կպչելու հետևանքով, կոչվում է կոագուլում (մակարդում): Կոագուլումը միշտ ուղեկցվում է դիսպերս ֆազի տեսակարար մակերեսի փոքրացմամբ: Եթե միանում են հեղուկի մասնիկները, որը հատուկ է էմուլսիաներին, ապա երևույթը կոչվում է կոալեսցենցում:

Կոագուլումը կարող է տեղի ունենալ դիսպերս համակարգի վրա տարբեր գործոնների ազդեցությամբ: Այդպիսի գործոններից է, օրինակ, բուռն խառնումը կամ թափահարումը, տաքացումը կամ սառեցումը, լույսի ճառագայթների կամ էլեկտրական հոսանքի ազդեցությունը և այլն: Համակարգի վրա նման ներգործությունների հետևանքով դիսպերս մասնիկների և դիսպերս միջավայրի միջև կապի էներգիան նվազում է: Այսպես, էլեկտրոլիտի ավելացման հետևանքով կոլոիդ մասնիկում դիֆուզիոն շերտը սեղմվում է, որի արդյունքում էլեկտրոկինետիկական պոտենցիալը նվազում է: Դա հանգեցնում է կոլոիդ մասնիկների միջև էլեկտրաստատիկ վանման ուժերի նվազեցման և, որպես հետևանք, դրանց միավորման հավանականության խիստ մեծացման (դանդաղ կոագուլում): Էլեկտրոլիտի այն նվազագույն կոնցենտրացիան, որի դեպքում վրա է հասնում ակնհայտ կոագուլումը, կոչվում է կոագուլման շեմ ($C_{կոագ.}$): Այն կախված է ջերմաստիճանից, ավելացվող էլեկտրոլիտի բնույթից, ավելացվող իոնի լիցքի նշանից (ըստ Գարդիի կանոնի՝ ներգործում է կոլոիդ մասնիկի լիցքին հակառակ նշանով իոնը) և այդ իոնի լիցքի մեծությունից (ըստ Շուլցեի): Համաձայն Շուլցեի-Գարդիի կանոնի, եռալիցք, երկլիցք և միալիցք իոնների համար ակնհայտ կոագուլումը հարուցող կոնցենտրացիաներն իրար հարաբերում են ինչպես 1:25:500: Կոագուլման շեմը հաշվարկվում են հետևյալ հավասարումով

$$C_{կոագ.}=C_{էլ.լիտ.}V_{էլ.լիտ.}/V_{զոլ} \quad (կմոլ/մ^3)$$

Կոագուլման շեմի հակադարձ մեծությունը կոչվում է կոագուլման ուժ (γ)

$$\gamma=1/C_{կոագ.}$$

Տեսական հետազոտությունների հիման վրա պարզվել է, որ կոագուլման ուժը հակադարձ համեմատական է կոագուլում հարուցող իոնի լիցքի 6-րդ աստիճանին՝

$$\gamma=1/z^6$$

Արագ կոագուլման տեսությունը մշակել է Սմոլուխովսկին, որի հիման վրա ստացել է կոագուլման արագության հաստատունի (K) հաշվարկման հետևյալ բանաձևը՝

$$K=\frac{1}{\pi\left[\frac{1}{n}+\frac{1}{n_0}\right]}$$

որտեղ n_0-ն և n-ը համապատասխանաբար, նախքան կոագուլումը և τ ժամանակ հետո, համակարգի միավոր ծավալում առկա մասնիկների թվերն են: Կոագուլման արագության հաստատունի կախվածությունը դիֆուզիայի գործակցից (D) և մասնիկի շառավիղից (r) արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$K=8\pi Dr$$

Ըստ Ստոքսի-Այնշտայնի բանաձևի գնդաձև մասնիկների դիֆուզիայի գործակիցը դրանց չափերց կախված է ըստ հետևյալ բանաձևի ՝

$$D=k\tau/6\pi\eta r$$

Ելնելով այս բանաձևերից կոագուլման հաստատունի համար ստացվում է հետևյալ արտահայտությունը՝

$$K=4RT / 3\eta N_A \quad (մ^3/վ),$$

Որտեղ η-ն միջավայրի մածուցիկությունն է, N_A-ն՝ Ավոգադրոյի թիվը: Սմոլուխովսկին մտցրել է նաև կիսակոագուլման ժամանակ հասկացությունը և ստացել հետևյալ բանաձևը՝

$$n=n_0/(1+\tau/\theta)$$

Որտեղ θ-ն կիսակոագուլման ժամանակն է, այսինքն այն ժամանակը, որի ընթացքում համակարգում մնում է ելային մասնիկների կեսը, τ-ն՝ կոագուլման սկզբից անցած ժամանակը:Կոագուլման հակառակ երևույթը, այսինքն մաքուր դիսպերս միջավայրի կամ լուծված նյութերի ազդեցությամբ մասնիկների ագրեգատների քայքայումը կոչվում է պեպտիզացում [6]:

Խնդիր1

Գրել ա)$AlCl_3$-ով կայունացված $Al(OH)_3$-ի, բ) H_2SiO_3-ով կայունացված SiO_2-ի զոլերի բանաձևերը, գրանուլի լիցքը: Այդ զոլերից ո՞ր մեկի համար է լավ կոագուլյատոր $FeCl_3$-ը և Na_2SO_4-ը:

Լուծում

$AlCl_3$-ով կայունացնելու դեպքում պոտենցյալ առաջացնող իոնները կլինեն Al^{3+} իոնները,որոնք ընտրողական ադսորբցիայի շնորհիվ ադսորբվում են $Al(OH)_3$-ի նստվածքի մասնիկների մակերևույթին՝ առաջացնելով կրկնակի էլեկտրական շերտի (ԿԷՇ) ներքին ոլորտը: Էլեկտրաստատիկ ուժերով այդ իոնները դեպի իրենց են ձգում լուծույթում առկա հակաիոններին ՝ Cl^-, առաջացնելով ԿԷՇ-ի արտաքին թաղանթը: Հակաիոնների մի մասը մնում է դիսպերս ֆազի մակերևույթին գտնվող լուծույթում՝ առաջացնելով ադսորբցիոն շերտ, իսկ մյուս մասը դիֆուզիայի շնորհիվ բաշխվում է լուծույթում՝ առաջացնելով դիֆուզյոն շերտ: Միցելը կունենա հետևյալ կառուցվածքը՝

$$[mAl(OH)_3\ nAl^{3+}\ 3(n-x)Cl^-]^{3x+} \cdot 3xCl^-$$

Կոլոիդ մասնիկի լիցքը դրական է:

H_2SiO_3-ով SiO_2-ի կայունացման դեպքում միջուկի շուրջը պոտենցյալ առաջացնող իոնները կլինեն SiO_3^{2-} իոնները, իսկ հակաիոնները H^+ պրոտոնները: Միցելը կունենա հետևյալ կառուցվածքը՝

$$[mSiO_2\ nSiO_3^{2-}\ 2(n-x)\ H^+]^{2x-} \bullet 2xH^+$$

Կոլոիդ մասնիկը ունի բացասական լիցք:

$FeCl_3$-ը դիսոցվում է Fe^{3+} և Cl^- իոնների, իսկ Na_2SO_4-ը՝ Na^+ և SO_4^{2-} իոնների: Քանի որ, ըստ Շուլցեի-Գարդիի կանոնի եռալիցք, երկլիցք և միալիցք իոնների համար ակնհայտ կոագուլումը հարուցող կոնցենտրացիաներն իրար հարաբերական են ինչպես1:25:500, ապա $FeCl_3$-ը լավ կոագուլյատոր է SiO_2 - ի զոլի համար, իսկ և Na_2SO_4-ը՝ $Al(OH)_3$-ի համար:

Խնդիր 2.

AgI-ի զոլը ստացել են խառնելով 8մլ, 0,05 նորմալանոց KI-ի և 10մլ, 0,02 նորմալանոց $AgNO_3$-ի լուծույթները: Գրել առաջացող միցելի բանաձևը և բացատրել, թե էլեկտրական դաշտում դեպի ո՞ր էլեկտրոդը կտեղաշարժվի առաջացող գրանուլը:

Լուծում

$KI + AgNO_3 \rightarrow KNO_3 + AgI\downarrow$

Որոշել, թե փոխազդող նյութերից որն է ավելցուկով:

$\sqrt{}(KI) = 0,008 \bullet 0,05 = 0,0004$ (մոլ)

$\sqrt{}(Ag(NO)_3) = 0,02\ 0,01 = 0,0002$ (մոլ):

Ավելցուկով վերցված է KI-ը, ուրեմն լուծույթում կլինեն K^+ և I^- իոններ: Պոտենցյալ առաջացնող իոնները կլինեն I^- իոնները, իսկ հակաիոնները K^+-ը: Զոլը կունենա հետևյալ բանաձևը՝

$$[\ mAgI \bullet nI^-\ (n-x)\ K^+\ ]^{x-} \bullet xK^+$$

Քանի որ, արտաքին հաստատուն հոսանքի ազդեցության դեպքում գրանուլը շարժվում է դեպի իր լիցքի հակառակ նշանը ունեցող բևեռը,իսկ մեր գրանուլը ունի բացասական լիցք, ապա էլեկտրական դաշտի ազդեցության տակ կտեղաշարժվի դեպի անոդը՝ դրական բևեռը:

Խնդիր3

Երեք փորձանոթների մեջ լցրել են 0,1 դմ^3 երկաթի հիդրօքսիդի զոլ: Զոլի կոագուլյացիա առաջացնելու համար անհրաժեշտ է առաջին կոլբին ավելացնել 0,01 դմ^3, 1 նորմալանոց NH_4Cl, երկրորդին՝ 0,063դմ^3, 0,01 նորմալանոց Na_2SO_4, երրորդին՝ 0,037դմ^3, 0,001 նորմալանոց Na_3PO_4: Հաշվել յուրաքանչյուր էլեկտրոլիտի կոագուլյացիայի շեմը:

Լուծում

Որոշել նշված էլեկտրոլիտների այն նվազագույն կոնցենտրացիան , որի դեպքում վրա է հասնում ակնհայտ կոագուլումը, ըստ հետևյալ բանաձևի

$C_x=(C_э \cdot V_{эл} \cdot 1000)/(V_{эл}+V_{зол})$

I 0,01 դմ³ - 1Ն - NH_4Cl

$C_{NH_4Cl}=\frac{0,01 \cdot 1 \cdot 1000}{0,01+0,1}$ =90,9 մմոլ/ դմ³

II 0,063 դմ³ – 0,01Ն - Na_2SO_4

$C_{Na_2SO_4}=\frac{0,01 \cdot 0,063 \cdot 1000}{0,063+0,1}$ =3,8 մմոլ/ դմ³

III 0,037 դմ³ – 0,001Ն - Na_3PO_4

$C_{Na_3PO_4}=\frac{0,001 \cdot 0,037 \cdot 1000}{0,037+0,1}$ =0,27 մմոլ/ դմ³

Պատասխան՝ 1) 90,9 մմոլ/ դմ³ 2) 3,8 մմոլ/ դմ³ 3) 0,27 մմոլ/ դմ³:

Գրականություն

1. https://scienceforum.ru/
2. Беляев А. П., Физическая и коллоидная химия, Москва: ГЭОТАР-Медиа, 2010, 704с
3. Գամենա Օ. Ս., Ֆիզիկական և կոլոիդային քիմիա, Երևան 1981, 417 էջ:
4. Гаврилова Н. Н., Жилина О. В., Киенская К. И., Назарова В. В., Яровая О. В., Сборник задач по коллоидной химии, Москва 2009, 132 с.
5. Գրիգորյան Ս.Կ., Ֆիզիկական և կոլոիդային քիմիա, Երևան,ԵՊՀ հրատարակություն, 1983, 270 էջ:
6. Քամալյան Օ.Ա.,Հայրապետյան Մ. Գ. Ֆիզիկական և կոլոիդների քիմիա, Երևան, ՀԱԱՀ հրատարակություն, 2014, 104 էջ:

Նյութը ներկայացվել է 22.05.2023,
գրախոսման է ուղարկվել 29.05.2023,
տպագրության ընդունվել 22.06.2023:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ կենսաբանության և քիմիքյի ամբիոնը:

Արցախի պետական համալսարանի
ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

УЧЕНЫЕ ЗАПИСКИ
Арцахского государственного университета

Artsakh State University
PROCEEDINGS

1/2023

Ð³ÝÓÝí³Í¿ ï å³·ñáõÃÛ³Ý` 11.04. 2023 Ã.:
ê ï áñ³·ñí³Í¿ ï å³·ñáõÃÛ³Ý` 22.06.2023 Ã.:
Ì³í³ÉÁ` 17.6 ï å. Ù³ÙáõÉ: î å³ù³Ý³Ï` 100:

Հիմնադիր՝ ²ñó³ËÇ å»ï³Ï³ÝÑ³Ù³Éë³ñ³Ý, ê ï »÷³Ý³Ï»ñ ï ,
Ø. ¶áßÇ ÷. 5, Ñ»é. (0749) 4-04-91, ý³ùë (0479) 7-12-14
E-mail: rector@asu.am
ԱրՊՀ հրատարակչություն, e-mail: printery.asu@mail.ru,
կայք: www.asu.am– Գիտական հրապարակումներ–
Գիտական տեղեկագիր
Учредитель – Арцахский государственный университет
г.Степанакерт, ул. Мхитара Гоша 5,
тел. (0749) 4-04-91, факс (0479) 7-12-14
Издательство АрГУ, e-mail: printery.asu@mail.ru,
сайт: www.asu.am– Научные публикации – Ученые записки.

Founder - Artsakh State University, 5 Mkhitar Gosh st., Stepanakert
Tel.: (0749) 4-04-91, Fax: (0479) 7-12-14
ASU Publishing house, e-mail: printery.asu@mail.ru,
website: www.asu.am– Scientific publications – Proceedings.